Սարմեն

# Յերգարան

891.99
Ս-26

891.99
Ս-26

NOV 2011



Սարմեն

ՍԱՐՄԵՆ

# ՅԵՐԳԱՐԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1940 ՅԵՐԵՎԱՆ

29 JUL 2013

53691

2169
40

САРМЕН
Страна песен
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

# ԽԱՌՆ ՅԵՐԳԵՐ

# ՆԱԽԵՐԳԱՆՔ

Գարնան անձրևի մարգարտահատիկ ջրերը վարար՝
Հախուռն համերգով թափվեցին գետին,
Որպես հանճարեղ վարպետի կերտած հաղթական կամար՝
Յերկինքը կապեց ծիածան-գոտին.
Յես իմ յերգերի, հույզի բերքերի հրերով անմար՝
Կանգնել եմ ահա բլրի գագաթին:

Շուրջըս բազմերանգ ծաղկունքի ծովն է ալիքվում հովից,
Վճիտ ջրերն են խոսում մեղմաբար,
Անշեջ կրակով, այրող դյութանքով կանչում են հեռվից
Յերգի տիտաններ, լեռներ ձյունափառ.
Յեվ գոտեպնդված, յերկրից ուժ առած՝ ընկնում եմ նորից
Մի հերոսական, դժվար ճանապարհ...

———

## ՅԵՐԳ

Մարդկային մտքի մեծ գանձարանի
Մարգարիտն ես դու, ով սրտաբուխ յերգ·
Անապատներին լուռ ու ծարավի,
Ովկիանին անհուն, հողուն անեզերք,
Սիրահարներին մերժված, մտախոհ,
Հուսահատներին սրտով թեվաբեկ,
Ձորերին ամա ու անդնդախոր,
Շղթայվածներին, ստրուկներին մերկ,
Կյանքին ցրտաշունչ ու անտանելի,
Գիշերին անշող, բանտերին անլույս,
Ահավոր, անանց, մութ անտառներին,
Դու հուր ես տալիս, ցնծություն ու հույս:

Յերգելով են միշտ գրոհի յելել
Մութ միջնադարի դղյակների դեմ,
Ու յերգելով են Բաստիլը քանդել,
Հարթել թռիչքի նոր ճանապարհներ·
Յերգելով են իմ մեծ հայրենիքում
Ընդմիշտ խորտակել բռնության շղթան
Յեվ հիմա ցնծուն յերգեր են յերգում
Նոր կյանքը կերտող հերոսներ տիտան,
Մանուկներ խաժուժ ու կենսաթրթիռ,
Աղջիկներ քնքույշ ու արեվաշատ,
Դաշտեր անպարփակ, լեռներ բարձրադիր,
Յե՛վ անտառ, յե՛վ ծով, յե՛վ արտեր, յե՛վ դաշտ:



Դու աշխատանքի անդրանիկ զավակ,
Շնչուն եյակի առաջին կերտվածք,
Դու հավերժական բազմալեզու զանգ,
Սոխակների սիրտ, գարնան արեվծագ·
Ո՜, քանի դարեր անցել են անհետ,
Քանի՜ սերունդներ իրար հաջորդել,
Քանի՜ թագակիր ու քանի ասպետ
Կորել են անհետ ու կորչում են դեռ,
Բայց դու ապրում ես, հնչում ես անմեռ,
Մերթ վորպես սիրերգ, մերթ մահվան քայլերգ·
Քանի կրծքի տակ խփում են սրտեր,
Դու, սրտաբու՛խ յերգ, չես մեռնի յերբեք:

---

## ՅԵՐԳ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ո՛վ ազատություն, դու մեծ բնության սքանչելի պսակ,
Դարեր շարունակ քեզ բանդել էին խավար զնդանում,
Մեզ բաժին թողել հին, խարխուլ հյուղեր, անհատնում զրկանք
Ու սիրտը հյուծող, մեր հոգին խոցող ստրկության թույն:

Ո՛, քեզ զնդանից հանելու համար քանի՛ հանճարներ,
Քանի՛ խիզախներ, քանի՛ հերոսներ մտել են զնդան,
Քանի՛ ժողովուրդ, ովկիանի պես հորդ կռվի յե յելել
Մարտնչել, ընկել հանուն չղթայված մեծ ազատության...

Թեյեվ հիմա յել մեր մոլորակի մեծագույն մասում
Դեռ չղթայված են քո թևերը պիրկ, ով Պրոմեթեյ,
Բայց հավատում եմ, վոր մի օր ինչպես ծովացած ցասում
Աշխարհը կընդվզի, չղթան կփշրի ու քեզ կազատե:

Միայն մեր անծայր, հավերժապայծառ վառ հայրենիքում
Մեր բանվորական բանակն էր, վոր քեզ զնդանից հանեց,
Ցեվ հիմա մենք քեզ յե՛վ վայելում ենք, յե՛վ սրտանց յերգում,
Ու մեզ գագաթից գագաթ է տանում ղեկավարը մեծ:

Բնության տված ամենաչքնաղ բարիքը դո՛ւ ես,
Դու թև՛ տվեցիր իմ յերկրին անծիր ու յերիտասարդ,
Ո՛, ել վոչ մի ույժ, մութ ու չարագուժ, չի բաժանի մեզ,
Ել մեր արյունը չի ծծի վոչ մի արյունարբու սարդ:



Ծովում գոհարներ, կապույտ յերկնքում ինչքան աստղեր կան
Չարժեն քո տված մի ակնթարթի հաճույքը անգին.
Քեզնից սոսկում են յե՛վ դահիճները, յե՛վ ահեղ արքան,
Չկա ավելի արեվալի բան, քան ազատ հոգին:

Ո՛վ ազատություն, փայլիր իմ սրտում այնպես տիրաբար,
Վոր հնից բերված ել վոչ մի չար հույզ գահ չբարձրանա.
Ո՛, յես սիրում եմ աչքերդ դյութիչ ու արեվափայլ,
Պատրաստ եմ կյանքս, յերգըս, ապագաս զոհել քեզ համար:

---

1935 թ.

# ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄ

Յես իմ պոետ ընկերոջ հետ նստած եմ արդ
Ծառի շուքին, կանաչ գորգին, առվակի մոտ.
Մեզ է նայում ու հմայում մի վայրի վարդ,
Լույսերի գետ ու նրբակերտ մի մայրամուտ.
Մի քիչ վերեվ դեղնաթերեվ ընկուզենին
Նայում է մեզ զարմանքով մեծ, խորագնին:

Այս մեր գեղաչ, քաղցրակարկաչ պոետ տղան
Ինչքա՜ն դյութիչ, գեղաթարթիչ աչքեր ունի.
Վարդերի մեջ դառնում է պերճ մի յերեխա,
Պատմում հուշեր, վառում հույզեր հազար ու մի,
Ու ահա արդ խինդով առատ, արեվ ունի՝
Նորքի բլրից նայում ենք ջինջ Յերեվանին...

Դու էլ չկաս, տխո՛ւր յերազ, հին Յերեվան.
Կույր խրճիթներ, սին մզկիթներ ինչի՞ յին պետք,
«Աստվածածին» յեկեղեցին վո՞նց յերեվա,
Յերբ նրա տեղ կանգնել է, տես, մի հսկա շենք,
Յերբ լո՛ւռ, ամա դաշտում հիմա հար-անդադար,
Յերգում է զիլ ծխնելույզի մի թավ անտառ:

Ո՞ւր է անձուկ, աչքումն արցունք փողոցը այն,
Ո՞ւր է խոնավ պատերը կավ խրճիթը հին,
Ո՞ւր է վերքը, ուր է յերգը այն տխրաձայն,
Ո՞ւր է կյանքը, ցավի ակը, դժոխային,
Ո՞ւր է մարդը՝ հոգում դարդը անբուժելի,
Սրտում՝ կարիք ու ժանիքը սուր փշերի:



Ո՛վ կիսավեր, խուլ տնակներ, հնի հետքեր,
Մի որ դուք էլ կընկնեք անել, կչքանաք.
Ահա մեր դեմ բարձրանում են շքեղ շենքեր,
Յեվ մի յեռուն, մի վառվռուն շքնաղ քաղաք.
Ահա, պոետ, մի նրբակերտ հզոր յերկիր
Ու դու պայծառ քնարդ առ, նրան յերգիր:

Մինչ խոսում եմ, հորդորում եմ մեր պոետին,
Նա մտքերի ուժին գերի՝ խորհում է լուռ,
Մերթ նայում է վիթխարի, վեհ Արարատին,
Մերթ քաղաքին, վերջալույսին արեվահուր.
Ո՜, ալեկոծ, ստեղծագործ սրբազան ժամ,
Մի խանգարեք յերգ է կերտում վարպետ մուսան:

Ահա տողեր շողքն են թողել թղթի վրա,
Տեսեք անձայն արձանացած հույզերն անշեջ,
Թողեք մենակ, մի՛ մոտենաք հիմա նրան,
Խոր լռությում լավ են փթթում մտքերը մեծ.
Ահա հանկարծ վոգեվորված՝ նա բարձրացավ,
Տողերի տակ մի վողջ քաղաք արձանացավ:

---

## ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄ

Յես իմ պոետ ընկերոջ հետ նստած եմ արդ
Ծառի շուքին, կանաչ գորգին, առվակի մոտ․
Մեզ է նայում ու հմայում մի վայրի վարդ,
Լույսերի դեմ ու նրբակերտ մի մայրամուտ․
Մի քիչ վերեվ դեղնատերեվ ընկուզենին
Նայում է մեզ զարմանքով մեծ, խորագնին։

Այս մեր դեղաչ, քաղցրակարկաչ պոետ տղան
Ինչքա՜ն դյութիչ, գեղաթարթիչ աչքեր ունի․
Վարդերի մեջ դառնում է պերճ մի յերեխա,
Պատմում հուշեր, վառում հույզեր հազար ու մի,
Ու ահա արդ խինդով առատ, արեվ ունի՝
Նորքի բլրից նայում ենք ջինջ Յերեվանին…

Դու ել չկաս, տխո՛ւր յերազ, հին Յերեվան․
Կույր խրճիթներ, սև մզկիթներ ինչի՞ յեն պետք,
«Աստվածածին» յեկեղեցին վո՞նց յերեվա,
Յերբ նրա տեղ կանգնել է, տես, մի հսկա շենք,
Յերբ լո՛ւռ, ամա դաշտում հիմա հար-անդադար,
Յերգում է զիլ ծխնելույզի մի թավ անտառ։

Ո՞ւր է անձուկ, աչքումն արցունք փողոցը այն,
Ո՞ւր է խոնավ պատերը կավ խրճիթը հին,
Ո՞ւր է վերքը, ուր է յերգը այն տխրաձայն,
Ո՞ւր է կյանքը, ցավի ակը, դժոխային,
Ո՞ւր է մարդը՝ հոգում դարդը անբուժելի,
Սրտում՝ կարիք ու ժանիքը սուր փշերի։



Ո՛վ կխավեր, խուլ տնակներ, հնի հետքեր,
Մի որ դուք ել կընկնեք անել, կչքանաք․
Ահա մեր դեմ բարձրանում են շքեղ շենքեր,
Յեվ մի յեռուն, մի վառվռուն շքնաղ քաղաք․
Ահա, պոետ, մի նրբակերտ հզո՛ր յերկիր
Ու դու պայծառ քնարդ առ, նրան յերգիր։

Մինչ խոսում եմ, հորդորում եմ մեր պոետին,
Նա մտքերի ուժին գերի՝ խորհում է լուռ,
Մերթ նայում է վիթխարի, վեհ Արարատին,
Մերթ քաղաքին, վերջալույսին արեվահուր․
Ո՛, ալեկոծ, ստեղծագործ սրբազան ժամ,
Մի խանգարեք յերգ է կերտում վարպետ մուսան։

Ահա տողեր շողքն են թողել թղթի վրա,
Տեսեք անձայն արձանացած հույզերն անշեջ,
Թողեք մենակ, մի՛ մոտենաք հիմա նրան,
Խոր լռույթում լավ են փթթում մտքերը մեծ․
Ահա հանկարծ վոգեվորված՝ նա բարձրացավ,
Տողերի տակ մի վողջ քաղաք արձանացավ։

---

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայրս հնում մի հովիվ էր հողմաձայն,
Երբ կանչում էր, թնդում էին սար ու ձոր,
Հոնքեր ուներ, ինչպես յերկու ծիածան,
Հասակը հաղթ, բարձրաբերձ ու միաձույլ:
Սիրում էր նա լեռներ, ձորեր, ծաղիկներ,
Բայց իր հոտն էր ամենից շատ նա սիրում.
Հայրս մի սեվ, կեռակտուց խոյ ուներ,
Իր խոյի հետ իշխում էր մեր սարերին:
Չեր վախենում գայլից, բուքից, ամպրոպից,
Ասում էր նա արքաներին աշխարհի,
Նոր ձյունի պես կուսական էր ու անբիծ,
Սարերի մեջ նա մի սար էր վիթխարի:
Մեռավ հայրս... ժառանգություն թողեց ինձ
Միայն մի բան, վոր անգին է ու անմահ,—
Սիրում եմ յես բնությունը լուսաջինջ
Տարերքի դեմ յե՛վ անպարտ եմ, յե՛վ անահ:
Հորս նման յես սիրում եմ ալեծուփ
Արտեր, մարգեր ու արոտներ լայնարձակ,
Յես սիրում եմ աղբյուր, առու, հովվի ցուպ,
Հավքեր, յերգեր, գարնանային արեվծագ:
Հորս նման ատում եմ յես գետնաքարշ
Սողացողին, բռնակալին, վախկոտին,
Ինձ դյութում են նժույգները փրփրաբաշ
Ու գունագեղ ծիածանի վառ գոտին:
Բայց պայքարի, աշխարհփոխման հուրն անշեջ
Ժառանգեցի ժողովրդից իմաստուն.



Ձուլված եմ յես ժողովրդի սրտի մեջ
Ինչպես կաթիլն անծայրածիր ովկիանում:
Նրա հետ եմ տխրում, ցնծում, մաքառում,
Նրա հետ եմ կերտում ներկան, ապագան,
Նրա հետ եմ յերգում յե՛վ վարդ, յե՛վ գարուն
Յեվ գրոհող մեր գնդերը հաղթական:

## ՄԱՔԱՌՈՒՄ

Երբ մաքառում եմ հողմ, ամեհի
Ալիքների դեմ, ինձ թվում է, թե
Մի բանակ զորք եմ տանում գրոհի,
Որ բաստիլների հիմքերը քանդեմ:
Վրդովմունքյան կրակը հուզիչ
Բորբոքվում է այդ փառավոր ժամին,
Ու արձակում է վողջերգական ճիչ
Վախկոտությունը, իմ մեծ թշնամին:
Մոլեգնած ծովի մարտաշունչ քամին
Երգում է յերգը իր բազմաշառաչ,
Վրդովմունքյան այդ վսեմ ժամին
Թևավարում եմ առա՜ջ, միշտ առա՜ջ...

---



## ԲՆՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկ, դյութիչ բնություն,
Թախանցիկ մի լիճ, բնություն,
Ամլության դաժան թշնամի,
Հանճարի պես ջինջ, բնություն:

---

## ԹՈՒՅՆԻ ՍՐՎԱԿ

*Ի՛նչ կախարդիչ են յեվ յերազային*
*Աստղերն, արեն, արշալույսը, կամ*
*Բոլոր դարերի մեծ աստվածուհին՝*
*Սերը, ո՜, սերը մեր նվիրական:*
*Կա՞ արդյոք մի յերգ, կա՞ արդյոք մի գիրք,*
*Վոր սիրո փառքը չհանի յերկինք...*
*Բայց մեր սրտերի այդ անհաղթ արքան*
*Ամուսնության առագաստի տակ,*
*Դեռ ունի պահած և՛ խանդ, և՛ պայքար,*
*Յե՛վ վողբերգություն, և՛ թույնի սրվակ:*

---



## *N*—ԻՆ

*Դու նման ես հին հայկական մարմարակերտ մեհյանին,*
*Քեզ մաշել է ժամանակի մրրկալի մեծ քամին·*
*Խորտակվել են քո սյունազարդ գավիթները հոյաշեն,*
*Փշրվել են քո ջահերը, քանդվել են դուռ ու սեմ,*
*Գունատվել են քո պատերը, խոյակները թափել վար·*
*Բայց հոնքերիդ կամարները մնացել են վե՛հ ու վառ:*

---

## ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Գետակի ափին հպարտ բարձրացող կաղնու տակ նստած՝
Մի ձյունահեր մարդ նայում էր առվին՝ մտքերում սուզված,
Հանկարծ վազելով թոռը մոտեցավ, փաթաթվեց, ասաց.
— Պապի ջան, պապի, ինչո՞ւ ես տխրել, ի՞նչ ես մտածում,—
Խորունկ ախ քաշեց ու պատասխանեց պապը՝ գլխին ձյուն.
— Հարցնում ես, բալա, ինչ է մտածում քո ծերուկ պապին.
Կանգնած՝ մի վոտը խոր գերեզմանում, մյուս վոտը՝ ափին՝
Նայում եմ դեմքիդ և քեզ տալիս եմ հազար յերանի,
Յերանի նորից դառնայի քեզ պես կայտառ պատանի,
Ինչքան ապրել եմ, հազար այնքան էլ ապրեյի կրկին,
Բայց միշտ անթառամ, ջահել մնային իմ սիրտն ու հոգին.
Ջահելությունը յերբեք ու յերբեք վախճան չունենար,
Այս կանաչ ծառը միշտ կանաչ լիներ ու չչորանար,
Այս առուն հավետ ծաղիկների մեջ հոսեր, կարկաչեր,
Վարդի վրայից բլբուլը յերգով բլբուլին կանչեր:

Ուզում եմ, բալա, դառնալ կրակոտ մի յերիտասարդ,
Նորից ձի հեծնել, մեր խոտը հնձել, հերկել դաշտ ու արտ.
Տե՛ս, ինչքան առատ ուժ, յեռանդ ունես, իմ նախշուն բալիկ,
Աշխարհում չկա ջահելությունից մեծ ու թանկ բարիք,
Յես ի՞նչ եմ քեզ մոտ, մի ավերակ տուն՝ ճո՛խ պալատի մոտ,
Յես՝ ցամաքած գետ, դու՝ գարնան գետակ, սրընթաց ու հորդ:
Ահա, թե ինչ է մտածում պապիդ՝ միայնակ նստած,—
Ասաց ու նորից գլուխը կախեց՝ մտքում ընկղմված,
Իսկ ժիր պատանին անհոգ սուլելով, յերգելով գնաց:

---



## ՈԴԱՉՈՒ

Ոդաչու իմ ընկեր,
Դու նորից մի դյութիչ ճանապարհ ես ընկել
Յեվ գնում ես հեռուն:
Քո ճամբին թափառող բազեներն են հանկարծ
Բարձունքից իջնում ցած՝
Ծվարած, սարսուռն:
Սարերն են գլուխներ խոնարհում քո առաջ,
Կայծակն է կծկվում ահարեկ ամպերում,
Յեվ դու նոր թափ առած՝
Սլանում ես հեռուն:
Բնությունը քո դեմ խեղճացել է, ընկեր,
Թեվավոր իմ ընկեր,
Խեղճացել է անչափ.
Տե՛ս, ծովեր, ովկիաններ նախանձից փոթորկվել՝
Փրփուր են նետում վեր
Ու զարկվում ափից-ափ:
Անտառներ, անդունդներ, մրրիկներ, մութ ու մեգ՝
Մտքիդ դեմ այնքա՛ն հեզ,
Այնքան թույլ են, նավորդ,
Քեզ հետ է մեր անծիր յերկիրը հաղաթական,
Քեզ հետ է ապագան,
Յեվ մի մեծ ժողովուրդ:
Սիրելի ընկեր իմ, դու միշտ վեր բարձրացիր
Ու խիզախ նվաճիր
Բերդերը բնության.
Հայրենիքը հպարտ, ժողովուրդն իմաստուն՝ թեվերիդ,
Ու հզոր կենսախինդ՝
Մի ովկիան ուժ կտան:

## ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Գետակի ափին հպարտ բարձրացող կաղնու տակ նստած՝
Մի ձյունահեր մարդ նայում էր ափին՝ մտքերում սուզված,
Հանկարծ վազելով թոռը մոտեցավ, փաթաթվեց, ասաց.
— Պապի ջան, պապի, ինչո՞ւ չես խոսել, ի՞նչ ես մտածում,—
Թոռնիկ ախ քաշեց ու պատասխանեց պապը՝ գլխին ձյուն.
— Հարցնում ես, բալա, ինչ է մտածում քո ծերուկ պապին.
Կանգնած՝ մի ոտը խոր գերեզմանում, մյուս ոտը՝ ափին՝
Նայում եմ դեմքիդ և քեզ տալիս եմ հազար կյանքի՝
Երանի նորից դառնայի քեզ պես կայտառ պատանի,
Ինչքան ապրել եմ, հազար այնքան էլ ապրեյի կրկին,
Բայց միշտ անթառամ, ջահել մնային իմ սիրտն ու հոգին.
Ջահելությունը յերբեք ու յերբեք վախճան չունենար,
Այս կանաչ ծառը միշտ կանաչ լիներ ու չչորանար,
Այս առուն հավետ ծաղիկների մեջ հոսեր, կարկաչեր,
Վարդի վրայից բլբուլը յերգով բլբուլին կանչեր:

Ուզում եմ, բալա, դառնալ կրակոտ մի յերիտասարդ,
Նորից ձի հեծնել, մեր խոտը հնձել, հերկել դաշտ ու արտ.
Տե՛ս, ինչքան առատ ուժ, յեռանդ ունես, իմ նախշուն բալիկ,
Աշխարհում չկա ջահելությունից մեծ ու թանկ բարիք,
Յես ի՞նչ եմ քեզ մոտ, մի ավերակ տուն՝ ճոխ պալատի մոտ,
Յես՝ ցամաքած գետ, դու՝ գարնան գետակ, արընթաց ու հորդ:
Ահա, թե ինչ է մտածում պապիդ՝ միայնակ նստած,—
Ասաց ու նորից գլուխը կախեց՝ մտքում ընկղմված,
Իսկ ժիր պատանին անհոգ սուլելով, յերգելով գնաց:

---



## ՈԴԱՉՈՒ

Ոդաչու իմ ընկեր,
Դու նորից մի դյութիչ ճանապարհ ես ընկել
Յեվ գնում ես հեռուն;
Քո ճամբին թափառող բազեներն են հանկարծ
Բարձունքից իջնում ցած՝
Շվարած, սարսուռն:
Սարերն են գլուխներ խոնարհում քո առաջ,
Կայծակն է կծկվում ահարեկ ամպերում,
Յեվ դու նոր թափ առած՝
Սլանում ես հեռուն:
Բնությունը քո դեմ խեղճացել է, ընկեր,
Թեվավոր իմ ընկեր,
Խեղճացել է անչափ.
Տե՛ս, ծովեր, ովկիանոսներ նախանձից փոթորկվել՝
Փրփուր են նետում վեր
Ու զարկվում ափից-ափ:
Անտառներ, անդունդներ, մրրիկներ, մութ ու մեգ՝
Մոքիդ դեմ այնքա՛ն հեզ,
Այնքան թույլ են, նավորդ,
Քեզ հետ է մեր անծիր յերկիրը հաղաթական,
Քեզ հետ է ապաղան,
Յեվ մի մեծ ժողովուրդ:
Սիրելի ընկեր իմ, դու միշտ վեր բարձրացիր
Ու խիզախ նվաճիր
Բերդերը բնության.
Հայրենիքը հպարտ, ժողովուրդն իմաստուն՝ թեվերիդ,
Ու հոգուդ կենսախինդ՝
Մի ովկիան ուժ կտան:

## ՇՔԵՐԹ

Կանգնած եմ յես ծովի ափին, անտառում,
Հենված հսկա ու հաստաբուն մի ծառի.
Փոթորիկն է անծայր ջրերն որորում,
Ու պարում են ալիքները ցնծալի:
Մռնչում է հողմը վորպես բյուր առյուծ,
Յեվ ջրերը համերգում են անլուրին...
Ո՜, այս պարը հրաշակերտ, հոգեցունց,
Ինձ գամել է կախարդական անտառին:
Դիտում եմ յես հաղթարշավը ջրերի,
Գրոհումը դեպի ափերը ժայռոտ.
Խոնարհվում են կատարները ծառերի,
Ջրերում կա յե՛վ ցնծություն, յե՛վ զայրույթ:
Այդ խելահեղ, տարերային արշավին
Չի դիմանա վոչ ժայռ, վոչ խութ, վոչ պատվար,
Մարդն է միայն սանձահարում այդ դևին,
Հեծնում նրան ինչպես մարտիկ բոցավառ:
Սիրում եմ ձեզ, հայրենիքիս հերոսներ,
Դուք եք հեծել նժույգները բնության,
Ի՞նչ են ձեզ մոտ Սասմա ծռերն ահավոր,
Հեքյաթական Հերկուլեսները տիտան:
Դուք եք հաղթել ամենաժանտ վագրերին—
Մարդուն վամպիր, արքաներին փոքր ու մեծ,
Դուք եք հավետ հուր տալիս իմ յերգերին,
Կերտում մարդու յերջանկությունը անշեջ:
Սիրում եմ ձեզ, ով անտառներ զովասուն,
Ով ալիքներ, մրրկածուփ ու միշտ խենթ,
Հույզերս ահա կազմած մի կուռ զորասյուն՝
Իմ սրտիս մեջ կատարում են մեծ շքերթ:



## ԽԱՐՈՒՅԿԻ ՎՐԱ

Ըմբոստ Ջորդանո, գալիքի գուշակ,
Դու, վոր հեղձուցիչ ժանտ միջնադարի
Սարսափներով լի խավարը անտակ,
Դժոխքն ահավոր մատնեցիր հրի,
Անկոտրում, անթեք կամքդ վիթխարի,
Ապտակդ արի, անհեղահարված,
Անշարժությունը պաշտող աշխարհի
Ու ճիզվիտների յերեսին գամված՝
Լույսի հաղթության, փառքի, քաջության
Դափնիներ են քո վեհ շիրմաքարին,
Ո՜վ ազատատենչ մարդկության տիտան,
Վողջո՜ւյն քո մղած անհաշտ պայքարին:

## ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Նրան չե՛ն տարել վո՛չ դժոխքը ջեռ,
Վո՛չ կրքի, կամքի ովկիանն ալեկոծ.
Վո՞ր գիշատիչը հնում չի փորձել
Կտրելու նրա կամքը ստեղծագործ,
Կտրելու նրան իր յեղբայրակից
Ժողովուրդների պայքարից համառ,
Վոր նա անազատ կյանքի դժոխքից
Ձգտեր դեպի արևը անմար:

Բայց նա փշրեց իր թևերի շղթան,
Անտակ անդունդի խորքից դուրս յեկավ,
Վորպես մի հսկա տառապելական՝
Փոշին թափ տվեց, զենք-զրահ հագավ:
Իր բախտը կապեց ազատագրված
Ժողովուրդների փառավոր բախտին,
Յեվ մի անհատնում ուժ ու թափ առած՝
Միացավ նրանց հաղթական յերթին...
Ու այդ օրից նա դարձավ յե՛վ անպարտ,
Յե՛վ հզորացավ, յե՛վ սրաթռիչ:
Ու հիմա ահա կերտում է հպարտ՝
Իր ներկան պայծառ, գալիքն աստղալից:



## ՎՈՂՋՈՒՅՆ

Գեղածիծաղ, արևի անմար Վրաստան,
Աշխատանքի մեծ աշխարհքի մարգարիտ,
Հողի, հանքի հերոսներից ժրաջան,
Մանուկներից, աղջիկներից կենսախինդ,
Կարմիր զորքից, մարտիկներից անվեհեր,
Անտառներից, Կազբեկ սարից ձյունահեր,
Առվակներից, աղբյուրներից կարկաչուն,
Ցնծումնալից Հայաստանից ջերմ վողջույն:

Հազար ու բյուր՝ ցավի աղբյուր հին կյանքում,
Ո՞վ էր տվել ազատ թևեր քեզ ու մեզ,
Ինչպես ձմեռ վիշտն է նստել մեր հողում՝
Կազբեկից ու Արարատից ծանր ու մեծ,
Բայց դժնդակ այդ վշտի տակ ծանրագին՝
Բոցկլտում էր հավետ անմեռ մեր հոգին,
Ու չէր մարում ազատության հույսը մեր,
Չե՞ վոր ձմռան հաջորդում են գարուններ:

Խնձույքներում, հարսանիքում, պարելիս
Տխուր էյին հնչում մեր հին յերգերը.
Մանուկները աչիկները բացելիս
Տեսնում էյին լոկ սրտի խոր վերքերը.
Սերունդները սերունդների յետևից
Գալիս էյին ընում տրտում, վշտալից,
Յեվ պապերը թոռնիկներին կիսամեռ
Ասում էյին. «Ապրեք, բայց մեզ պես չապրեք»:

Այդպես եր․ այդ մութ, մրգապատ անդնդում
Մենք միասին եյինք լալիս ու խնդում,
Գարնան որն էլ բուք բորան եր մեզ համար,
Հիմա նորից մենք բախտակից ենք իրար,
Քո զարկը մեր զարկն է, յերկիր արեվշատ,
Քո փառքը մեր փառքն է, յեղբայր հարազատ,
Ու մեր ծաղկած, լայնատարած աշխարհում՝
Միասին ենք ցնծում, կռվում, մաքառում։

Ազատության այգաբացն ես տոնում դու,
Ցնծությունն է հորդում Քուռից էլ վարար․
Քեզ հետ մեկտեղ ծափ է տալիս ու խնդում
Մեր անպարփակ հայրենիքը խանդավառ,
Ցեվ Կրեմլից՝ ժողովրդի վառ Արևին
Նայում է քեզ, ժպտում այնպե՛ս սրտագին․
Քեզ, քո տոնին, գարնանաբեր ու ցնծուն,
Քո սրտակից Հայաստանից ջե՛րմ վողջույն։

1938 թ․

ԼԵՆԻՆ

1․

Գլուխն առած ափերի մեջ, խորասուզված իր խոհերում՝
Արքիմեդը հայացքը սուր սեվեռել է դեպի հեռուն,
Արեվն արդեն մայր է մտել, բայց նա անխոս նստել է դեռ,
Հնարագետ հսկա հոգում ծնվում են նոր հրաշք-դյուտեր․
«Տվեք դուք ինձ մի հենակետ յեվ յես յերկիրը կշրջեմ»,—
Ասում է մեծ իմաստունն ինքնավստահ, հաստատ ու ջերմ,
Ասում է, բայց մեռնում է նա՝ յերազելով մի հենակետ,
Դարեր հետո հենակետն այդ՝ գտավ Լենինն ամենագետ։

2․

Գարնան արեվն առատ լույսով վողողել է աշխարհն-արար,
Փրփրալով հորձանքում են առու, առվակ, գետեր վարար,
Ծաղիկները ծիծաղում են, ծիտը ծվում, ցնծում զվարթ,
Հեղիկ հովից օրորվում են բազմահազար յերփներանդ վարդ,
Կանաչ արտերը ալեծուփ, ծաղկած ծառերը մշտարթուն,
Ամենուրեք նվագ ու յերգ, կյանքի վերելք ու ցնծություն․
— Այս գարնան պես գեղեցիկ բան յեղե՞լ է, կա՞, և կլինի՞,
— Այս գարնան պես գեղեցիկ եր բաբախող սիրտը Լենինի։

3․

Տե՛ս, այս ասլին քաղցրակարկաչ, թռչուններին ծլվլացող,
Աչքով անող կակաչներին՝ թերթիկներին մարգարտյա ցող,
Տե՛ս, այս ծերուկ զինականին, վոր նոր աստղեր է վորոնում,

## ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՒՐ

Իմաստության անհուն ովկիան, յերջանկության հո՛ւր Ստալին,
Ջերմացող ջահելություն, անմահական ո՛ւժ Ստալին,
Հազարավոր դարունների ծաղիկների բույր Ստալին,
Ազատության անմար փարոս, ճշմարտության թո՛ւր Ստալին:

Մեր վարդաշատ Հայաստանում մեծ ցնծության տո՛ն է այսօր,
Բարիքների լիությունը դարնան վարար Դո՛ն է այսօր,
Ամեն մի սիրտ մի բախտավոր հարսանիքի տո՛ն է այսօր,
Արևների անմար արև, անսպառ աղբյո՛ւր Ստալին:

Մայրն իր մանկան օրորելիս ուրախ, զվարթ քե՛զ է յերգում,
Միտքը զուլալ, սիրտը հալալ ամեն մի մարդ քե՛զ է յերգում,
Համայնական մեր դաշտերի ամեն մի արտ քե՛զ է յերգում,
Մեր յերգերի սիրտն ու հոգին, մեր կյանք, արև հա՛յր Ստալին:

Մեր աշխարհում միշտ արև է, գիշեր-ցերեկ լո՛ւյս ես տալիս,
Հոգիներին անշեջ կրակ, արևածագ-հո՛ւյս ես տալիս,
Անապատին, խոպան դաշտին անթիվ առու, բո՛ւյս ես տալիս,
Ժողովրդին՝ յերջանկություն, թշնամուն՝ զարհո՛ւր Ստալին:

Ծիծաղ, ծաղկով զարդարվել է մեր վառ կյանքի նո՛րը պայծառ,
Բուք-ձմռանն էլ մեր սրտերում մայիսական օ՛ր է պայծառ,
Հայաստանից հազար վողջույն ժողովրդի հո՛րը պայծառ,
Արագածից յերկա՛ր ապրես, հավերժական հո՛ւր Ստալին:

---



## ԱՐԵՎԻ ՄՈՏ

— Ո՛վ Արագած, հպարտ ու վեհ,
Գնում եմ յես Կրեմլը վառ,
Ի՞նչ ես տալիս տանեմ նվեր
Մեր ցնծության, մեր հոր համար:
— Իմ լանջերին անվերջ հնչող
Յերջանկության յերգ ու տաղից
Փնջիր յերգեր արևաշող,—
Ահա ընծաս յերախտալից:
— Ո՛վ Սևանա գեղեցիկ լի՛ճ,
Գնում եմ յես Կրեմլը վառ,
Ի՞նչ ես տալիս քո գանձերից,
Առնեմ-տանեմ մեր հոր համար:
— Իմ ջրերից ծնվող լույսի
Շողշողացող շուշաններից
Դու անթառամ մի փունջ հյուսիր,
Սրտի նվեր տար ինձանից:
— Ո՛վ պարարտ դաշտ Արարատյան,
Գնում եմ յես Կրեմլը վառ,
Ի՞նչ են տալիս արտերդ լայն՝
Տանեմ Արև-մարդու համար:
— Ընտրիր իմ ծով բարիքներից
Վորը կուզես՝ յեվ առ ու տար,
Զմռանաս՝ դու ինձանից
Նրան մի վառ վողջույն էլ տար:
— Սարեր, ձորեր, հավքեր, հովեր
Ծաղկածիծաղ Հայաստանի,

Ասեք, սիրտըս առած թեվեր՝
Ձեզանի՞ց ինչ անի–տանի:
— Հազար տարվա կյանք ու կռանդ
Կցանկանանք Արեվ–մարդուն,
Նա գարնանով է լցրել արդ
Ամեն մի սիրտ, ամեն մի տուն:
— Իմ հայրենի ժիր մանուկներ,
Գնում եմ յես Կրեմլը վառ,
Ի՞նչ եք տալիս տանեմ նվեր
Հավերժական մարդու համար:
— Մեր սիրտը տար, սրտից արդար
Ուրիշ ի՞նչ կա, պոետ ընկեր,
Մեկել ինչքան կուզես դու տար
Ծիծաղ, ցնծում, ժպիտ, յերգեր:
— Ժողովուրդ իմ, Արեվի մոտ
Պատվիրակ է գնում վորդիդ,
Հողին լցված հույզերով հորդ՝
Ահա դիմում է քո սրտին:
Քո բերքերից, քո մեծ սրտի
Գանձարանից բազմադարյան,
Ի՞նչ ես տալիս, վոր քո վորդին,
Վորպես նվեր տանի նրան:
— Ո՛, մեր համար իր զավակից
Ել ավելի ի՞նչ կա անգին,
Դու ինքդ քեզ տուր ինձանից
Վորպես նվեր Արեգակին:
Բայց դնա դու վորպես հերոս,
Հերոսական Կրեմլը վառ,
Այն ժամանակ, իմ աչքի լույս,
Քեզ կժպտա Արեվն անմար:



## ՀԵՐՈՍՆԵՐԻ ՈՒՂԻՆ

(Ֆրագմենտ)

Մեր յերկիրը հետ եր ընկել, դի տերերը միահեծ
Պինդ չղթայել եյին նրա մաքի, հոգու թռիչքի ձին
Յեվ անդադար խմել եյին թշնամիները փոքր ու մեծ
Դյուցազնածին ժողովրդին, յերկրին, յե՛վ հին, յե՛վ անծիր:
«Մենք չենք ուզում խփված լինել» ;— ասաց հանճարն արեգակ
Ու յերկիրը առաջ տարավ հողմի թափի պես արագ:
Յեվ սառցապատ տունդրաներից մինչ Հայաստանն արեվոտ,
Ծեվչենկոյի հայրենիքից մինչ հեռավոր Սախալին,
Ինչպես ովկիան հորձանք տվեց մի բազմացեղ ժողովուրդ՝
Հերոսների մի վողջ սերունդ նվիրելով աշխարհին:
Վո՛չ տարերքը, վո՛չ դրկանքը, վո՛չ թշնամին մոլեգնած
Ձթեքեցին նրա յերթի չողեկառքը սրընթաց:
Մութը մաքրեց Ջրից ծնված արեվներով շողարձակ,
Գնացքների յերթի համար ճեղքեց լեռներ բարձրաբերձ,
Արծաթավայլ ջրանցքներով, առուներով հորդառատ
Յանցեց դաշտեր, անապատներ, տափաստաններ, հանդ ու արոտ:
Փոխեց ընթացքը գետերի, սաստեց ջրերը փրփուր,
Յեվ զարերով ամուլ գետերն արշալույսներ ծնեցին,
Բազմամիլիոն ժպտուն լամպեր ու լույսերը կաթնագույն
Զարդարեցին գիշերները, վորպես աստղեր յերկրածին.
Ձեթի ճրագը դալկադեմ ու մոմերը դողդոջուն
Իրարու հետ կորան անհետ, ինչպես մի բուռ փխրուն ձյուն:
Յեվ զրահող յերկաթավոր բանակների առաջից
Արշավում եր մեծահանճար զորավարը քաջարի.

Նա մշուշի, փոշու միջից տեսնում էր մեր լուսաջինջ
Այս վառ ներկան յեվ ապագան ե՛լ ավելի սքանչելի։
Ինչեր չարին թշնամիներն թե՛ «հայրենի», թե՛ օտար,
Բայց անսասան իմաստունը յերկիրն տարավ դեպ կատար։
Սեվ ծովից մինչ Խաղաղական, Յերեվանից Արկտիկա,
Ժողովուրդը ճիգով, ջանքով հորձանք տվեց դեպի վեր.
Վորպես կայտառ յերկվորյակներ—միշտ մտերիմ, բարեկամ—
Անապատում, ձորում, դաշտում շողշողացին նոր ռելսեր,
Շոգեքարշերը հեռավոր, խուլ վայրերում սինչացին,
Շչակները միաբերան ցնծությունից ճչացին։
Ինչպե՞ս պիտի կարեր—անցներ՝ խղճուկ յեզ մի հորանջուն
Յերկրից-յերկիր անվերջ ձգվող ուղիները լայն ու ձիգ։
Մեր սեփական հողից ծնված յերկաթաթեվ բյուր թռչուն
Ու նրբակերտ ավտոների ջոկատները սլացիկ
Թափի թրով հարվածեցին անշարժության դեվերին,
Կյանքը դրին արագության, թռիչքների թեվերին։
Յեթե հողի ամբարներից այդքան գանձեր հանվեցին,
Հապա ինչե՛ր պիտի ծներ գանձարանը մարդկային...
Մի՞թե թիվ կա հերոսներին մեր փառապանծ աշխարհի,
Մեր մեծ յերկիրը գլխովին հերոս է ու քաջարի։
Մեր մարտերի բառարանում պարտություն բառը չկա,
Գիշեր-ցերեկ խոյանում ենք հաղթանակից-հաղթանակ,
Յեվ մարդկության հերոսներից հերոսագույնը հսկա
Լուսավորում է մեր ուղին, ինչպես անմար արեգակ.
Ու բազմացեղ, բազմալեզու ժողովրդին հաղթական
Տանում է դեպ յերջանկության սքանչելի ապագան։



## ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Սիրում եմ քեզ, ո՛վ անվեհեր, իմ հանճարեղ ժողովուրդ,
Չի մարդկության տվել ես դու դարեր ապրող մշակույթ,
Չի դու անհուն գանձեր ունես քո մեծ հոգու հանքերում,
Ու քո չքնաղ ապագայի փարոսներն են ինձ գերում։

Քեզ տիրել են սատրապները, կեսարները հաղթական,
Բայց անզոր են յեղել բանտել քո թռիչքի սեգ բազեն.
Նույնիսկ դժնի միջնադարում վորպես դյութիչ մի ջութակ,
Վառ պահեց քո հոգու հուրը մի տաղերգու մեծ Քուչակ։

Յեվ քո կյանքի այն ծանրագին, այն սոսկալի գիշերում,
Յերբ Բուղա խանը ժանտ հողի քո վողնաշարն էր փշրում,
Վորպես ցասման, ըմբոստացման գարնանաբեր փոթորիկ,
Քո մեծ սրտի, մեծ գանգատի յերգը հնչեց մի Ֆրիկ։

Քեզ ճզմել են քո սեփական իշխանները հայկազուն,
Հյութդ ծծել, գիրացել են «տիկնայք հայոց փափկասուն»
Քո ձեռքերով կառուցել են բերդ ու պալատ հոյաշեն,
Ու գետնափոր, խոնավաբույր խրճիթներում քեզ մաշել։

Այդ զնդանում տառապալի, այդ գիշերում անվախճան՝
Մարտնչել են, արյուն թափել զավակներդ քրտնաջան,
Ու անսասան, քո սրբազան կռվի կրակն անսպառ,
Վորպես արեվ միշտ վառ պահել, տարել դեպ վեր դարեդար։

Տառապել ես, բերքով լցրել սարեր, ձորեր ու դաշտեր,
Բայց մնացել դատարկաձեռն, քաղցի, լացի, վշտի տեր.
Յերբ վզիդ կար յերկտակ շղթա թե՛ հայրենի, թե՛ օտար,
Ժողովուրդ իմ, քո հանճարը, ինչպե՞ս աճեր, հորձանք տար։

Ազատատենչ արծվի նման միշտ ձգտել ես դեպի վեր,
Դեպի անհաս կատարները, դեպի կապույտը թևել,
Բայց դարերում քո անազատ, տխրապատում անցյալի՝
Կապել էին լայն թևերը քո շողշողուն հանճարի:

Յերկարաձիգ, մութ ու անծիր անդունդներով ահավոր,
Գլխիդ կախված սուր-սուր ժայռեր, դեմդ դևեր խորախոր,
Կորեցիր դու քո անխնդում կյանքի ուղին խորդ ու բորդ,
Ու հուսավառ վեր բարձրացար վորպես խիզախ մի ճամբորդ:

Վե՛ր բարձրացար, հասար պայծառ, յերջանկալի այն որվան,
Յերբ ռուսական հերոսական ժողովուրդը անվարան
Մեջքը ուղղեց, վոտքի կանգնեց, փշրեց շղթան յերկաթե
Ու սրտակեզ յեկավ հանդես, վորպես ազատ Պրոմեթեյ:

Արնակարմիր դրոշ պարզած՝ սրի, հրի սյան միջով
Հին աշխարհի բերդերի դեմ գրոհ տվեց ծովից-ծով,
Ջարդեց ճզմիչը բռնության, վառեց լույսերը անմար,
Ազատ, ուրախ շունչ քաշեցին ժողովուրդներ անհամար:

Յերկրից մաքրեց հազարամյա վիշապներին, բոռերին,
Ճամբա տվեց խիզախության, թռիչքների որերին.
Ամենուրեք կամքով անթեք խորտակեց բանտ ու զնդան,
Յեվ հաղթարշավ յեկավ հասավ մինչև յերկիրն Հայաստան:

Դու ունեյիր յե՛վ սիրտ կարմիր, յե՛վ թռիչքի թև ու թափ,
Ըմբոստացար ու այդ անծայր հզոր յերկրի ոգնությամբ
Քեզ կաշկանդող, հոգին խեղդող վանդակները փշրեցիր,
Ու հրացայտ վեր սլացար, ինչպես սրաչք մի արծիվ...

Ո՛վ պտղառատ, իմ հարազատ, հազարերանգ այգեստան,
Քո հաղթության, հզորության թույլ տուր յերգով վողջույն տամ.
Վառ ներկայից ավելի վառ, հմայիչ է ապագադ,
Թռիր հպարտ, հաստատաքայլ գագաթներից նոր գագաթ:



## ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր աշխատավոր, տոկուն, հուսավառ ժողովուրդը մեծ,
Վոր ունի լեռներ վեհանիստ, հպարտ ու արեվամերձ,
Վոր յերազել է դարե՛ր ու դարե՛ր լույս, ազատություն,
Չուներ հարազատ, սրտաբաց, ազատ հայրենիք ու տուն:
Հիմա մենք ունենք մի անծայրածիր, չքնաղ հայրենիք,
Յերկինք են հասնում մեր գիգանտները հզոր ու վերձիգ.
Մեր ծովածավալ դաշտերում վոսկի հասկն է բարձրանում,
Առատ հույզերի, սիրո, լույսերի գետն է վարարում:
Ի՜նչ կենսաբուխ է մեր յերջանկալի յերկիրը զվարթ,
Վո՞ր այգեստանը, վո՞ր յերկիրն ունի այսքան խինդ ու վարդ.
Մեր հայրենիքը՝ արեվանման մի փարոս անմար,
Դյուցազունների, բյուր տաղանդների, խիզախների մայր:
Զուր չէ, վոր բոլորս՝ մանուկ, պատանի, ծեր, յերիտասարդ,
Այնքան ջերմորեն, սրտանց սիրում ենք մեր յերկիրն ազատ.
Ու մեր սքանչելի, մեծ հայրենիքի թանկագին սիրուն՝
Պատրաստ ենք տալու յե՛վ սեր, յե՛վ հոգի, յե՛վ կյանք, յեվ
արյուն:

## ԱՐԵՎ

*Անհուն յերկնքի պերճ ու թանկագին զարդն ես դու, արե՛վ.*
*Ո՛, քո շողերը, անշեջ հուրերը իմ սիրտն են այրել.*
*Խոնավ խրճիթից, մայրիկիս գրկից յես քեզ եմ սիրել,*
*Դու ես ցնծալից քո անհաս գահից իմ սիրտը տիրել:*

*Հիմա իմ սրտում վարդեր են փթթում ու կա ծիածան,*
*Բայց յես քեզ նորից անչափ սիրում եմ, ով բնության մայր.*
*Քեզ, վոր տալիս ես վարդեր ժպտերես, ջրեր քաղցրաձայն,*
*Աչուն մրգաբեր, ձյունի թիթեռներ, վոսկեհասկ ամառ:*

*Ցեվ դու, ով արեվ, դեռ անթիվ դարեր կյանք կներարկես*
*Ծովին, ցամաքին, անտառին, մարդին, հյուլեյին, մարդուն.*
*Ցես, պոետ անքուն, քո յերկրպագուն, վողջունում եմ քեզ*
*Ու վորպես փարոս քեզ վառ կպահեմ յերգերիս սրտում:*



## ՀԱՐՑ

*Հարցնում եմ ահա իմ հուզված սրտին.*
*— Սիրտ, ինչո՞ւ այդքան սրտառուչ ու խոր,*
*Այդքան այրող է Շիլլոնի բերդի*
*Կալանավորի մորմոքը տխուր:*
*Ինչո՞ւ յե իր փակ պատուհանի տակ*
*Ցերգող թռչունին այնպես կարոտով*
*Լսում, արտասվում: Ինչո՞ւ այնքան թանկ*
*Ու գրավիչ է Ռոնյան հողեթով.*
*Ցեվ ինչո՞ւ յե նա այնպես սրտագին*
*Հիշում հայրենի լեռները հպարտ,*
*Ու բաղուկներում իր սպառնագին՝*
*Ուզում է փշրել յե՛վ շղթա, յե՛վ բանտ:*

*Լսվեց պատասխան իմ կրծքի տակից.*
*— Դու ապրում ես մի հզոր աշխարհում,*
*Ունես մանուկներ յեվ կին սրտակից,*
*Ուրախ ես, առույգ ձմեռ ու գարուն:*
*Ցես քո դանձերից վորի՞ անունն տամ,*
*Ցերջանկությունըդ ծովի պես առատ,*
*Դու ազատության թագավորության*
*Քաղաքացին ես, կենսալից, հպարտ:*
*Ա՛խ, ազատության փափագն է այդքան*
*Այդ շղթայվածին խոցոտում, այրում,*
*Ցեվ նրա նման դեռ քանինե՛ր կան*
*Բռնության, սոլի մութ զնդաններում:*

Բայց,— ասում է այդ ձայնը ցնծալից,—
Աշխարհում չկա վոչինչ անփոփոխ,
Հասած պտուղներն ընկնում են ծառից,
Մարդը մեռնում է ու դառնում է հող,
Ջինջ ջուրն յերկնքում դառնում է սեվ ամպ,
Ձմեռն ծնում է ծաղկավառ գարուն...
Յեվ մի պայծառ որ՝ անհուն խնդությամբ
Այգը կվառվի այդ զնդաններում,
Շղթան կփշրեն, դուրս կգան նրանք,
Կյանքը գլխիվայր հիմքից շուռ կտան,
Կբացվեն կյանքի ծաղկունք բազմերանգ,
Կհնչեն յերգեր նոր յերջանկության:



## ՀՈՒՇ

Տխուր անցյալիս ձմռան որերում,
Յերբ անդուսպ քամին, ինչպես բորենի,
Անվերջ վոռնում եր, ծառերն որորում՝
Խելագարության փրփուրը բերնին,
Յերբ մեր դաշտերում կոհակ առ կոհակ
Հորձանք եր տալիս ովկիանը ձյան,
Յերբ վոր ամեն ինչ թաղված սառցի տակ
Քնում եր տխուր, համրի պես անձայն,
Սիրտս նայում եր վեհ Արագածին,
Այդ հաղթ հսկային մեր քառագագաթ.
Հոգիս հեծնում եր կարոտի սեվ ձին,
Ձեռքս եյի առնում գինով լի գավաթ...

Ձեռքս եյի առնում յեվ խմում անհագ,
Յուղ եյի լցնում վշտիս խարույկին
Յեվ կքած կյանքի ծանր բեռան տակ՝
Անվերջ տնքում եր իմ ջահել հոգին.
Յերազում եյի՝ աշխարհն գլխիվայր
Շուռ գա մի որում, խորտակվի, պրծնի,
Գահերը դառնան կրակի ավար,—
Ու հին աշխարհը նոր աշխարհ ծնի:
Յեվ իմ յերազը իրականացավ,
Տառապող մարդիկ կյանքը շրջեցին,
Հոգուս մեջ կարծեք մրրիկ բարձրացավ
Յեվ յես նոր բուրմունք, նոր օդ շնչեցի,
Միացա կարմիր զորքին սրարշավ՝
Հրով, գրոհով կռվի գնացի...

## ԽՈՀ

— Սիրելիս, ինչո՞ւ չես այդպես մռայլվել,
Սև ամպեր դիպել ծիծաղկոտ հոնքերիդ,
Խստասիրտ սիրուհուդ սե՞րն է քեզ այրել,
Թե ծա՛նր է բեռը կապարե հոգսերիդ։

— Հոգյակս, մի՛ նայիր ճակտիս ամպերին.
Իմ սրտում գարուն է, հույզերի շքերթ,
Խոհերով բեղուն այդ անքուն ժամերին՝
Հոգիս ու մուսաս են խոսում իրար հետ։



## ԿՅԱՆՔԻ ՍԵՐԸ

Կյանքի հանդեպ դու մի լինի խուլ ու չարկամ,
Սիրիր կյանքը, ինչպես շողերն արեգական,
Կյանքի տված ցավը նույնիսկ տար ցնծությամբ,
Վո՞ր յերկինքն է, վոր չի տեսել մի մռայլ ամպ.
Յերբեք հոգիդ մի շղթայիր վշտի բանտում, —
Կյանքից այն կողմ — արհավիրալի ամայություն։

## ՄԱՅՐ

Իմ մանկության պարտեզում վորպես անդին հուշարձան՝
Կանգնել ես միշտ մեծավիշտ, մա՛յր իմ, մա՛յր իմ, քաղցրաձայն.
Ախ, դու մեռար այն պահին, յերբ հոգիդ մութն եր, մռայլ,
Յերբ քո սիրտը կապել եր արցունք մաղող սեվ կամար.
Բայց տես, վորդիդ կանգնել ե յերջանկության ծաղկոցում,
Հոգումհույզի հարսանիք, ձեռքին ծաղկունք անհամար,
Ու կանչում ե՝ ո՛ւր ես, յե՛կ, կարոտել եմ, անո՛ւշ մայր:



## ՀԱՍԿԵՐ

Քույր, մանկության յերկինքի տակ խաղացել ենք, իրար գրկել,
Սովորել ենք տխուր յերգեր, կարդացել ենք վշտոտ գրքեր,
Ու կարիքի ծովի ափին մեծացել ենք, առել հասակ,
Ինչպես արտում ալալացող խորշակահար յերկու լուռ հասկ:
Բայց իմ յերկրի այս կյանք գարնան՝ անձրեվները հորդ, կենսաբեր
Ո, վաղո՛ւց են վշտի փոշուց մեր բազմատանջ սիրտը սրբել:

## ՍՊԱՍՈՒՄ

Յե՞րբ պիտի գա գարունը, առվակները կարկաչեն,
Թռչունները ճռվողեն, այգիները կանաչեն,
Գետակները վարարեն, աղբյուրները ծիծաղեն,
Այս ծերացած սարերը ջահելանան ու ծաղկեն...
Յեվ մենք, ընկեր յերազուն, նստենք վարթամ կանաչին,
Խորովածը բուրավետ, ալ գինին մեր առաջին՝
Խմենք կենացը գարնան, գովենք կյանքը՝ խինդի մայր,
Յերգի կրակը պահենք յե՛վ ծիծաղկոտ, յե՛վ անմար:



## ԼՍԻ՛Ր ԻՆՁ...

Սի՛րտ իմ, սի՛րտ իմ, լսիր ինձ,
Լույսի նման յեղիր ջինջ,
Ժողովրդի մեծ սրտի
Արդար ձայնին ականջ դիր,
Յեվ քեզ յերբեք չի սասանի
Վոչ մի վոսոխ դավադիր:

## ՍԻՐԵԼԻ ՎԱՐՊԵՏԻՆ

*Դու սիրո աղբյուր, Արագածի բույր, ինքդ մի հեքիաթ,*
*Դու հավերժական մի ջեյրան վորսկան՝ աշունքին ծնված,*
*Դու յեղնիկների հմայքին գերի, մեր մեծ Ավետիք,*
*Քո սիրտը յերգի, քո սիրտը վերքի անափ հայրենիք:*



## ՄԱՀ

*Դու ամենազոր, անխուսափելի, անպարտելի մահ,*
*Քո հակաթույնը մարդը դեռ գտնել չի կարողացել,*
*Ուր վոտք ես դնում, դարձնում ես անզարդ, անծիծաղ, ամա.*
*Քեզնից սարսում են յե՛վ մանուկ, յե՛վ մայր, յե՛վ ջահել, յե՛վ ծեր:*

*Աշխարհն ես մտնում մերթ վորպես մրրիկ, մերթ վորպես ժանտախտ,*
*Մերթ պատերազմի զոհերի սիրտը խժռող շնագայլ,*
*Մերթ կոխոտելով անհամար, անթիվ դիակներ անթաղ՝*
*Ամայության մեջ վոռնում ես անվերջ բիրտ ու բռնակալ:*

*Աստղերի թվից, ովկիանի ջրի կաթիլներից շատ*
*Կյանքեր ե կտրել հազար բերանի թուրդ արյունոտ.*
*Դու չես խնայում, հնձում ես մանուկ, ծեր, յերիտասարդ,*
*Քո խորշակ շնչից մեռնում ե յե՛վ վարդ, յե՛վ մարդ, յե՛վ արտ:*

*Լոկ հանճարներին դու թեվաթափել չես կարող յերբեք,*
*Նրանք դարից-դար, սերնդից-սերունդ անցնում են անմահ,*
*Իսկ յես, չնչինըս, հոգուս հույզերից հյուսում եմ մի յերգ,*
*Յեվ յերգիս սրտում դնում եմ հոգուս կրակներն անմար:*

*Մի որ գերանդովդ ինձ էլ կհնձի, յես հող կդառնամ,*
*Տարիներ կանցնեն, իմ շիրմաքարին թավ մամուռ կաճի,*
*Բայց վորպես զվարթ, հորդ ու կենսատու աղբյուրը գարնան՝*
*Յերգըս քեզ վրա պիտի խնդա, ո՛վ մահ, յեվ հար կարկաչի:*

## ԲՆՈՒԹՅՈՒՆ

Ո՛վ բնություն, յեղիր ինձ տուն այս գարնան.
Քո հարկի տակ կա յե՛վ գետակ, յե՛վ աղբյուր.
Կարոտ եմ յես քո սարերին անման,
Քո հավքերին, քո հովերին վարդաբույր,
Գամ՝ համբուրեմ ծաղիկներդ դալարուն,
Զրույց անեմ գետերիդ հետ վարարուն...

Սիրում եմ քեզ, ինչպես որդին քնքուշ մոր,
Ինչպես հրկեզ սիրահարը սիրուհուն,
Ո՛վ բնություն, դու միշտ հին ես ու միշտ նոր.
Յես մի կաթիլ, դու մի ովկիան ես անհուն.
Դու մի հրաշք՝ հավերժական ու անմեռ,
Սակայն, ավա՜ղ, յես վաղանցիկ մի թիթեռ։



## ՍԻՐՏ

Սի՛րտ իմ, դու մի ծով ես անտակ,
Մերթ խաղաղ ես, ջինջ ու հստակ,
Մերթ մրրկուն ու փրփրադեզ,
Ալեկոծված մռնչում ես.
Մերթ ամպերն են հախուռն թափով
Իրար բախվում քո յերկնքում,
Մերթ մարդկային մի հոծ թափոր
Քո վերելքն է ուժգին յերգում,
Ու ափերիդ հար–անդադար
Սփռվում է մի թավ անտառ...
Կաղնիները սաղարթախիտ,
Նոճիները տխուր, անխինդ,
Բարդիները յերկնասլաց՝
Համերգում են լեզու առած։
Ձեռքիս քնար ոսետական՝
Նստել եմ յես այդ անտառում,
Ալիքներդ խրոխտաքայլ
Գրոհում են դեպի հեռուն...
Ու ցնծությամբ յերգում եմ յես
Ջրերիդ հետ մեծահանդես։

1935

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԵՐ

Սիրում եմ քեզ, գեղաթարթիչ, արևաչքինջ աղջիկ սիրուն,
Մեր աշխարհում կա՞ մեկը, վոր չապրի գոնե մեկի սիրուն·
Այս աշխարհի սերերն բոլոր մի կաթիլ են սիրուս դիմաց,
Յեվ աստղերը տիեզերքի սիրուս կողքին՝ լոկ մի-մի կայծ։
Գո՞ւցե կյանքում շատերից ես այս հանգավոր յերգը լսել,
Բայց գիտե՞ս, թե ի՞նչ հրդեհ ե բանաստեղծի բոցավառ սեր։



## ԼՈՒՍԻՆ

Հավիտյան համր, ձյունահեր ճամբորդ,
Յերկնքի ծովի փարոս մշտավառ,
Մարմարից կերտված վիթխարի սափոր՝
Լցված լուսեղեն ջրերով վարար·
Առնում եմ ահա այս գինին պուրպուր
Ու կենացն եմ ցնծագին ըմպում·
Ուղարկում եմ քեզ տենչավառ համբույր,
Քեզ նվաճելու կարոտով արբում։

## ԿԻՆ

Չի յեղել, չկա յեվ վոչ մի պոետ, վոր քեզ չի յերգել.
Վոմանք քեզ իժից, դեվլից, հրեշից վատ են համարել,
Վոմանք քեզ այնքան վա՛ռ արեգակյան գույներ են տվել,
Վոր դատարկ ոդում բարձրացել ես դու ամպերից ել վեր.
Դու յե՛վ հզոր ես, յե՛վ խորհրդավոր, յե՛վ անչափ քնքույշ.
Առանց քեզ՝ սիրտը աղբյուրի ճամբին փշրված մի կուժ:

Դու մի հոգեցունց ճամբա ես կարել դարե՛ր ու դարե՛ր.
Վողբերգով ես դու քո հյուծված ու թույլ մանկանն որորել,
Յեվ մետաքսածուփ չորերի մեջ ել բիրտ տղամարդու
Ամենախոնարհ, լուռ կամակատար ստրուկն եյիր դու.
Բայց հիմա, ո՛վ կին, այլ ե քո հոգին իմ հայրենիքում.
Դու համայնական մեր արեվակամ դաշտերն ես հերկում:

Գործարաններում, ծովերի վրա, ոդում, հանքերում,
Շքերթում շքեղ, ամեն, ամեն տեղ այդ դո՛ւ ես յերգում.
Դո՛ւ ես մաքառում, խրոխտ սավառնում գագաթից—գագաթ,
Յեվ ինքդ ես հիմնում ներկայի հողում չքնաղ ապագադ.
Ու ամենուրեք տղամարդու հետ համահավասար՝
Կերտում ես կյանք մի քո աչքերի պես յե՛վ ջինջ, յե՛վ պայծառ:

---

1935



## ԳԻՆԻ

Աշխարհի բոլոր հանճարները մեծ
Քեզ գովերգել են, խաղողի ժառանգ,
Վոգեվորության կրակ կա քո մեջ,
Կա թախիծ, կա խինդ, ծաղկունք բազմերանգ...
Հուսահատների աստվածն ես յեղել,
Խենթերին՝ հաշիշ, վշտին՝ բալասան,
Դու մեզ բերել ես փորձանքներ յեղեռն՝
Վորպես ինքնակալ արքա անսասան:
Յես քո ստրուկը չեմ դառնա յերբեք,
Ինչպես բնության յեվ վո՛չ մի ուժին,
Քեզնից կհնձեմ յերգի առատ բերք
Ու վողջույն կտամ խնդության հույզին:

---

## ՋԱՀԵԼՈՒԹՅՈՒՆ

Ով ջահելություն—փոթորկահույզ ծով,
Գարնան ծլածան, աստղալի յերկինք,
Ծաղկի, ծիծաղի յերջանկավետ ձոր,
Արկածներով լի ռոմանտիկ մի գիրք։
Յես սիրում եմ քեզ, խենթ ջահելություն,
Փռվիր իմ հոգու դաշտերում անծիր
Յեվ ծերության դեմ վորպես հակաթույն
Բարձրացիր հպարտ ու հավերժացիր։



## ՑՆԾՈՒԹՅԱՆ ՅԵՐԳ

Հայրենիք իմ, դու կենսատու ազատության,
Փարոսների, կրակների անմար օջախ.
Ձափ չկա մեր ժողովրդի ուրախության,
Ամենուրեք խնդություն, յերգ, ծափ ու ծիծաղ։

Ազատության գովքն ենք յերգում միաբերան
Ու պայքարով խոյանում ենք դեպի կատար.
Ո՜, առանց քեզ, ով արշալույս Հոկտեմբերյան,
Այսքան լույսեր, այսքան հույզեր մեզ ո՞վ կտար։

Ահա այս վառ, մշտավարար ցնծության մեջ,
Հզորության, հերոսության այս մեծ տոնին,
Յես, զավակդ, յերգում եմ գիլ, ցնծում անվերջ
Ու ձոնում եմ յերգս քո վառած արևներին։

## ՍԻՐՏ

Յես պուշկինյան կիպարիսի
Ստվերի տակ նստած մի որ՝
Սրտիս ասի·

— Նայիր, նայիր դու այս ծառին,
Մանուկ եր դեռ, յերբ տեսավ նա
Այն հանճարին·

Այն աքսորված բանաստեղծին,
Ընկեր դարձավ նրա խինդին
Ու թախիծին:

Ժամանակին չի դիմանա
Այս կիպարիսը գեղեցիկ,
Կմահանա՛:

Այս խենթ ծովն եվ ժամանակի
Մրրիկներին չի դիմանա,
Կը ցամաքի...

Բայց քանի վոր արեվի տակ
Կա վիշտ ու սեր, ծաղիկ-ծիծաղ,
Կա յերգ, կա կյանք—

Այս ծառի տակ, այս ծովափին
Գրված յերգերը կվառվեն,
Վորպես արփին:



Սի՛րտ կա, սի՛րտ կա այդ յերգերում,
Նրանք գրված են արյունով
Յեփ ու յեռուն:

—Յեվ դու,— ասաց սիրտս հանկարծ,—
Մինչեվ հիմա ի՞նչ ունես դու
Սրտով գրված:

Առանց սրտի գրած յերգը
Նման ե չոր անապատում
Տնկած ծաղկի,

Կապրի մի ժամ, կամ մի ցերեկ...
Առանց սրտի չգրես դու
Յեվ վո՛չ մի յերգ:

1938 Թ. Գուրզուֆ

## ԾՈՎԻ ՍԵՐԸ

Յես Ղրիմի ամենավեհ
Լեռան գլխին ահա կանգնած՝
Մտասեվեռ նայում եմ ցած։

Վոտքերիս տակ անշարժ փռվել՝
Տարածվում է անտառն անհոգ,
Վորպես անծայր, փառահեղ գորգ։

Յալթան՝ ամուր ծովին փարվել,
Իր դարավոր ջերմ սիրուհուն
Համբուրում է սիրով անհուն։

Իսկ Այվազյան խանդով վառվել,
Բլրի գլխին նստել խռով՝
Տոչորվում է ծովի սիրով։

Մղվում է ծովն դեպի ափեր,
Յեվ փարվում է Լիվադիային—
Պոսեյդոնը հեքյաթային։

Թե նկատեն Գուրզուֆը պերճ
Յեվ Ալուպկան չքնաղատես,
Կբացվի մեծ կռվի հանդես։

Սակայն ծովը անթիվ դարեր
Սիրահարներ է ունեցել,
Վորոնք յեկել են ու անցել։



Միայն ինքը՝ հավետ ջահել,
Կենսաթրթիռ է մնացել,
Մերթ մրրկվել, մերթ ծփացել։

Միայն ինքը չի դադարել,
Սիրել վորպես յերիտասարդ,
Շղթայազերծ, պարզ ու ազատ։

Ինչե՛ր ասես վոր չի տեսել
Հավերժական այս դեղուհին,
Իր մեծ կյանքի ճանապարհին։

Յեվ իր ծնված որից ի վեր,
Բազմադարյան իր հասակում,
Մի տենչ ուներ նա իր հոգում։

Տենչում եր նա մարդուն տեսնել
Ազատ, հպարտ, հանդուգն ու քաջ
Յեվ խոնարհվեր նրա առաջ...

Յերգի՛ր, յերգի՛ր, ծով անվեհեր,
Հպարտության, սիրո մասին,
Հոգուս, սրտիս հետ միասին։

* * *

*Յես Ղրիմի ամենավեհ*
*Լեռան գլխին ահա կանգնած*
*Զմայլանքով նայում եմ ցած։*

1938 թ. Այ-Պետրի



## ՅԵՐԳ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

*Արեգակը բարձրացավ, բայց դու ինչ խո՛րն ես ննջում,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր,*
*Յերեկ այնպես փոթորկում, յերգում եյիր, մռնչում,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր։*

*Բա՛ց կապուտակ աչքերըդ, թափահարի՛ր ջրերըդ,*
*Կանգնիր վորպես հսկա,*
*Ի՞նչ ես անդորր քնի մեջ յերկնքին սեր մրմնջում,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր։*

*Լճակին է սազական նիրհել այդպես յերազուն,*
*Վորպես աղջիկ քնքուշ,*
*Գրկել թփերը կանաչ, ուռիներ դողդոջուն,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր։*

*Նայիր յեվ տես, ափերիդ, Հայաստանի վարդերից*
*Յե՛վ վառ, յե՛վ թարմ, յե՛վ ջինջ*
*Նոր սիրտ, նոր սեր, նոր մարդիկ են բողբոջում,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր։*

*Տե՛ս, հուզելով ջրերըդ, խանգարեց քունդ խաղաղ,*
*Վերեվ սուրաց հպարտ*
*Ու անցավ քու վրայով պողպատակուռ մի թռչուն,*
*Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր։*

Զարթի՛ր, նորից մռնչա, յերգիր յերգը քաջության,
Յերգը կյանքի, կռվի,
Նորից գրոհի գնա հաղթական ու շառաչուն,
Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր:

Նորից յերկինք բարձրացուր կոհակներդ լեռնացած,
Զրի կամար պատեր.
Առաջ շարժվիր վորպես զորք, վոր ահ-մահ չի ճանաչում,
Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր:

Վանդակապատ առյուծ իմ, յերկրիս մարդը քեզ հաղթել
Սանձահարել ե քեզ,
Վեր կաց, նրան վողջույն տուր, ի՛նչ ես այդպես հառաչում,
Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր:

Յերգիր, յեվ թող քո հզոր յերգին յես ել ձայնակցեմ,
Վորպես մեն մի ալիք,
Լսիր, հոգիս իմ սրտի բերանով ե քեզ կանչում,
Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր:

Տեսնում եմ դու զարթնում ես, ո՛վ դեղուհի կախարդիչ
Զքնաղ, ահեղ տարերք,
Քո փոթորկուն ջրերիդ, ալիքներիդ ջերմ վողջո՛ւյն,
Զարթի՛ր, ծով իմ, զարթի՛ր:

1938 թ. Յալթա



## ԶՐՈՒՅՑ

Ծո՛վ, դադարիր մռնչալուց,
Յեկ այս գիշեր, վորպես ընկեր,
Զրույց անենք մինչ արշալույս:

Ինչե՛ր ասես, վոր չեն յեկել
Քո ափերից անցել Սև ծով,
Վշտից ես դու սեվեր հագել:

Բեռան տակին խոր թախիծով՝
Բազմամիլիոն սերունդներ են
Յեկել անցել քո ափերով:

Սակայն մի օր դու ցնծագին
Վողջունեցիր յերջանկության
Փարոսների նոր աշխարհքին:

Յե՛կ, զրուցենք, ընկեր տխուր,
Պատմիր կյանքիդ հեքյաթն անմահ.
Յես այս գիշեր հյուր եմ քո տուն:

Ել դու մռայլ, սեվ չես հիմա,
Սիրտս էլ մի օր սեվ եր քեզ պես,
Բայց տես, ի՛նչ վառ, խնդուն ե նա:

Ո՛, դու արդեն հանդարտվում ես,
Լսում ձայնըս պաղատագին,
Լուսինն ե լոկ խանգարում մեզ:

Ծովը խոսեց, ականջ դրին՝
Յերկինք—գետին, դաշտ, ձոր ու սար,
Լուրը տարան մեծ անտառին:

— Ինչ տեսել եմ միլիոն դարում,
Ուզում ես դու լսե՞լ, ո՛վ մարդ,
Բայց վո՞նց պատմեմ մի գիշերում:

Դե՛, լավ լսիր,— ասաց հանդարտ,—
Ու սկսեց սիրով պատմել
Կախարդական մի վառ հեքյաթ:

Ամբողջ գիշեր մենակ նստել,
Լսում եյի հեքյաթն անմեռ
Յեվ հիմա էլ նստած եմ դեռ:

Նստած եմ, բայց ծովը չկա,
Բաժանվել ենք մենք իրարից,
Ափսո՛ս, վոր նա ինձ հետ չեկավ:

Չեկավ, բայց տե՛ս, ահա նորից
Կարծես նստել ենք միասին,
Յեվ նա հուզված պատմում ե ինձ
Իր փառավոր կյանքի մասին...

1938 թ.
Յալթա—Յերեվան



## ԴԵ՛Հ, ԳՆԱՔ ԲԱՐՈ՛Վ

Վերևը՝ յերկինք, ներքևն՝ անհուն ծով,
Մթնում փարոսն ե առկայծում, մարում.
Քամուց տեղահան ջրերն թշշոցով,
Վորպես զորասյուն մղվում են հեռուն:

Ա՛խ, ո՞ւր եք գնում, հողմակոծ ջրեր,
Ափերին պլոտի զարնվեք, փշրվեք,
Յեվ քանի՛ դարեր նախորդները ձեր՝
Նույն յերգն են յերգել գիշեր ու ցերեկ:

Կռվի գնացել՝ ափի ժայռերի
Քար—քարափների, սարերի վրա,
Կռվել, մարտնչել, մեռել քաջարի,
Բայց մաշել սարեր, ժայռերն աժդահա:

Ալիքնե՛ր, դուք էլ գնում եք կռվի,
Փոթորկի բացած մեծ ճանապարհով,
Ձեր գլխին հոգիս թող հավետ վառվի,
Վորպես ալ դրոշ, դեհ, գնաք բարո՛վ...

1938 թ.
«Արմենիա» նավ

## ԿԻՊԱՐԻՍ

Կիպարիս իմ, կիպարիս,
Գլուխդ քիչ ցածացուր,
Քեզ հետ խոսում է հոգիս:

Տե՛ս, յերկինքը ի՜նչ լազուր,
Ինչ աստղոտ է այս գիշեր,
Ջուր ես լռել, ա՛խ, խլուր:

Քո կարոտն է ինձ քաշել,
Բերել ափերն հովասուն,
Քեզ հետ կապված են հուշեր:

Չես սվսվում, չես խոսում,
Կիպարիս իմ գեղիրան,
Ո՞ւմն ես արդյոք սպասում:

Գուցե այդպես սրտակեզ
Սպասում ես, վոր քամին
Զարթնքի յե՞րգ ասի քեզ...

Խոսի՛ր, խոսի՛ր, այս ժամին՝
Սիրտս խոսել է ուզում,
Խոսեց յե՛վ ծով, յե՛վ քամին,
Ախ, ել ո՞ւմն ես սպասում...

1938 թ. Յալթա



Ալեկո՛ծ ծով, այս վայրկյանին
Այնքան նմա՜ն ես իմ հոգուն,
Քեզ հուզել է անզուսպ քամին,
Մրրկվում ես ու փոթորկում:

Ինձ վառել է կարոտը խոր,
Անհաս սիրո հուրը վառման,
Ցավ տես, սիրտըս խուլ ու տխուր,
Փոթորկվում է ճիշտ քեզ նման:

1938 թ. Յալթա

## ԿՐԱԿ

Կրա՛կ, աշխարհում քանի չէր ծաղկել կայծըդ առաջին,
Տարերքն էր մաշում, հոշոտում, տաշում մարդ. արարածին,
Բայց մարդու ձեռքին այնպիսի ահեղ մի զենք դարձար դու,
Վորով նա սանձեց հողմը կատաղի, ամպը չանթածին,
Դարձավ բնության ամենակարող արքան անհարկու,
Տիրեց ցամաքներ, գետեր սրընթաց, ովկիաններ անծիր,
Եվ աշխարհով մեկ անցա՛վ հաղթական նրա այրուձին:

---



## ԹԵՎԱՎՈՐԸ

Ցես քեզ եմ յերգում, թեվավոր աղջիկ,
Դու ծով ու ցամաք քեզ ես յենթարկել,
Ցերբ նավդ է սուրում, սարերը վեր—ձիգ
Լուռ խոնարհվում են, իմ հպարտ ընկեր:
Դու սիրտ գարուն,
Կրակ վառվռուն:

Դու նման չես այն անխոս գեղեցկուհուն,
Շրթունքը ծածկած, լաչակը գլխին,
Կնոջ կապանքը ավել ես մահուն,
Խնդուն աչքով ես նայում աշխարհին:
Ցերկինքը պարզ է,
Թռիր, իմ բազե:

Քո ազատ սերը հազար անազատ,
Շղթայված սերեր արժե, բարեկամ,
Ցերբ անցնում ես դու՝ հլու, հնազանդ՝
Ճամբա յեն տալիս ամպեր, ուրագան:
Քո սիրտ դիմաց՝
Արեվը մի կայծ:

Գնում ես ահա մի մեծ ճանապարհ,
Մեր հայրենիքն է քեզ թեվեր ավել,
Սուրա՛, ընկեր իմ, սուրա՛ քաջաբար,
Ամենքից արագ յեվ ամենքից վեր:
Դեհ, գնաս բարո՛վ,
Մեծ ճանապարհով:

## ԸՆԿՈՒԶԵՆԻ

Պապս մի օր մեր պարտիզում տնկեց մի նոր ընկուզենի,
— Ինձնից,—ասաց,—ես ծառը ձեզ թող հիշատակ, նվեր լինի:

Նորից գարնան զառ հավքերն են յեկել թառել մեր սարերին,
Ծիծաղում են աղբյուրները, կանաչել է ընկուզենին,

Պապս վաղո՛ւց հող է դարձել, պապ եմ դարձել ինքս հիմի,
Յեվ թոռներիս հով է անում մի հինավո՛ւրց ընկուզենի:



## ՈՐՈՐ

Որո՛ր, որո՛ր, անուշ բալիկ,
Գիշերն այնպես զով է, զվարթ,
Քուն են մտել սար, ձոր ու արտ,
Եվ չեն խոսում ծովն ու ալիք:

Չեն սվսվում ծաղիկ ու ծառ,
Չի փախչում վոչ մի հավքիկ,
Չեն ծլվլում ծիտ ու ծիծառ,
Որո՛ր, որո՛ր, իմ հույս բալիկ:

Դու իմ կյանքի անգին բարիք,
Մեր պարտեզի վարդերի վարդ,
Յերգ է ասում մայրիկդ անդարդ,
Որո՛ր, որո՛ր, մեղուշ բալիկ:

Աճիր ուրախ, դարձիր մարտիկ,
Մարտում, կյանքում յեղիր անպարտ,
Գիշերն այնպես զով է, զվարթ,
Որո՛ր, որո՛ր, իմ լույս բալիկ:

## ՑԵՐԳ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Սիրում եմ ձեզ, մեր աշխարհի*
*Առույգ, աշխույժ մանուկներ,*
*Դուք նման եք ծաղկած ծառի,*
*Ունեք ժպտուն աչիկներ:*
*Դուք մեր կյանքի վառ պարտեզի*
*Սոխակներն եք ու վարդեր,*
*Մեր խնդության մեծ հանդեսի*
*Դրոշակներն ու զարդեր:*
*Ո՞վ է յերկնից մեր դյութական*
*Այսքան աստղեր թափել վար,*
*Դուք մեր հույսն եք, մեր ապագան,*
*Մեր լույսերը մշտավառ:*
*Դուք մեր վճիտ, քաղցրակարկաչ,*
*Զվարթաձայն առուներ,*
*Դուք մեր յերկրի մշտականաչ*
*Ու ծաղկաբեր գարուններ:*
*Կարկաչեցեք, ուրախացեք,*
*Ո՛վ ժառանգներ աննման,*
*Ձեզ չի դիպչի վոչ մի չար ձեռք*
*Մեր աշխարհում անսահման:*



## ՀՐԱՉԻԿՆ ՈՒ ԵԼՄԻՐԱՆ

*Մի պտղատու խնձորենի*
*Բարձրանում է մեր բակում,*
*Նրա վրա թռչունների*
*Ուրախ խումբն է համերգում:*

*Այդ ծառի տակ խաղ են անում*
*Յերկու մանուկ թրվլան,*
*Յերկու յեղնիկ, ժիր ու նախշուն—*
*Հրաչիկն ու Ելմիրան:*

*Ծեր տատիկը նստած շեմքին՝*
*Այդ ուրախ խաղն է դիտում,*
*Ինչ վոր բաներ կարոտագին*
*Վերհիշում է ու ժպտում:*

*Սվսվում է հովը թեթև,*
*Զովաշունչ ու սրտաբաց,*
*Խնձորենուց, ինչպես թիթեռ,*
*Ծաղիկներ են թափվում ցած:*

*Ցած են թափվում Ելմիրիկի*
*Վոսկեզանգուր մազերին,*
*Հրաչիկի փափլիկ, անգին*
*Թաթիկներին, ուսերին:*

Մեր յերջանիկ հայրենիքում,
Արևի տակ հուրհրան,
Մեծանում են, հասակ առնում
Հրաչիկն ու Ելմիրան:



## ՈՁՆ ՈՒ ՁՈՒԿԸ

Որվա մի որ յեղեգնուտում
Ոձն ու ձուկը յեղբայր դարձան.
Դուրսն արևոտ, ուրախ, ժպտուն,
Ցերկնի մեջքին՝ վառ ծիածան:

Ոձը ասավ. «Ով յեղբայր ձուկ,
Ինչ կլինի, վոր ինձ ես գուրկ,
Նեղլիկ, անլույս բնից հանես
Ու չալակես, առնես տանես
Էն լայնարձակ ծովի գրկում
Լավ ման ածես մինչ իրիկուն»:

Ձուկը ասավ. «Լավ կլինի,
Յեկ, չալակեմ առնեմ–տանեմ.
Կապույտ ջրում քեզ ման ածեմ,
Մոտցիր ղարղերդ հազար ու մի,
Տես, մեր ծովը ինչեր ունի»:

Ոձը ծալվեց ողակ–ողակ,
Ամուր նստեց ձկան մեջքին,
Ձուկը ծովը մտավ արագ,
Ծովն անսահման, ծովն ահագին:

Քիչ գնացին, ոձը հանկարծ
Ձկան ծոծրակը սուր խայթեց,
Ձուկը ցավից տխուր տնքաց,
Ասավ. «Ինչո՞ւ ինձ կխայթես,
Յես քեզ վատ բան հո չարեցի՞»:

— Ներիր, յեղբայր, սխալվեցի:
Քիչ գնացին, մեկ էլ խայթեց:
Ձուկն ասավ. «Ոձ բարեկամ,
Սխալվեցիր, էսկ այս անգա՞մ...»
Ասավ. «Արեվն գլուխս սեղմեց»:
Քիչ գնացին, նորից խայթեց.
Ձուկը ասավ. «Ոձ, վերջապես
Ասա, ինչո՞ւ ինձ կխայթես»:

—Իմ բնույթն է, ասավ ոձը,
Պոչը դրեց ձկան ծոցը:
— Վոր բնույթդ է, սոդուն ճամբորդ,
Յես էլ ունեմ իմ բնույթը:
Ու ահա տես,— ասավ անխույթ
Յեվ լուռ սուզվեց խոր անդունդը:

Ոձը խեղդվեց ու անծպտուն,
Ինչպես ուռած, փքված դդում,
Ջրի յերեսը բարձրացավ:
Ձուկը ծաղրով նրան ասավ.
— Վո՞նց եր ծովի խոր անդունդը...
Գնա, սա էլ իմ բնույթը:



## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Ամռան մի որ առյուծը վեհ,
Փառավոր ճաշն ուտելուց վերջ,
Զով անտառում յերկար փռվել՝
Խամփում եր խոր քնի մեջ:

Այդ ժամանակ մի պստիկ մուկ
Դուրս է գալիս մութ անկյից,
Զվուշաբար ու անաղմուկ
Քնածի մոտ վազում կողքից:

Սիրտ է անում մկնիկը խեղճ,
Բարձրանում է նրա մեջքին,
Ման է գալիս փորին, կրծքին,
Գալիս, նստում ականջի մեջ:

Մի աննշմար ցավ է զգում
Անապատի ահեղ արքան,
Բարկանում է այդ ահարկուն՝
Թաթը պարզում, բռնում մկան:

Բռնում է, բայց չի սպանում
Առյուծն ամեն ձեռք ընկածին.
«Անխանս պատիվ, փառք չի բերում,
Թե ջարդեմ այս անխծվածին:

Այս չնչինը ինչի՞ս է պետք,
Ձենք հանդիպալ ել մենք յերբեք»—
Ասում է են սարն ահագին
Ու բաց թողնում մեր մկնիկին:

Այդ որից մի, թե մի քանի
Տարիներ են գալիս–գնում,
Մի որ առյուծն իր կորյունին
Վորոնում է ու չի գտնում:

Վորոնում է շատ վշտացած,
Կտրում ձորեր, դաշտերն անվերջ,
Անտառ մտնում. մեկ ել հանկարծ,
Դրը՛մբ, ընկնում թակարդի մեջ:

Յեվ իր սեղմվող վոտքի ցավից
Այնպես գոռում է, մռնչում,
Վոր լողները սարսափից
Թեվ են առնում, հեռո՛ւ փախչում:

Յեվ անտառում խլանում են
Թռչունի յերգ, առվի կարկաչ,
Առյուծի ձայնն ընկնում է են
Թշվառական մկան ականջ:

Մոտ է վազում, յեվ ի՛նչ տեսնի,
Բարերարը մահվան դռան.
Մտածում է, թե վո՛նց անի,
Վոր ողնության հասնի նրան:

Մեր մկնիկը, այն սուս–փուսը,
Գաղտագողի ու աննկատ
Ներս է սողում այն խոր փոսը,
Ուր դրված էր մի մեծ թակարդ:



Կրծոտում է ու կտրատում
Կաշե փոկերն ամեն կողմից,
Յեվ առյուծին շուտ ազատում,
Տանջող, մաշող գերությունից:

Անապատի վեհանձն արքան
Մկան բարիքը տեսնելով,
Զգացվում է, հուզվում այնքան,
Յեվ ասում է մռնչոցով.

— Ճշմարիտ վոր ամենախեղճ,
Ամենափոքր եյակն անգամ
Իր տեղում վեհ, քաջ է ու մեծ:
Շնորհակա՛լ եմ, մուկ բարեկամ:

## ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1

Խնդասիրտ, պոետ տղա,
Վորտեղից՝ վորտե՞ղ հասար,
Անդունդից վե՞ր բարձրացար,
Խնդասիրտ, պոետ տղա:
Քո ձեռքը թող չդողա,
Գրիր դու յերգեր հազար,
Խնդասիրտ, պոետ տղա,
Վորտեղից՝ վորտե՞ղ հասար:

2

Իմ կյանքը՝ գիշե՛ր եր մութ,
Դարձավ մի անվերջ ցերեկ,
Ինձ փրկեց մի հզոր ձեռք,
Իմ կյանքը՝ գիշե՛ր եր մութ:
Իմ վիշտն եր՝ անտակ անդունդ,
Իմ սիրտը՝ վիթխարի վերք,
Իմ կյանքը՝ գիշե՛ր եր մութ,
Դարձավ մի անվերջ ցերե՛կ:



3

Մահից դու, դո՞ւ վախեցիր,
Հին աշխա՛րհ, մահվան ավա՛ր,
Իմ սրտում կրակ կա վառ,
Մահից դու, դո՞ւ վախեցիր:
Ովկիանում խոր ու անծիր,
Յես խիզախ մի նավավար...
Մահից դու, դո՞ւ վախեցիր,
Հի՛ն աշխարհ, մահվան ավա՛ր:

4

Վառվում է հուրն իմ հոգու,
Վորպես մի անշեջ ոջախ,
Հույզերըս մշտածիծաղ,
Վառվում է հուրն իմ հոգու:
Ցրել եմ վիշտն ահարկու,
Դարձել եմ հավետ ուրախ,
Վառվում է հուրն իմ հոգու,
Վորպես մի անշեջ ոջախ:

5

Ցերգեցե՛ք, գարնան ջրեր,
Հոգիս՝ վառ յերգ է տենչում,
Ցնծալի ու շառաչուն,
Ցերգեցե՛ք, գարնան ջրեր:
Սիրում եմ քայլերգը ձեր,
Ալիքներ բազմահնչյուն,
Ցերգեցե՛ք, գարնան ջրեր,
Հոգիս՝ վառ յերգ է տենչում:

6

Գարո՛ւն, քեզ շատ եմ սիրում,
Նման ես ջահելության,
Թանկագին հյուր ես իմ տան,
Գարո՛ւն, քեզ շատ եմ սիրում:
Փռվել ես մեր սարերում,
Մշտական հյուր կաց իմ տան,
Գարո՛ւն, քեզ շատ եմ սիրում,
Նման ես ջահելության:



7

Դու խնդուն, խիզախ յեղիր,
Գլուխըդ պահիր հպարտ,
Վորպես նոր աշխարհի մարդ,
Դու խնդուն, խիզախ յեղիր,
Պատրա՛ստ կաց, զենքդ յուղիր,
Մեր առաջ կա ահեղ մարտ,
Դու խնդություն, խիզախ յեղիր,
Գլուխըդ պահիր հպարտ:

## ՍՈՆԵՏՆԵՐ

### 1

Գեղջկուհին՝ ճամբին ցած ընկավ հանկարծ
Յեվ կավե կուժը ջարդ–փշուր արավ.
Նայեց, լաց յեղավ, սակայն իր կոտրած
Կժի կանթն առավ, սուգով տուն տարավ:

Ընկե՛ր իմ, կյանքի կես ճանապարհին,
Վերահաս մահը քեզ ինձնից խլեց,
Յեվ դեռ չհասած սիրո աղբյուրին,
Սիրտդ կանգ առավ ու ընդմիշտ լռեց:

Տուն վերադարձա: Յեվ այն աղջկա պես՝
Մի փունջ վերցրի քո գանգուրներից,
Վոր նայեմ նրան ու միշտ հիշեմ քեզ:

Յեվ ամուսնացա, չկար ուրիշ ճար...
Կինըս վաղուց է վարսերդ վառել,
Բայց յես քեզ հիշում, հիշո՛ւմ եմ դարձյալ...



### 2

Ձյունի փաթիլներ, ձմռան թիթեռներ,
Ոդում պարելով իջնում են գետին՝
Հայացքըս հառած մշշացող գետին՝
Պատասխանիս դեմ լռել եմ, կանգնել:

Ալիքների հետ մտքերս են թռչում,
Յես քեզ եմ հիշում, իմ առաջին սեր,
Հոգուս ծաղկոցից փնջեր եմ հյուսել,
Յեկ, անվերադարձ չված իմ թռչուն:

Ջրերն են սուրում, դու չկաս, Իդա,
Մշուշն է փռվում, դու չես յերեվում,
Գիշերն է գալիս, բայց դու ո՛ւր ես, ո՞ւր:

Գիտեմ, թույլ մարդուն յերբեք չես գթա,
Հպարտության ես գլուխ խոնարհում,
Գիտեմ, բայց հուսով սպասո՛ւմ եմ լուռ...

3

Այսօրն էլ անցավ և ե՛լ յետ չի գա,
Դու առաջ նայիր, վորոնող հոգիս,
Հետեվ նայելուց քեզ օգուտ չկա,
Քայլիր քո ճամբան՝ առույգ ու հանդիստ:

Այս օրը լավ եր, վաղն ավելի լավ,
Ավելի չքե՞ղ կլինի, հոգի՛ս,
Կյանքիս յերեկը ցուրտ ձմեռ յեղավ,
Հիմա տոնական շորեր կան հագիս:

Միշտ առաջ գնա, խիզախ, անվրդով,
Ձիգով բարձրացիր կատարը սարի,
Կյանքի չքերթը՝ ընդունիր խինդով:

Այս կյանքի մի օրն՝ անցյալի տարիք,
Դարերը արժե․ սի՛րտ իմ, դուրս արի
Խոհերի խուցից, գնանք հարսանիք:



# ԳԱԶԵԼՆԵՐ

1

Մանկությո՛ւն իմ քնքշագին, յես քեզ ինչպե՞ս մոռանամ,
Ցավով լցրիր իմ հոգին, յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Դեռ չծաղկած թոշնեցիր, հանդար ինչպես վորբ մանուկ,
Կարոտ խինդի կրակին,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Պահմտոցիկ խաղ չարիր, թիթեռ, ծաղիկ չտեսար,
Կարկտահար սոխակ իմ,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Փափագ, փափագ մնացիր քեզ ժպտացող աչքերի,
Մայրական ջերմ գգվանքին,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Մրրիկ պայթեց քո գլխին, խնդության սով մնացիր,
Վշտի թրով քեզ զարկին,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Ու հիմա յերբ նայում եմ մանկանս անուշ աչքերին,
Դե՛մս ես կանգնում անմեկին,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Կուզեյի քեզ հանդիպել այս խանդավառ օրերին,
Քեզ արեվ տալ, իմ անգին,—յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Կուզեյի, բայց, ա՛խ, ափսոս, գիտեմ, վոր էլ վոչ մի օր
Հետ չե՞ս դառնա դու կրկին,— յես քեզ ինչպե՞ս մոռանամ:

## 2

Գարնան գալուստն ավետարանող ծիծեռնակին հազար վողջո՛ւյն,
Ձյունի տակից մեղմ ժպտացող ձնծաղիկին հազար վողջո՛ւյն:

Սարից իջնող առվակներին, աղբյուրներին անմահական,
Քամուց ճոճվող, գեղահասակ բարդիներին հազար վողջո՛ւյն:

Վերադարձող կռունկներին, մանկուց ծանոթ արագիլին,
Մրջյուններին, չարաճճի ճնճղուկներին հազար վողջո՛ւյն:

Նորափթիթ աղջիկներին, մանուկներին քաղցրակարկաչ,
Բազմավաստակ ու բազմափորձ ծերուկներին հազար վողջո՛ւյն:

Այս վայրկյանին աշխարհ մտնող խոսուն-անխոս եյակներին,
Սիրո բաժակը նոր ըմպող ջահելներին հազար վողջո՛ւյն:

Մարդուն, մարդուն, սառույցներին, անապատին տիրող մարդուն,
Խենթ տարերքը սանձահարող, անհաղթ մարդուն՝ հազար վող-
ջո՛ւյն:



## 3

Վառ ամառ է, վառ ամառ, շատրվա՛ն իմ, շատրվա՛ն.
Շուրջըդ ծաղկունք անհամար, —շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Շուրթերիցըդ դուրս ցայտող ջրերը ջինջ, քչքչան,
Սուրում են վեր, թափվում վար,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Դու յերգում ես, քո յերգը լսում է սիրտըս զուլալ,
Կանաչները արևհար,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Նայում ես դու մեր խնդուն մանուկներին խաղացող,
Յեվ ժպտում ես վորպես մայր,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Կգա դեղին աշունը, այգում քամին կսուլե,
Կտխրի սիրտըդ մարմար,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Վեր խոյացող ջրերը ձմռան ոդում կսառեն,
Կլռի յերգըդ անմար,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

Բայց կգա վառ գարունը, սառցե շղթադ կփշրե,
Նորից կերգես խանդավառ,— շատրվա՛ն իմ, շատրվա՛ն:

## ՏԵՐՑԻՆՆԵՐ

1

Այս դունադեղ վերջալույսին,
Ճյուղերը փռած պատշգամբիս՝
Սվսվում է կանաչ սոսին։
Սպասում եմ, դու չե՛ս գալիս,
Տխրում եմ յես ու կարոտում,
Զայրանում եմ, բայց չե՛մ լալիս։

Իմ նոր գրած յերգն եմ կարդում՝
Յերջանկության, սիրո մասին,
Նայում է ինձ՝ անհոգ ժպտում
Սվսվացող կանաչ սոսին։



2

Դու իմ բլբուլ քաղցրաձայն,
Դու իմ գարուն զվարթուն,
Դու իմ սրտի ծիածան,
Դու կենսատու խնդություն,
Դու վարդերի թովիչ բույր,
Դու սեվ մահվան հակաթույն․

Դու գրնգուն ջինջ աղբյուր,
Դու առաջին կրակի
Առաջին կայծը հուրհուր․
Գրկի՛ր, բալիկ, ինձ գրկի՛ր,
Նայիր վճիտ յերկնքին,
Ինձ համար մի յերգ յերգիր,
Մատա՛ղ լինեմ քո յերգին։

3

Խաղաղ ծովի ափին նստած՝
Խոհերիս հետ եյի խոսում,
Հանկարծ մեկը նայեց՝ ժպտաց:

Սիրտըս, սիրտըս ակնաթարթում
Ճանաչեց քեզ, իմ բարեկամ,
Իմ կորցրած յերջանկություն:

Բարեվեցիր, ձեռքդ ինչքա՛ն,
Ինչքա՛ն տաք եր, ինչքա՛ն նրբին,
Թարթիչներդ՝ սրտի ուռկան:

Յեվ նստեցինք ծովի ափին,
Իրար գրկած, աչքը հառած՝
Հեռուն մեկնող նավի ճամբին:

Ալիքների յերգով արբած՝
Զրուցեցինք յերկար, յերկար,
Բայց ա՛խ, ափսոս, հուրն եր հանգած
Յեվ մեր նախկին սերը չկար:



# ՓՈՔՐԻԿ ՅԵՐԳԵՐ

***

Ջահել կրծքիս տակ կա վճիտ գետակ, ծաղկած ծառերի մի
չքնաղ պարտեզ
Յեվ այդ հոլասուն կանաչ պարտեզում կա մի ցնծալի մեծ տո-
նահանդես,
Ո, այդ իմ սիրտն է, անցյալում այնքան վիշտ ու ցավ տեսած
սիրտս հրակեզ,
Վոր քեֆ է անում, յերգ է հորինում ու խմում կյանքի գինին
փրփրադեզ:

***

Յես դառնացել; շատ եմ լացել կյանքի բովում,
Բայց ահա արդ՝ յես այս զվարթ կյանքն եմ գովում,
Անցյալ վիշտս, ներկա խինդս, յերգս վկա՝
Կյանքից քաղցր, կյանքից բարձր վոչինչ չկա:

***

*Անցյալում յես շատ եմ տառապել, թախծել,*
*Վաղուց եմ հագեցել այդ թունոտ ջրից,*
*Յես հիմա ցնծության յերգիչ եմ դարձել,*
*Տխրությունը յերբեք ել չի գտնի ինձ։*

***

*Իմ հայրենի սրնգահար գառնարածներ,*
*Յես այս գարնան ուզում եմ ձեզ ընկեր լինել.*
*Արշալույսին, վորպես մանուկ պարզ, սրտալցաց,*
*Ընկնենք ճամփա, գնանք դեպի կանաչ լեռնե՛ր։*



***

*Դառնակսկիծ սեվ կարիքից ծնված հույզեր հոգետանջ,*
*Վորպես ձեթի խեղճ ճրագներ միշտ արտասվում եք սրտանց,*
*Հին հուշերով հարուստ միտքս չի՛ կարող ձեզ մոռանալ,*
*Բայց ապագա մարդու հոգում ձեր շուքն անգամ չի մնա։*

***

*Կարող ես կատաղի վագրերը բանտարկել,*
*Պատվարել ովկիանի հորձանքը մռնչուն,*
*Բայց սիրո ծաղկոցի սոխակը վանդակել*
*Չես կարող, սիրելիս, իզուր ես մարտնչում։*

***

Համայնական հասուն հասկեր, դուք յերգեցեք,
Ցես կարոտ եմ մտերմական ձեր նուրբ ձայնին,
Իմ յերազուն հոգու լեզուն դուք լավ գիտեք,
Հազար փողջո՜ւյն ձեր աննկուն սերմնացանին։

***

Ասե՛ այդ ո՞ւր ես այդպես շտապում լեռնային գետակ,
Կանգ առ, զրուցենք այս ուռիների զով շվաքի տակ․
Դու շատ ես հախուռն, մենք իրար լեզուն լավ կհասկանանք,
Բայց նա քրքջաց, հորձանքեց, գնաց կոհակ առ կոհակ։



***

Մանկությունս՝ ամպերից,
Շողքից շինված մի պալատ,
Խորտակվեց խենթ հողմերից,
Կյանքում դժնի, մխջապատ։

***

— Արծի՛վ, ո, արծի՛վ, ինչո՞ւ ես այդպես շվարել,
Թևերըդ կծկել, մշմռապատ ժայռին ծվարել․
— Ո՛, մարդ, յես՝ արքա ամբողջ աշխարհի հավքերի՝
Տեսա գալիս ես, լալիս եմ, վորպես մի գերի։

***

Հայրենասեր հոգուս հույզեր, իմ արծիվներ անկաշկանդ,
Ձեզ դյութում է խիզախության թռիչքների մի գագաթ,
Դուք ճախրում եք, սավառնում եք,— մեր աշխարհում վառ
ու վեհ,
Անդունդ չիջնեք, միշտ բարձրացեք կատարներից վեր ու վեր:

***

Ո՜վ ալեկոծ ովկիանոսի լեռնակուտակ կոհակներ,
Մրցավազքի դաշտ դուրս յեկած փրփրաբաշ նժույգներ,
Դուք մաշում եք ափերը սեպ, փշրում ժայռեր վիթխարի,
Վողջո՜ւյն ձեր այդ հավետ ազատ փոթորկահույզ աշխարհին:



***

Ինչքան տանջանք, ծանր խոնջանք տարել եմ յես,
Ինչքան բաղձանք, վառ անրջանք թաղել եմ յես,
Բայց անվհատ միշտ ձգտել եմ դեպի արեվ,
Յեվ քեզ, վիշտ իմ, մութ ու չարաչք, դաղել եմ յես:

***

Ո՛վ իմ հույզեր ալեկոծ,
Վողջո՛ւյն ձեզ իմ ջերմ հոգուց.
Յելեք, յելեք դըրոհի
Դեպի պայքար, դեպի գործ:

***

Սիրելի մուսա, ինչո՞ւ ես կանգնել ու խոր մտորում,
Դու այդպես հանկարծ ի՛նչ հիշեցիր այս կես ճանապարհին,
Քայլիր, բարեկամ, նայիր այն լեռան ձյունոտ կատարին,
Դեռ ինչքա՜ն պիտի գնանք, որ հասնենք այդ աստղոտ հեռուն։

***

Իմ տառապալի, անշող անցյալի գիշերում մռայլ,
Դու՝ մշտավառ լույս, դու՝ մեղրահոս գետ, իմ սիրելի մայր․
Անցյալի նավը խորասուզվում է մոքից ովկիանում,
Բայց դու, չքնաղ մայր, նավի վրայից ձեռքով ես անում։



***

Ինչքան սրեր կրեմ յես անձնական ցավից,
Ինչքան կանչես աչքերիդ մութ քարանձավից,
Իմ ճակատի յերկնքում չես տեսնի սեվ ամպ․
Ցես աշխարհին կնայեմ անհուն ցնծությամբ։

***

Սիրում եմ քեզ, խարտյաշ կայծակ,
Ցեվ քեզ, մրրիկ մոլեգին,
Դուք ըմբոստ եք ու համարձակ,
Ինչպես հպարտ իմ հոգին։

***

Սիրում եմ քեզ, ծովի հորձանք,
Եվ ձեզ, գետեր լայնահուն,
Դուք նման եք իմ հերարձակ,
Խստաբարո սիրուհուն:

***

Նշենիներ, մասրենիներ, դուք լոկ գարնան եք ծաղկում,
Վարդենիներ, լոկ գարնանն է սոխակը ձեզ գուրգուրում,
Իսկ յես այլ եմ, միշտ արեվոտ առավոտ է իմ հոգում,
Սրտումս հույզի, վառ յերազի աղբյուրներն են համերգում:

***

Ալեկոծ ծով, մի՛ տրտնջա, հանդստացիր,
Վորպես ընկեր՝ բաց քո սրտի դռներն անծիր.
Զրույց անենք, ու խոսքերից այդ մտերիմ
Մի յերգ հյուսենք՝ թողնենք գալիք սերունդներին:



## ՍԻՐԵԼԻՆԵՐ

## ՇՔԱՆՇԱՆ

ՍԻՐԵԼԻ ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻՆ

Քնքուշ յերգիչ, են վո՞ր դարում, վո՞ր աշխարհում՝
բանաստեղծին

Պարգևվել են փառքի, պատվի, հերոսության շքանշան.
Խիզախ խոսքի, յերգի համար մեծ Պուշկինին սպանեցին,
Նալբանդյանը և Շևչենկոն աքսորներից հետ չդարձան,
Մեծ Բայրոնին իր հայրենի տնից հավետ դուրս քշեցին,
Շահից խաբված, խոցված մեռավ Փարսի սոխակը՝ Ֆիրդուսին:
Անկրկնելի մեր Դուրյանը հանգավ՝ պատառ հացի կարոտ,
Յերազելով մի տաք անկյուն, արև, գարուն ու առավոտ:
Աշխարհում լոկ գարնանածին հայրենիքը մեր անսասան՝
Իր հարազատ յերգիչներին պարգևում է շքանշան:
Շքանշանը քո կրծքին, վորպես դրոշ, միշտ պահիր վառ,
Հայրենիքին տուր նոր յերգեր՝ ավելի ջինջ ու կենարար:

## ՊՈԵՏ

Յերկրում տիրում էր դաժան, դարեր տեվող ցուրտ ձմեռ,
Բուքը խեղդում էր, խեղում ամեն խիզախ հույզ ու միտք,
Ամենուրեք բանտ, աքսոր, լրտես, մտրակ, շղթաներ,
Կյանքն անփարոս, տարտարոս, յերախում, մահ, արհավիրք,
Հոգիների առեվտուր, սեվ կեղծիքի խրախճանք,
Սրբագործված բռնություն, սարկություն ու տանջանք:

Յեվ այդ անդուսպ ժանտախտի, հոգու սովի սեվ պահին,
Յերբ մեռած էր յերկիրը, ինչպես սառը դամբարան,
Վորպես գարնան զեփի յերգ ու մարտակոչ սեվ մահին
Հնչեց ձայնը պոետի. «Քաղցր է քեֆը ցուրտ ձմռան»...
Յեվ գինով լի գավերի խնդուն զարկով նա յերգեց
Յե՛վ ժանտախտի հիմնը խենթ, յե՛վ մարտ, յե՛վ վիշտ դառն
ու մեծ:

Ովկիանների խորությամբ, հանճարների բարձրությամբ
Յերգեց սերը, նախանձը, ժլատությունը դաժան,
Վորպես ողը շիկացնող կայծակներով հղի ամպ,
Գարնան գալուստն ավետող ծիծեռնակի դյութիչ ձայն,
Վորպես հոգին բորբոքող, հրապուրպուր, վառ գինի
Հոգու խավարն արեվեց պայծառ յերգը Պուշկինի...

Նա հեղձուցիչ խավարում վառվեց ինչպես մեծ հրդեհ
Ու իր վրա սեվեռեց բազմամիլիոն հուր աչքեր,
Ո, այդ յե՞րբ էր ռուս լեզուն այդքան աճել ու հորդել,
Այդքան հղկվել ու կոփվել, այդքան հնչեղ կարկաչել.
Յե՞րբ էր խոսքը պոետի յեղել այդքան դյութական,
Յե՞րբ էր այդքան մոտեցել յերգով հեռու ապագան:



Սրտում հույսի, հույզերի ու ընդվզման բորբ ածուխ
Շրջեց ծովեր, յերկրներ այդ իմաստուն մարգարեն.
Խոսքի լեզվի սվինով ու քնարով վոսկեձույլ
Վախկոտության, կեղծիքի, սողալու դեմ մաքառեց.
Իր յերգերի կրակով այրեց սրտերը մարդկանց,
Բազմադարյան գլխերում վառեց լույսերը հանգած:

Նա Կովկասյան լեռների բարձունքներից ձյունափառ
Դիտեց անսանձ հեղեղը, շանթի ծնունդը ահեղ,
Կիրճում խեղդվող Թերեքի ալիքներից խոլապար,
Ժողովրդի յերգերից, հեքյաթներից գունագեղ
Հմայելու, այրելու վարպետությունն ուսանեց,
Առորյայի խոպանում գալիքի հունդը ցանեց...

Նա Սիբիրում տառապող ընկերներին իր հերոս
Հպարտ, խիզախ ապրելու, մաքառելու յերգ տվեց,
Ռիլեյեվին, Պեստելին պաշտեց վորպես արշալույս,
Նրանց պարզած դրոշով դեպի գալիքը թեվեց,
Իր վիթխարի ցասումով նա նզովեց թագ ու գահ,
Ասպետի պես խոյացավ դեպի կռիվ, դեպի մահ:

## ԴԱՇՂՑԻՆ

Արևմտադաշտին պայծառ Դաշտին
Ճեմում է դանդաղ ու մտասևվեռ,
Կորպես փողձուսյնի նշանն առաջին՝
Արտուտն է յերգով ճախրում դեպի վեր:

Թափառում է նա լեռների լանջին,
Վոսկեվորության նեկտարով արբած,
Յեվ բնությունը իր սիրած յերգչին
Դիմավորում է ջերմ ու գրկաբաց:

Ջրերը հանկարծ լեզու յեն առնում,
Կանաչ արտերը ալվում գվարթ,
Ծաղկած ծառերը ճյուղեր խոնարհում,
Կոկոնը պատռում, ժպտում է մի վարդ:

Սաքոն ու Սարոն, Անուշն ու Մարոն,
Թմկա Թաթուլը, Դավիթ Սասունցին՝
Մոտեցան նրան սիրով անմարում,
Անթառամ ծաղկի փնջեր մատուցին:

Ժողովուրդների համերաշխության,
Գալիք խնդության յերգն է շրթունքին.
Մտերիմ է այդ մարգարեն տխտան
Մարդուն, մրջյունին, թռչունին, ծաղկին:



Յեվ լսում է նա. հովիվը սարում,
Մաճկալը արտում, բանվորը հանքում,
Ծերեր, ջահելներ, մանուկներ սիրուն
Նրա յերգերն են սիրավառ յերգում:

Ճեմում է. ահա Թավուտ անտառից
Իջնելով դեպի ձորն անդնդախոր՝
Մռայլ, մամռապատ ժայռի կատարից
Դիտում է դեպի հորձանքները խոր:

Դիտում է յերկա՛ր... Հանկարծ ժպիտի
Հրով լցվում են աչքերը նրա.
Յեվ տես, հնադանդ ծերուկ վարպետին՝
Մի ամբողջ աշխարհ կռավի վրա...

## ՆԿԱՐԻՉ

Սրահում նստել եմ լուռ ու զվարթուն,
Վարպետի նկարներն եմ գերված դիտում․
Այդ բազում նկարներում՝ անմահությամբ
Ծնչում է, շշնջում է վողջ հայրենին…
Ահա տես, Արարատը՝ գլխին մի ամպ,
Ամպից վեր՝ յերկնածովի ջինջ հայելին,
Ահա տես, բլուրների պարը չքնաղ,
Ամեն կողմ հուշարձաններ քարաքանդակ,
Յերազուն ծառախմբեր այնքա՜ն խաղաղ,
Հակինթյա հյութեղ խաղող, վճիտ գետակ:

Ահա տես, մեր հայկական շուրջպար բռնած՝
Հարսները լաչակավոր, ավանդապահ․
Ու հեռվում՝ հերկված հանդում հպարտ կանգնած՝
Գեղջուկը ջուր է անում՝ ձեռքին մի բահ:
Հասկերի ծովն է ահա մեղմ ալեվում,
Բազմալուծ գութանները վարում են հար,
Ծանրաշարժ գոմեշների հևքն է լսվում,
Յեզները՝ այնքան վատուժ, այնքան նիհար:

Ահա տես հսկա ժայռեր արևակեզ,
Աշունը՝ վոսկեհանդերձ, տխրաթախիծ,
Գարունը՝ կարծես խոսում, կանչում է քեզ,
Կաքավներ դուրս են պոռթկել կոկոններից:
Ահա տես, ձորերը խոր, խորհրդավոր,
Սեպ ժայռեր ու կածաններ ոձագալար,
Յեվ վորպես տրտում ու հեզ մի ուխտավոր՝
Յերգում է ճախարակը մեր միալար:



Յեվ նայիր, արևն ինչպես հալած վոսկի,
Ներկել է յերկինք՝ գետին, սար, ձոր ու արտ,
Ականջ դիր, լսո՞ւմ ես ձայնը գետակի,
Գիշերը այնքան անո՜ւշ, այնքան հանդարտ,
Բնության հրաշագեղ, շքեղ ծոցում՝
Տառապում, տրտնջում է մարդն անազատ,
Յեվ տես, խոր տխրությունն է լուռ ուղեկցում
Այդ խոսկան նկարներին արևադարդ:

Բայց ահա, վորպես կյանքի գարնանաբեր,
Բացվում է արշալույսը մեր աշխարհին,
Ժողովուրդն անհուն, անզուսպ խինդով արբել՝
Քանդում է, խորտակում է աշխարհը հին:
Վարպետին դյութում են այդ մարդիկն արի,
Նոր շունչ է առնում նրա վրձինը վառ,
Ջերմորեն վողջունում է նոր աշխարհին,
Գույները դառնում են ջինջ ու անսպառ:

Յեվ նայիր, Զորագեսը խորունկ ձորում,
Ջրերի վարարումը՝ լույսերի ծով
Աստղե՞րն են որ ցերեկով այդպես ցոլում,
Հաղթության կա՞ռքն է անցնում զնգոցով…
Պարում են ջահել ու ծեր, մանուկ ու կին,
Ողողվում մի ինքնաբուխ խինդով արբած,
Վերջ չկա ժողովրդի պարին, յերգին,
Ցնծությո՜ւն լուսաբացից մինչ լուսաբաց:

Նայիր, ի՜նչ հոգեջինջ է կոլխոզուհին,
Բամբակի ճերմակ վարդ է հավաքում նա,
Խաղողի վողկույզները բռնած ձեռին՝
Ժպտում է ցնծուն հոգու ժպտով անմահ․
Գույների հազարերա՜նգ, հանճարեղ խաղ,
Լույսերի խոսող-հոսող պայծառություն,
Բնության տեսարաններ այնքա՜ն չքնաղ,
Լույսերի, յերազների՜ առատություն:

Ահա տե՛ս այն գործագործ թուրքմենուհուն,
Հյուսում է կյանքի, բախտի գորգը նրբին.
Մատները այնքան աշխույժ, այնքան սահուն,
Աչքերին կնախանձի դարնան արփին.
Ահա տես, ժողովուրդներ յեղբայրակից,
Հայրենի հզորազոր յերկրին անծայր,
Խմում են յերջանկության հորդուն ակից,
Նկարից նայում են քեզ այնքա՜ն պայծառ։



## ՔՅԱՄԱՆՉԱ

Ահա գալիս է քյամանչյան ձեռքին՝
Պայծառ աշուղը, մեր Սայաթ-Նովան.
Ո՞վ չի նախանձի այդ մարդու յերգին,
Բայց ո՞վ կհասնի այդ աստղոտ անվան։

Մայրական սիրո նման ջերմ է նա,
Վարդաստանի պես վառ ու կախարդիչ,
Նրան սիրում են ռազմիկներ անահ,
Աղջիկներ ճկուն ու գեղաթարթիչ։

Նրան սիրում են հիվանդներ թախծոտ,
Հողի մշակներ, հորթարած, չոբան,
Մանուկներ անբիծ, բանվորներ բոցոտ
Ցե՛վ պարտիզպանը, յե՛վ փիլիսոփան։

Հարսանիքներում, խնճույքներում մեր,
Թե՛ ձախորդության, թե՛ քեֆի ժամին,
Նստում է մեզ հետ Սայաթը անմեռ,
Խփում քյամանչի վոսկի սիմերին։

Նա վորպես սիրո հույզի անշեջ հուր՝
Միշտ տաք է պահել յե՛վ սիրտ, յեվ խրճիթ,
Ու վորպես յերբեք չսառչող աղբյուր
Հոսում է հանդարտ յե՛վ ջինջ, յե՛վ վճիտ։

Ո՛վ գեղեցկության անմահական մայր,
Ժողովրդական յերգի Արամազդ,
Տես, հպարտության ցնծությամբ անմար՝
Կանգնել է քո դեմ կախարդված մի մարդ։

## ՍՐՆԳԱՀԱՐ

Լսում եմ ահա մի հոգեզմայլ,
Մի չնաշխարհիկ, մեղմի՛կ յեղանակ
Գո՞ւցե յերգում է հեզահամբույր մայր,
Կամ սիրատոչոր, սրտահույզ սոխա՞կ:

Սարի հովե՞րն են այդպես մրմնջում,
Թե՞ փսփսում է արտն ալեծածան,
Մեծ քարավանի զանգե՞րն են հնչում,
Թե՞ մորմոքում է աշունը դեղձան:

Հարսանի՞ք է այդ հայկական գյուղում,
Լացն ու ծիծաղը խառնըված իրար,
Դալուկ տերե՞վն է հողմի դեմ դողում,
Թե՞ կարկաչում է առուն մեղմալար:

Շամբո՞ւտն է արդյոք յերգով վողջունում
Արեվածագի շողերն առաջին,
Թե՞ կռունկների յերամն է յերգում
Այնպե՛ս կարոտով, այնպե՛ս տխրածին:

Քամի՞ն է լճի սիզտն ալեկոծում,
Թե՞ սվսվում է գլխահակ ուռին,
Ժիր մանուկնե՞րն են ուրախ ձայնակցում
Իրենց կորամեջք տատի որորին:



Պանդո՞ւխտն է գուցե այդպես մղկտում՝
Ցուրտ ոտարության սյունին շղթայված,
Թե՞ հնձվորներն են վերադառնում տուն՝
Հին դարդը յերգի բերանը տված:

Մաճկա՞լն է լարել անուշ հորովել,
Հովվի շվի՞ն է մրմունջով յերգում,
Աղջի՞կն է գուցե յարից խռովել,
Այդպես սրտակեզ լալիս, հեկեկում:

Այդ Կոմիտասն է,— հին գյուղի վշտի,
Չարքաշ մշակի, հոգնաբեկ վորդի,
Անխոս գեղջկուհու, անքուն պանդուխտի
Անվերջ հեծեծող յերգիչը նրբին:

Պանդուխտներ, վորբեր ու վշտերը հին
Վաղո՛ւց էլ չունի ժողովուրդը մեր,
Յերջանկությունն է բազմել իր գահին
Ու ծիծաղում են խինդի աղբյուրներ,

Բայց այդ յերգը կա ու հնչում է հար,
Նորից գյուղական ու նորից նրբին.
Դու կապրե՛ս, յերկրիս մե՛ծ սրնգահար,
Քանի յերկնքում կշողա արփին:

ԽՈՀ

Անցած տարվա ամեն վայրկյանն ինձ համար մի գանձ էր
անգին,
Կյանքս յերգ էր, բախտըս ծիծղուն մի գեղուհի՝ վարդը
ձեռքին.
Յեվ յես խոհուն ու տքնաջան՝ հղկում էյի քարեր–մարմար
Իմ ապագա նոր յերգերի քանդակազարդ շենքի համար։

Ահա հիմա նորից անահ կանգնած եմ մեծ կյանքի ճամբին
Ու ժպիտով եմ նայում յես թե՛ արևին, թե՛ սև ամպին.
Քայլում եմ հար՝ աչքըս հառած յերգի լեռան վեհ կատարին՝
Յեվ վառ հույսով, լույսով, հույզով ողջունում եմ այս նոր
տարին։



ՏՐՏՈՒՆՋ

Յեվ յերգում է նա մերթ վորպես ցասում,
Աստծուն ուղղված կատաղի անեծք,
Մերթ վորպես մթնում մերկացած մի սուր,
Մերթ դեպի յերկինք կարկառած մի ձեռք։

Մերթ վորպես վճիտ, մեղմանույշ առու,
Վոր մորմոքում է նոճիների տակ,
Մերթ վորպես տրտունջ բուռն ու վարարուն,
Խավարն ակոսող հրաշեղբ կայծակ։

Մերթ վորպես խաղաղ, մեղմորոր լճակ
Ու հազարերանգ ծաղիկներ բուրյան
Այդ դու ես, դու ես, յերգի արեվծագ,
Սիրավառ պոետ, սիրելի Դուրյան։

## ԾԱՂԿԵՓՈՒՆՋ

Վորպես խոխոջուն մի զուլալ վտակ,
Սկիզբ առնելով հույզերի հանքից,
Բերում է իր հետ մարգարիտներ թանկ՝
Մեր ժողովրդի հոգու ակունքից:

Ո՛, այդ Քուչակն է, սիրո տաղերգուն,
Հասած ձյունափառ լեռան բարձրության,
Յեվ քանի՛ գարուն, ձմե՛ռ փոթորկուն
Յեկել անցել են, կգան ու կերթան:

Յեվ քանի՛ արքա, իշխան, զորավար
Յեկան ու անցան անհուշ, անանուն,
Բայց նա միշտ մնաց շողշողուն ու վառ
Յեվ հիմա մեզ հետ խնճույք է անում:

Նրա յերգերը վորպես ծաղկեփունջ
Հյուսված հույզերից, ջերմ, նվիրական՝
Մեր ժողովուրդը սերնդից-սերունդ
Կտանի դեպի չքնաղ ապագան:



# ԴԻՄԱՎՈՐՈՒՄ

***

Այս օրերի աչքերի մեջ արտացոլվող ապագա,
Ես քո մասին երգ եմ հյուսում իմ հույզերից արևկա,
Եվ տենչում եմ, որ այդ երգը լինի քեզ պես խնդալից,
Մեր մեծ դարի շունչն ունենա, երկար ապրի մեր դարից:

***

Լուսին, ես դեռ նայում եմ քեզ երկրագնդից,
Ընդունիր մի փափագ-բարև իմ խոր սրտից,
Բայց իմ տղան՝ ապագայի քաղաքացին,
Քեզ մոտ կգա, հեծած իրա թևավոր ձին:

***

— Վորմնադիր մարդ, այդպես զվարթ ի՞նչ ես կերտում այդ
մարմարից,
Նոր Կոլիզե՞յ, Զևսի տաճա՞ր, Ակրոպո՞լը, վեհ Լո՞ւվրը կամ.
— Այս ամրակուռ չքնաղ քարից, մեր հույզերից ու մեր դարից՝
Գիշեր-ցերեկ կառուցում ենք հրաշակերտ մեր ապագան։

***

Յերեկ ամա եր այստեղ, այսօր շենք է բազմահարկ,
Ո՞ւր է առուն այն բարակ, յեվ ուռենին գլխահակ.
Նրանք անդարձ գնացին, նրանք չկան, բարեկամ,
Ներկայի՝ դուռն է ծեծում թափով յեկող ապագան։



***

Հայրենի՛ք իմ հոյակապ, հայրենի՛ք իմ հաղթական
Իմ թույլ գրչով վո՞նց յերգեմ քո անպատում ապագան,
Վոր քո այսօրն է այսքան հրաշալի, փառապանծ,
Ի՞նչ կլինի քո վաղը, ո՛վ մարդկության այգաբաց։

## ՎՈՍԿԻ

Կար ժամանակ, ո՜վ խելագար, աշխարհակալ ժանտ վոսկի,
Յերբ սարսափով եյիր լցնում յե՛վ կյանք, յե՛վ սիրտ, յե՛վ հոգի,
Յերբ դու եյիր ամենազոր արքաների մեծ արքան,
Վոր մարդկության տալիս եյիր արյուն, արցունք ու կական:
Քեզ տիրողը թեկուզ լիներ արկածասեր սրիկան,
Կունենար թե շողշողուն փառք, թե հազար մի սիրեկան...
Այդպես եյիր, այդպես ես դու դեռ աշխարհի մեծ մասում,
Լոկ իմ յերկրի քաղաքացուն դու ել յերբեք չես սարսում,
Թեյեվ մեր մեծ բեմումն ել դեռ դեր ես խաղում դու այսոր,
Բայց ժամե ժամ դժգունում ես, դառնում անզեն ու անզոր:
Յեվ կգա որ, յերբ դու ընդմիշտ կյանքի բեմից վար կիջնես,
Վոնց ձեռնասուն ընտանի շուն կհետեվես ինքդ մեզ:
Մենք քեզանից կկառուցենք զուգարաններ վոսկեղեն,
Ել չես դառնի քեզ յենթարկվող վոչ մի խղճուկ հողեղեն:



## ՀՈԳՈՒ ՄՈԼԱԽՈՏԵՐ

Ո՜վ հոգու թույն-ագահություն, պառավ աղվես-քծնություն,
Դու դաժան խանդ-սրտի գլխին հավերժ կախված արնոտ թուր.
Ո՜վ փոքրոգի չնչին կրքի՝ բամբասանքի մանրեներ,
Յեվ դու, մաղձի, ոխ նախանձի դիվահար ու դաժան Նեռ,
Ինչպես հնում Հերկուլեսը Ավգյան ախոռը մաքրեց,
Այնպես կյանքից ձեզ պիտ մաքրի յերկրիս մարդը վեհ ու մեծ:

## ԿԵՂԾԻՔ

Կեղծի՛ք, կեղծի՛ք, դու հին կյանքի թողած թունոտ սեվ մրուր,
Մեր ձեռքն խայտառ, քեզ, անպատկա՛ռ, դեռ չի սրբել ամենուր,
Յեվ դարերով կուտակվելով յեկել ես ու հասել մեզ,
Մրոտում ես մեր լուսերես կյանքի դեմը վեհ ու վես,
Բայց կյանք-դեմից, մարդու սրտից դուրս ենք թափում քեզ
հիմա,
Ու իմ կոկոն բալի հոգում նշույլդ անգամ չի մնա:



## ՃԵՊԸՆԹԱՑԸ

Սրընթաց գնացքը հնչուն գնգոցով՝
Վիթխարի գլուխը հանելով ձորից,
Կտրում է դաշտերը՝ ոսկի հասկի ծով,
Ու թափով թռչում է խենթ ու խնդալից:
Յերկաթն է անցնում այդպես հուրհրան,
Դղրդում, թնդում են մեր սարերը սեգ.
Անպարփակ սիրով է ընդունում նրան
Անառիկ, յերջանիկ յերկիրն անեզերք:
Յերգելով իջնում են դեպ Քանաքեռդես-
Կարմրաթուշ, սրտահույզ աղջիկներ սեվաչ,
Խաղում են մանուկներ ժիր ու զանդրադես,
Յեվ գնացքը սուրո՛ւմ, սուրո՛ւմ է առաջ...

## ՍԵՎԱՆ

Արեվը հանդարտ հանգչում էր արդեն
Յերբ նավից իջանք Սեվանա կղզին։
Ի՛նչ առատությամբ բուրում են վարդեր,
Ինչ քաղցր է ժպտում ճերմակ ակացին։
Ծովից փչում է զովաշունչ քամին,
Ու սվսվում են ծառերը ծաղկած,
Յելնում են ահա աչքիս եկրանին
Շենքեր լուսալի ու արեվաբաղձ,
Հանքերի, հողի հարվածայիններ
Հերոսներ հպարտ ու ինքնավստահ․
Լսվում են անվերջ նվագի ձայներ,
Յերգերը սիրո ու զվարթության։

Ո՞ւմ ստեղծագործ ձեռքն է կառուցել
Այս խոպան կղզում այսպիսի հրաշք,
Այդ ո՞ւմ անդրին է այդպես բարձրացել՝
Հայացքով պայծառ յե՛վ վեհ, յե՛վ հրաշ։
Ո, դա հանճարեղ, մեծ, արեվաջինջ
Իլյիչի ձեռքն, է, Իլյիչի անդրին…
Ինչպե՞ս չարձակեմ խենթ ցնծության ճիչ,
Ինչպես չողջունեմ այս չքնաղ դարին․
Իսկ ընկերս… լավ է այդ մասին լռել,
Թույլ գրչով ինչպե՞ս պատկերեմ նրան…
Նա վորպես չարժուն մի վիթխարի լեռ
Բարձրանում է դեպ մեծ սանատորիան։



Անհագ ծծելով բույրը վարդերի,
Զբոսնում եմ յես մինչեվ ուշ գիշեր…
Մի տեղ հնչում են լարերը թառի,
Մի տեղ գովում են յե՛վ գինին, յե՛վ սեր։
Վորպես խաղողի հմայուն վողկույզ
Ոդում կախվել են լամպերը շուշան
Ո՛, յես վոնց զսպեմ թռիչքը հոգուս,
Վո՞նց չտամ խինդի վառ ազդանշան։
Հոգնել եմ թեև յերկար շրջելուց,
Բայց համառում եմ, չեմ ուզում քնել։
Գուցե ման գայի մինչեվ արշալույս՝
Թե վոր ընկերս ինձ տուն չտաներ։

. . . . . . . . . . . . . .

Խորունկ գիշեր է։ Պառկած անկողնում,
Մտքերիս հետ եմ զրուցում անձայն,
Պատուհանիս տակ սոխակն է յերգում,
Խոսում, յերգում են ջրերը արծաթ։
Յեվ այդ համերգի հնչյունների տակ
Մայր Մորփեոսն է աչքերս փակում,
Իմ հոգու վրա իջնում է հստակ,
Մաքրաջինջ, հանդիստ յերջանկալի քուն։

## ՋԻԲՈՒԽԼՈՒՅԻ ԱՊԱԳԱՆ

Նկարիչ արփին բոցե վրձինով
Գունազարդում է ջրերը կապույտ,
Ու մեր նավակը վարար ցնծումով
Լիճն ակոսելով պարում է անխույթ:
Չգիտեմ, ինչո՞ւ յերկուսով հանկարծ
Փափագ ենք զգում տեսնել Ջիբուխլուն,
Հիշում, յերգում ենք հավերժականչ
Մեր մեծ Դսեղցու յերգերը ծաղկուն:
Հեռու մշուշից յելնում են մեր դեմ
Հին գյուղի դեմքեր աչքերով շվար,
Նրանք թեև մեզ մանկուց ծանոթ են,
Բայց սրտով այնքա՜ն օտա՛ր են, օտա՛ր:

Ինչպես փոշեպատ մի Նոյ Նահապետ՝
Նավն է բարձրանում Վեղունցը—Սարդիս,
Վորպես մոլորված, անծանոթ ճամբորդ
Ջիբուխը ձեռքին նստում է կողքիս:
Տրտնջում է նա մինուճար վորդուց,
«Նոյի աղավնին» այդ նամարդադույն,
Վոր գյուղը թողեց անուսում, անլույս,
Փաստաբան դարձավ՝ մնաց քաղաքում:
Դառն հեկեկում է իր սրտի խորքում,
Ու արցունք թափում ինչպես պղտոր դետ.
Կարծես վողբում է, կարծես մորմոքում
Մի հի՛ն գյուղատան այդ ծերունու հետ:



Սրտանց լալիս է այդ Սարդիս բլճան
Մինչև ծովափը, մինչև Ջիբուխլու...
Ահա ընկերս նավակից իջավ,—
Տեղից կանգնում եմ ինքս էլ իջնելու,
Ու ձեռք եմ պարզում վշտակիր հյուրիս,
Ուզում եմ նրան ափն իջեցնել,
Բայց նա ցնդել է, կորել է հեռվում՝
Վորպես տխրադեմ, սառնաշունչ ձմեռ:
Մենք վար ենք իջնում Նավահանգստում
Ու մտնում ենք մի կանաչ ծառուղի,
Հեռվից նայում եմ աչքերով ժպտուն
Ճերմակ շենքերը նոր Ծովագյուղի:

Հանգստի ժամն է: Մոտակա հանդից
Ու այգիներից այդ բուրումնաշատ՝
Ծովափ են թափվել այնքա՜ն խնդալից,
Այնքա՜ն կենսաբուղխ ծեր, յերիտասարդ,
Կանայք վարդաշուրթ, մարտիկներ արի,
Առնական, ինչպես հաղթ Գլադիատոր,
Նրանց թրծել է հուրը պայքարի,
Ճակատամարտերն մեծ ու փառավոր:
Ո՛, համայնական անծիր դաշտերի
Վաշտերից մեկին՝ սիրավառ վողջույն,
Քեզ, հին Ջիբուխլու, քո հին դարդերին,
Մութ խրճիթներին հավերժական քուն...

Վեր ենք բարձրանում: Մեր ճանապարհին
Ինչպիսի՛ չքնաղ հրաշալիքներ,
Գալիս խփում են ծովի ափերին,
Գրոհի յելած փրփրուն ալիքներ:
Ու ալիքների բաշերից բռնած՝
Լողում են ծովում կին, տղամարդիկ,
Տարերքը հաղթել չեր կարող նրանց,

Նրանք հմուտ են ու անվախ մարտիկ:
Ահա կիսամերկ կանանց մի ջոկատ,
Վորին մարզում է հրաշագեղ մի կին,
Նրանք խոհուն են ու լայնաճակատ,
Գարունն է նախշել բոլորի հոգին:
Գեղատեսիլ են կանայքն այս Նրբին,
Ցե՛վ ծանրախոհ են, յե՛վ նոճեհասակ,
Ո՛, նրանց ճկուն, ճկուն մեջքերին
Ինչ լա՛վ է սազում գյուլթական նազանք:
Նրանք հունական արձանների պես
Զնաշխարհիկ են ու հոգեզմայլ,
Խաղաղ լճի պես հստակ են ու պարզ,
Ցեվ ջինջ են ինչպես մարմնագույն մարմար:
Նրանց շուրթերի կարմիր վարդերին
Կը խանդեր նույնիսկ չքնաղ Վեներան,
Այդ Նրբասրունք, քնքուշ վոտներին
Պոեմ կը ձոներ Պուշկինն անթառամ:

Ահա Ջիրուխլուն: Ծովափնյա մի վայր,
Ճերմակ տները ծառերում կորած,
Վոչ կավե հյուղեր, վոչ արևավառ
Դեմքեր տրտմալի, վոչ այնքան գուլված
Հարսները համր ու լաչակավոր,
Վոչ ծերունիներ փայտերին կռնթած,
Հեքյաթներ պատմող ու հռչակավոր,
Վոչ հավետ չարքաշ ու ընդմիշտ քրտնած
Թիկունքներ աղեղ, ծուռ, անտանելի,
Ցեվ վոչ դամբռներ այնքան աժդահա—
Դռներին հսկող գայլերն ընտանի,
Վոչ էլ մածակներ չար ու հաղեհան:

Ահա Ջիրուխլուն: Փողոցներում լայն,
Մայթերի վրա այս սալերաշատ
Մանուկներ կան ժիր, աղջիկներ կան վառ,

Աչքիկներ կան սև ու հոնքերը սաթ:
Տներից վոչ մի, յեվ վոչ մի պատառ
Ծուխ չի բարձրանում դեպ յերկինքն անամպ.
Սարերն է ծածկել մի փարթամ անտառ,
Ամեն տեղ ժպտուն էլեկտրական լամպ:
Ցեվ համայնական խոհանոցներում,
Տներում հստակ, հար ու ամենուր
Ճերմակ ածուխն է անդադար վառվում—
Այնքա՛ն հուզական ու այնքա՛ն հուրհուր:

Ո՛հ, նոր Ջիրուխլու, յես ինչ խոսքերով,
Քեզ ի՞նչպես, ի՞նչպես, ի՞նչպես պատկերեմ,
Վոր գալիք մարդուն իմ այս յերգերով,
Իմ այս հույզերով գրավեմ, գերեմ.
Վոր գալիք մարդիկ քեզ այնպես հիշեն,
Ինչպես հիշում եմ գյուղատանը հին,
Ցերբ ձեռք եմ առնում մեր այս հոյաշեն,
Այս մշտապայծառ «Գիքոր» անմահին:
Ի՞նչ շեշտ, ի՞նչ հնչյուն, ի՞նչ ռիթմ գործածեմ,
Վոր ներդաշնակվի քո մեծ թռիչքին,
Վոր չշպարեմ, կեղծ յուղով չօծեմ,
Այլ ճիշտ քանդակեմ դեմքդ ցնծագին:

Ցես այս խոհերի գիրկն եյի ընկել,
Այս մտքերն եյին իմ հոգին հուզում,
Վերհիշում եյի մոռացված յերգեր,
Ցերգեր տխրանուշ, յերգեր յերազուն,
Ցերբ կանգ առանք մենք մի վեհ, սյունազարդ
Ու արեվալի պալատի առաջ:
Մեզ առաջնորդող մի յերիտասարդ՝
«Գյուղի դպրոցն է»— բարձրաձայն ասաց:
Դռնից ներս մտանք: Դատարկ եյին վողջ
Լսարանները լուսալի ու լայն,—
Այստեղ յեղել է մի գետնափոր վորջ,
Ուր ապրում եր մի նախրապան Թևան:

— Այստեղ,— ասում է մի ծեր գյուղացի,—
Տեր-Մարուքեյի դպրոցն է լինել,
Ո՛, քանի անգամ մեջքիս աքացի,
Ձեռքիս ճիպոտի հարված է ուտել:
Մի անբուժելի, սոսկալի ախտով
Տանջվեց Մարուքեն, մեռավ չարաչար,
Այդպես էր, մահը հաղթող էր, հաղթող,
Հիվանդությունները անթիվ, անհամար:
Քառորդ դար է, ինչ լուրջ հիվանդության
Նշույլ չեմ տեսել մեր Ծովագյուղում,
Մինչ նա յերևա՝ կանխում ենք նրան,
Նա արմատ չունի մեր կյանքի հողում:

Բայց ի՞նչ եմ ասում, կը ներեք դուք ինձ,
Վոր ձեզ պատմում եմ մի բանի մասին,
Վորին ծանոթ եք ինձնից դերազանց,
Յեվ լավ հմուտ եք այդ պառավ հարցին:
Ներեցեք, վոր ձեզ հյուրընկալելու,
Յեվ մի գովարան տանելու տեղակ,
Կարդում եմ վաղուց սոված «ալելու»,
Վորպես նորություն յե՛վ դյութիչ, յե՛վ տաք:
Համեցեք իջնենք կոմունի այգին,
Քիչ հանգստացեք, հետո կը գնաք,
Գո՛ւցե կսպասեք յեկող գնացքին,
Գո՛ւցե ավտոյով,— ինչպես կամենաք:

Այսպես զրույցով իջնում ենք այգին,
Ուր ծաղիկները վառվում են, փթթում,
Յեվ ուր խմում են լույսն արեգակի
Վարդերը գունեղ, վարդերը ժպտուն:
Նստում ենք հովուն խնձորենու տակ,
Ու թեկն ենք տալիս կանաչի բարձին,
Վերից նայում է աչքի պես հստակ
Յերկնի կապույտը անհուն ու անծիր:



Ճաշում ենք հենց այդ անմահության մեջ,
Նայում ծփացող, ցնծող ծաղկունքին,
Զգացինք ինչպես արևը թեքվեց
Ու մայրամուտին մոտեցավ կրկին...

2

Կոմունի խնդուն, պայծառ յերեկոն
Թևերն է փռում, ծածկում ամեն ինչ,
Սևանա ծովն է անուշ համերգում,
Պարում, ցնծում են ջրերը աննինջ:
Հողագործներն են տուն վերադառնում
Իրենց առօրյա աշխատանքներից,
Ահա տես, այն սեգ, ջլուտ պատանուն,
Այն աղջկան սևաչ ու գեղաթարթիչ,
Այրող ջերմությամբ թևանցուկ արած՝
Յերգով, ծիծաղով տուն են շտապում.
Գալիս է ահա մի քաջ հորթարած,
Ծաղկի բուրմունքն է չորերից թափվում:

Յեվ ամեն կողմից գալիս են նրանք—
Հորդող ծիծաղով, յերգերով ցնծուն.
Արևն մայր մտավ: Բայց տես, բազմերանգ
Լույսեր ծաղկեցին լիկիվա ծոցում:
Կարծես թե մեկը գիշերվա մթնում
Ադամանդներ է անխնա ցանել,
Ամեն մի այգում, ծաղկոցում, տնում
Հնչում են պարի, նվագի ձայներ:
Մութը հավաքվեց ու կորավ խավար,
Ցերեկը դարձավ անվերջ, անվախճան,
Յեվ Ծովագյուղում ինքնաբերաբար
Վառվեց, բորբոքվեց մի մեծ խրախճան:

Մեր հյուրընկալի առաջնորդությամբ
Մտնում ենք ահա մի անծայր սրահ,

Նա դառնում է մեզ անուշ մեղմությամբ:
«Մեր թաղամասի ճաշարանն է սա»:
Լայն սեղաններին՝ անթիվ ծաղկաման,
Ամեն բան մաքուր, դուրեկան, հստակ,
Յերկու պատերից վենց յերկու Մոնբլան,
Նայում են, ժպտում Լենինն արեւակ,
Լենինը՝ ակունք կյանքի քաղցրության,
Մարդկության դարուն Ստալինը մեծ,
Դիտում, հսկում են ժողովրդական
Յերջանկությունը յե՛վ վառ, յե՛վ անշեջ:

Ընթրիքից հետո շենքը շրջեցինք,
Մտանք մի դահլիճ, մանկանոցն եր այդ,
Ինչպիսի՜ դեմքեր, աչքեր գեղեցիկ,
Այտերը՝ մեկ-մեկ արնակարմիր վարդ:
Պարում, յերգում են կենսախինդ ու կիրթ,
Դաստիարակ մայրն է ուշադիր հսկում,
Մի մանկան համար հայրաբար սիրտ
Գիշեր ու ցերեկ ապրում է, հուզում:
Խոսկան ծաղկոցից դուրս գալով կամաց՝
Շրջում, զննում ենք շենքը ծայրից ծայր.
Զուգարանները վոսկուց են շինված,
Լույսի ջահերը՝ արեւից պայծառ:

Ընթրիքի ժամն է: Գալիս են ահա
Մեկը քիմիկոս, հմուտ հողագործ
Միաժամանակ: Մեկը աժդահա
Մի ջահել հովիվ և քանդակագործ:
Մեկը յե՛վ պոետ, յե՛վ անտառագետ,
Մեկը. . վո՞րն ասեմ, գալիս են շարվում
Սեղանների շուրջ, վորպես վարար գետ
Հոսում են կյանքի բարիքներն անհուն...
Դուրս յելանք շենքից, լուսով վարարուն
Ճամբով գնում ենք դեպի ոպերան,



Ծառուղիներում յերգում է առուն,
Լուսինն է վերից նայում մեզ վրա,
Բոլոր կողմերից գալիս են նրանք—
Ծերեր, ջահելներ, աղջիկներ զանգուր,
Ձեռքերնին ծաղկի փնջեր բազմերանգ,
Հագած շորերը յե՛վ պարզ, յե՛վ մաքուր:
Գեղարվեստական խմբակն է այսոր
Յելույթ ունենում: Գալիս են անվերջ:
Մենք ել ենք գնում. ոդը ջինջ, անդորր...
Ահա յեվ Փոյեն ու մենք՝ մարդկանց մեջ:

Ծանոթանում ենք՝ մի յերիտասարդ,
Հաճելի դեմքով հարցասերի հետ,
Նրա խոսքերը չոր են ու անզարդ,
Բայց դիպուկ ինչպես վիլհելմտելյան նետ:
Նա պատմաբան է Բջնի քաղաքի
Հանքաբանական նոր ինստիտուտում,
Խոսքը գնում է հասնում հին կյանքի
Ու մեր պատմության դարերն վոլորուն:
Մինչ մենք խոսում ենք անցյալի՛ մասին,
Վերհիշում եջեր մեր նոր պատմության,
Հնչում է զանգը, բոլորս միասին
Շտապում ենք ներս ու նստում անձայն:

Անսանձ յեռանդն է դահլիճը լցրել.
Տեսնում եմ՝ նրանք սպասում են մի
Ինչ վոր նոր բանի:Թնդում են ծափեր,
Ու բեմ է յելնում մի ժիր պատանի,
Ազդարարում է որվա համերգի
Ծրագիրը ճոխ, ու նորից ծափեր,
Ծափեր ու ծափեր. լռում է զանգի
Ղողանջը ազդու. դուրս է գալիս բեմ
Մի սեւաչ աղջիկ, հասակը բարդի,
Բնության նման հասարակ ու պարզ,

Շրթունքը—նման նորաբաց վարդի,
Աչքերը վճիտ—մի անուշ յերազ:

Ծփացող ծափերն փոխվում են հանկարծ
Լարված լռության... Ու յերգում է նա
Մերթ ինչպես ծովը— հուզված, ալեկոծ,
Մերթ՝ ինչպես կանաչ անտառը գարնան,
Մերթ՝ վորպես ջրերն արեվոտ լճի,
Մերթ՝ ինչպես առուն սառցի շերտի տակ,
Ու նայում է նա գերված դահլիճին,
Աչքերում— մի զույգ գարնան արեգակ:
Ո՜, նրա յերգը լեռը բարձրացող,
Գետերին նոր հուն, կյանքին նոր յերանգ,
Նոր բուրմունք տվող, մրրիկը սանձող
Մարտիկի յերգն է, խիզախի խոյանք:

Ժամանակակից մի մեծահանճար
Կոմպոզիտորի նոր ոպերայից
Լոկ մի եջ է դա: Արծիվն է պայծառ
Այդպես վայր նայում իր բարձունքներից:
Այդ յերգը ջինջ է ինչպես կապուտաչ
Լիճը լեռնային, ինչպես յերգողի
Աչքերը դյութիչ, ինչպես ծաղկի աճ,
Ինչպես բուրմունքը անձրեվոտ հողի:
Ահա կանգ առավ: Մի պահ լռություն.
Ու հետո... հետո նորից անդադար
Ծփուն ծափերի կենսուրախ թնդյուն,
Շարժվող ձեռքերի մի ստվար անտառ:

Յերգչուհուց հետո ջութակը ձեռքին՝
Առաջ է գալիս լեռնացած կրծքով
Մի ալեհեր մարդ. կողքիս մի ծեր կին
Նայում է նրան անհուն հրճվանքով:
— Մայրն է,— ասում է կողքիս ընկերը,—



Հեռվից է գալիս այդ հերոսուհին,
Նրա այդ խաղաղ, խոհուն աչքերը,
Տեսել են կյանքը յեվ աշխարհը հին,
Կռվել է պայծառ այս կյանքի համար,
Մինչ առաջապահ գնդումն է յեղել
Յեվ ժամանակին մեր իմաստուն հայր—
Ստալինն է նրա ձեռքը պինդ սեղմել:

Ո՜, մեր կոմունի հիմնադիրն է նա,
Այդ պառավ կինը, հերոսը անմեռ,
Քսանյոթամյա կյանք ունի հիմա,
Բայց ուզում է դեռ մի դար էլ ապրել:
Տես, ծերացել է, արդեն դողդոջուն,
Արդեն վաստուժ են ձեռքերը նրա,
Յեվ գուցե շուտով պառկի ցուրտ հողում,
Ու մի ծանր քար բարձրանա վրան.
Բայց մենք կարոտով նրան կհիշենք,
Ու սերունդներին կպատմենք նրա
Հերոսությունը... Դե՛, այժմ լսենք,
Ի՛նչ է նվագում մեր ընկեր Արան:

Յեվ մինչ ուշադրավ ու հետաքրքիր
Լսում եյի յես կողքիս ընկերոջ,
Վորի լայնանիստ ու խրոխտ կրծքին
Շող եր արձակում «գյուտարար հերոս»
Նշանակը վառ... Բեմ են դուրս գալիս
Հասարակ մարդիկ, բոլորը, սակայն,
Անցել են ուղին մի մեծ պայքարի
Ու մարտ են մղել, մարտ հերոսական.
— Նրանք բոլորն էլ մեր կոմունայի
Տղերքն են,— ասաց դարձյալ ծանոթս,
Ա՜յ տեսնում ես դու այդ կուռ Կամոյին,
Քարհատ ենք այժմ թե՛ նա, յեվ թե՛ յես...

Կամոն— այդ քարհատ, աժդահա մարդը
Սիրով գրկել է մի նոր վիոլոնչել,
Կարծես գնում է փոթորկոտ մարտի,
Կարծես ուզում է բերդեր նվաճել:
Յեվ ահա տվավ մարտական նշան
Արամ— ղեկավարն այդ փոքրիկ խմբի·
Գո՞ւցե յերգում է տրտմադեմ աշնան
Տերեվաթափը, կամ մեռնող արփին...
Բայց լսիր, այս ի՞նչ ձայներ են վարար,
Ի՞նչ գետ է այդպես հորդել ափերից,
Այդ ի՞նչ նավեր են այդպես հաղթավար
Դուրս յեկել իրենց առօրյա ճամբից:

Հորդում, հնչում է մեծ Բեթհովենի
Սիմֆոնյան յերրորդ կամ հերոսական,
Ո՛, այդ համերգում յելած գրոհի,
Արշավում է վեր սերունդն առնական:
Նա գրոհում է Բաստիլի վրա,
Ռմբակոծելով ամրոց ու պալատ...
Վոչ վոք չի կարող կաշկանդել նրան,
Նա յե՛վ բոցոտ է, յե՛վ վեհ, յե՛վ անպարտ.
Ու այդ յերգի մեջ յես լսում եմ դեռ
Ռոբեսպիերների ձայները ցասկոտ,
Տեսնում եմ վառվող դղյակներ, բերդեր
Ու անվերջ թափվող գնդակի կարկուտ:

Մեկը յերգում է «Ֆաուստ»-ից մի եջ
Յերգո՞ւմ է արդյոք, թե՞ բոցավառվում,
Ո, այդ յերգողը, այդ տաղանդը մեծ
Սերին տալիս է նոր մեկնաբանում:
Յեվ ի՛նչ հմայուն, ի՛նչ պարզ են հնչում
Մեֆիստոֆելի յերգերը հստակ,
Ժամերը անչափ արագ են թռչում,
Իսկ պատկերները ավելի արագ:



Կիսվում է արդեն գիշերը ամռան,
Յերբ ավարտվում է պատկերը վերջին,
Յեվ ափսոսանքով թողած սրահը՝
Այցի յենք գնում քնի անուրջին...

. . . . . . . . . . . . . . . . . . .

Սիրելի մուսա, յեղիր համարձակ,
Նավապետի պես դուրս արի բաց ծով,
Թող քեզ հմայի վեհ ու լայնարձակ
Ովկիանոսն անհուն իր մռնչոցով:
Թող նավիդ բախվեն ալիքները սար,
Ու փրփուր թափեն քո գանգուրներիդ,
Սակայն դու բարձր պահիր քո բոսոր
Դրոշը, վորպես հերոս կոմյերիտ.
Ու գնա առաջ՝ յերկրե— յերկիր,
Դեպի նոր ափեր— դեռ վոտք չդրած,
Թող քո թռիչքը ովկիանը յերգի,
Ովկիանը վսեմ ու լայնատարած...

Ներիր, ընթերցող, վոր ընդհատեցի
Զրույցս քեզ հետ ու մուսայիս դեմ
Վաղո՛ւց լուռ կորած իմ սիրտը բացի,
Վոր նրան մի քիչ, մի քիչ խրատեմ:
Ահա մենք նորից քեզ հետ միասին
Կանգնած ենք շքեղ մի պատշգամբում,
Աստղոտ յերկնքից մի լիալուսին
Ծույլ աղջկա պես արծաթ է թափում,
Արծաթ է թափում այդ ծիծաղառատ
Աղջիկը վերից, յեվ ժայռը—անգամ
Այդ մռայլադեմ ծերուկը անթարթ
Նայում է նրան վորպես բարեկամ:

Ինչքան եմ ուզում, վոր ժամանակի
Ընթացքը մի քիչ դանդաղի այսօր,
Ու այս գիշերվա յերթը ցնծագին,

Վայրկյանը անգամ դառնա դարավոր։
Ուղղակի չնչում, ապրում եմ յես այս
Մարդկանց ինքաբուխ խնդությամբ անմեռ,
Չեմ ուզում քնել․ ․ բայց արագահոս
Ջրերի նման թռչում են ժամեր։
Յեվ արշալույսն է մոտենում արդեն,
Բոցավառվում են դռներն գիշերվա,
Պատուհաններից թափում է վարդեր
Արեվ սիրուհու–հենց բարձիս վրա։

Յես ու ընկերըս արևածագին
Դուրս յեկանք դաշտը շրջագայության,
Հասուն հասկերն են մեղմ ու ցնծագին
Հորձանքվում ինչպես ծովը վաղորդյան։
Ամենուր՝ ծանոթ, հարազատ դեմքեր։
Ահա յերգչուհին այն գեղաիրան,
«Մեֆիստոֆելն» է հնձիչին նստել,
«Խուրձ հավաքիչը» վարում է Արան,
Յեվ վորպես կյանքի ինքնաբուխ պահանջ,
Յեվ անհրաժեշտ հաճույք զվարթուն,
Յուրաքանչյուրը որը յերեք ժամ
Աշխատում ՝ է իր, հանրային հանդում։

Յերկար շրջում ենք, կեսոր է արդեն,
Ստացվել են նոր գիտական թերթեր,
Յեվ ահա ծառի շվաքում նստել՝
Կարդում, վիճում են մի շարք ջահելներ։
Մոտեցանք. ահա այն թխաչ տղան
Որվա խմբվարին տալիս է հարցեր,
Թե ո՞վ է լուսնին առաջին անգամ
Հասել հաղթական ու վերադարձել,
Թե ո՞վ է արդյոք հնարել կյանքը
Յերկարացնող դեղը հրաշալի,



Ի՞նչպես է ծագել, զարգացել յերգը,
Ո՞վ է մեծագույն պոետն անցյալի...

Ամպե պալատը բռնված հրով՝
Բոցավառվում է ու քիչ–քիչ հանգչում,
Մեղմորեն սուլող զովաշունչ մի հով՝
Իջնող իրիկվան տալիս է վողջույն։
Մարդիկ արտերից հետ են դառնում տուն,
Թռչող ավտոներ բռնել են ճամբան,
Դաշտի յեռ ու զեռն, աղմուկը խնդուն՝
Գահը վիջում են անդորր լռության։
Յես ու ընկերս էլ հոգով ցնծալից՝
Մեր մշտավայրն ենք շտապում կրկին,
Հազիվ հասնում ենք Նոր Դիլիջանից
Սըրնթաց յեկող ռադիո–գնացքին...
Սակայն այս ի՞նչ է, ընթերցող ընկեր,
Մտիկ տուր հրճվիր, լի հոգով խնդա,
Սեվանից մինչև Մասիս ալեհեր՝
Լույսերի ծով է, շողքերի անտառ...
Կա՛նգ առ, ո՛վ գնացք, դանդաղիր մի քիչ,
Վոր յերկար դիտենք տեսարանը այս.
Կանգ առ, ո՛, կանգ առ, թող այս բարձունքից
Վայելենք չքնաղ մի լույսե յերազ։
«Կանգ առ, ով վայրկյան, ո՛, վորքան, վորքան
Գեղեցիկ ես դու»— քեզ նման բերկրուն
Վայրկյան իր որում դեռ արեվ արքան
Յերբեք, ո՛, յերբեք չի մտաբերում...

Դու գալիս ես, լսում եմ քեզ, հերոսների հպարտ
յերգ,
Լայն թևերի շառաչյուն,
Յեվ կանչում եմ ցնծությամբ ու կարոտով անեզերք,
Ո՛վ գալիք մարդ, ջերմ վողջո՛ւյն:



# ՊՈԵՄՆԵՐ

## ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀ

### ՆԱԽԵՐԳ

*Աշուն է, բերքառատ, բերկրալի աշուն:*
*Նստել եմ պուրակում մտախոհ ու լուռ.*
*Մաքրաջինջ յերկինքը վորպես մի անհուն,*
*Անսահման ովկիանոս՝ խաղաղ է ու լուրթ:*
*Իմ չուրջը ամեն կողմ ծիծաղում են արդ*
*Ծաղիկներ, ծաղիկներ յե՛վ դունեղ, յե՛վ վառ.*
*Արեվը վերեվից այնպե՛ս ձեռնառատ*
*Վոսկեշող անձրեվ է հորդում, թափում վար:*

*Պուրակի կենտրոնում աստղադիտարան,*
*Իսկ չուրջը շողշողուն շենքեր ու շենքեր,*
*Մեղմ հովից թփերը փարվում են իրար,*
*Առվակը կարկաչով ճամբա յե ընկել:*
*Մոտակա ծառուղով անցնում են արագ*
*Կենսախինդ աղջիկներ, ջահելներ թիկնեղ,*
*Բորբոքվում է վորպես դյութական մի այգ՝*
*Իմ յերկրի առորյան մեծ ու փառահեղ:*

*Ու ահա խայտալով վորպես ժիր ալիք,*
*Մշտավառ ժպիտը խոսուն աչքերում,*
*Թեվի տակ պայուսակ, ձեռքին խաղալիք,*
*Անցնում է մի աղջիկ դանդրահեր, սիրուն:*
*Անցնում է աղջիկը... Բայց մի այրող հուշ*
*Տիրում է մտքերիս, հույզերիս, հոգուս.*
*Հիշում եմ քրոջս աչքերը խաժուժ,*

Ու դանդուր վարսերը սեվաթույր վողկույզ։
Հիշում եմ։ Աշուն եր, ոսկալի աշուն,
Անհաց եր, անկրակ մեր խրճիթը խարխուլ,
Հեկեկում եր քամին ինչպես կույր աշուղ,
Մեր յերգը լալկան եր, անարեվ, տխուր։
Ռազմադաշտ եր գնում քրտնաջան գյուղացին.
Ել վոչ վոք չեր հերկում արտերը խոպան.
Յերկիրը կարոտ եր մի պատառ հացի,
Սարերում չեր յերգում յեվ վոչ մի չոբան։

Հիշում եմ այնպես վառ՝ կարծես յերեկ եր·
Ունեյի մի չքնաղ, լուսաժպիտ քույր,
Հայացքը գարնային խնդուն ցերեկ եր,
Հոնքերը թուչնի թեվ, մազերը՝ դանդուր,
Ո՜, նոր եր կոկոնում, հասակ առնում նա,
Յերբ բուքը մահաշունչ մեր դուռը ծեծեց,
Ու սովը ժանտատես մի գողի նման
Մեր խրճիթը մտավ՝ վորպես կրծող ցեց։

Նկարեց, դժգունեց իմ քույրը բոկոտն,
Աչքերը փոս ընկան, հուրերը հանգան,
Յեվ աշնան տխրամած, մի ցուրտ առավոտ
Նա մտավ անկողին՝ հիվանդ ու անկար։
Օրերով տառապեց, անընդհատ հազաց,
Խրճիթը խոնավ եր, հատակը՝ քարոտ,
Ու յերկրիս հուրհրան այգը չտեսած՝
Մահացավ իմ քույրը սեվ հացի կարոտ։

Անխնա հնձում եր սովի գերանդին...
Ո՜, քանի մանուկներ մեռան սովամահ,
Իշխում եր բռունցքը ժանտ խմբապետի.
Մեր կյանքը գիշեր եր, արնալի, խավար։
Ու մահվան վիշապն եր ծառացել մեր դեմ,
Բռնության ճիրանն եր մեր շունչը խեղդում,



Մեր սրտում՝ դառնորեն մահացող վարդեր,
Չունեյինք վո՛չ ծիծաղ, վո՛չ սեր, վո՛չ խնդում։

Բայց ահա մտքերիս ամպերը հանկարծ
Ցրում ե ցնծության մրրիկը բերկրուն.
Հիշում եմ մի չքնաղ, մի վառ լուսաբաց
Այդ դժնի, մահահոտ, այդ ցուրտ որերում։
Հիշում եմ Մայիսը հնամյա Ղարսում,
Ու նրան եմ հիշում, խիզախ հերոսին,
Տերերի, հնի դեմ մարմնացած ցասում՝
Այդ խոհուն, խանդավառ մարտիկ Ղուկասին։

## ՅԵՐԳ ԱՌԱՋԻՆ

### 1·

Արեվն ինչպես վոսկի հասկով բարձված մի սայլ
Հանդարտ քայլով մոտենում ե մայրամուտին.
Անտառ, առու, գետ ու գետակ, դաշտ, ձոր ու սար
Սարսափահար սպասում են յեկող մութին։

Ու ամպակերտ պալատները՝ քամուց յերեր՝
Խորտակվում են, թափվում ովկիանը յերկնքի.
Մեր լեռներն են ինչպես հսկա հուշարձաններ
Կանգնել ճամբին գարնանային արեգակի։

Յեվ նա ինչպես մի հրդեհված վիթխարի դեզ
Մթնաշաղի մեծ դարբասից ներս ե մտնում.
Դժգունում են, կապտում ամպերը վոսկեղեն,
Որը քիչ-քիչ գունատվում ե ու լո՛ւռ մթնում։

Գիշերն աշխարհն առնում ե իր թեվերի տակ
Ինչպես կույր ովկիանոսում ներկված մի քող,
Խորանում են մութի կիրճերը դժնդակ,
Վորսի յելնում և՛ մարդասպան, և՛ գայլ, և՛ գող...

2

Վաթսունամյա մի տղամարդ
Բահը թեվին, ծանրաքայլ,
Ինչպես մռայլ մի մահապարտ
Քայլում եր լուռ ու անկար։

Անցավ իրեն մանկուց ծանոթ
Փողոցներով անխնդում,
Կանգնեց հանկարծ մի շեմքի մոտ,
Դուռը բացեց, մտավ տուն։

Նրա աչքերը վշտալի
Սառը թոնրի մոտ ի՞նչ գտան—
Վեց վորբ մանուկ, հարսը այրի,
Հագին հազար կարկատան։

Կինը ծռված հին իլիկին
Մանում եր ու մղկտում,
Հարսը՝ հնմաչ մի չոր ձեռքին՝
Կարկատում եր, կարկատում։

Ու տեսնելով Գաբրել բիձին՝
Նա խոնարհուն վեր թռավ,
Մանուկները ծլվլացին,
Տատը թելը վար դրավ։

Բահը հենեց մրոտ սյունին,
Ցեկավ նստեց ծերունին,
Նրա աչքերն նման եյին
Ծանթերով լի անհունին։

Հարսը դրեց քուրսու վրա
Մի թաս ապուր, մի չոր հաց,
Հավաքվեցին չուրջը նրա
Մանուկները կիսաքաղց։



— Ես ի՞նչ տարի յեր տեսանք,
Ծունն էլ եսպես չեր ապրել,
Ես ինչ որի յեր՝ հասանք,
Ես ի՞նչ կյանք ե, Գաբրել։

Գաբրելը կնոջ չեշտակի հարցին
Արձագանքեց մի այրող բողոքով.
— Լեղի յեն խառնում մեր ջուր ու հացին,
Թալանում-տանում, յեզ, վոչխար ու կով։

Էլ յերկար եսպես ապրել չենք կարող,
Թե չըացվի մեզ փրկության մի դուռ.
Մեր վոտքերի տակ վառվող, չարժվող հող,
Մեր գլխի վերեվ՝ հազարբերան թուր։

Ճիշտ նույն ժամին գյուղի հայտնի Մելքոն ուստան
Այրված սրտով իր սեվ բախտից եր տրտնջում.
— Ես ի՞նչ կարգ ե, վոչ օրենք կա, վոչ դատաստան,
Ժողովրդին սպանում են, մորթում, տանջում.
Կոռ-բեգյարը, հարկ ու տուրքերը ահագին
Հանում են ես արհեստավոր խալխի հոգին։

Տրտնջում եր Գաբրիելի դրկից Մուրոն,
Ջվլախ Սեթը, Սեթի դրկից այրի Մարոն,
Սրա դրկից են Հոտաղենց հալալ Հարոն,
Սրա դրկից կորիճ Կարոն՝ սարի սովոր,
Ալեկոծում, ծառս եր լինում գյուղը բոլոր։

Ցեվ գիշերվա այդ ահալի խոր խավարում
Մի տխուր յերգ մորմոքում եր, փռվում հեռուն։

— Գնա՛, էլ չգա ես տարվա տարին,
Ձյուն, ձմեռ բերեց կանաչ դաշտերին,
Մուխ, դուման ե սարի փեշերին,
Իմ յարին տարան, էլ յետ չբերին։

Վա՜յ, բոյդ չորնա,
Վա՜յ, աչքդ քոռնա,
Աղաբեկ քյոխվա։

Բեմուրազ մնաց իմ աղիզ Սեթոն,
Մի թոնիր կրակ թողեց իմ սրտում.
Կոխվ սարքողի որը խավարի,
Կուռը կոտրվի, ոճախը մարի։

Վա՜յ, բոյդ չորնա,
Վա՜յ, աչքդ քոռնա,
Աղաբեկ քյոխվա։

Իմ աղիզ յար ջան, դու ո՞ւր գնացիր,
Կանաչ գարուն է, յե՛կ, վերադարձիր,
Ա՛խ, են ո՞վ զարկեց իմ ջիվան յարին,
Գնա՛, էլ չգա էս արնոտ տարին։

Վա՜յ, բոյդ չորնա,
Վա՜յ, աչքդ քոռնա,
Աղաբեկ քյոխվա։

3.

Խուլ խրճիթում, սեղանի շուրջը բոլորած՝
Խոսում էին յերկաթուղու յերեք բանվոր.
Մեկն իր կյանքի տասնեվիննը նոր բոլորած,
Մեկը ջահել, մեկի մազերը ալեվոր։

— Բանտ են դարձրել էս գեղեցիկ յերկիրը մեր,
Վոտնատակ են արել չարքաշ ժողովրդին,
Թարշ են գալիս արյունաքամ ու կիսամեռ
Հազարավոր ծեր, պատանի, մանուկ ու կին։

Ալեքպոլում ցնծություն է, ազատություն,
Մերոնք են տեր տիրականը ամեն բանի.



Խնդությամբ է լցվել սիրտը անհող, անտուն
Ռանչպարների, բանվորների, չոբանների։

— Բավական է յերկիրն հանձնեն մահին, սովին
Մեզ կփրկեն զենք, գնդացիր, սուր ու սվին։
Ասեց ջահելն ու վեր կացավ անհեղ թափով,
Աչքերն ինչպես ցասման մի զույգ բոցավառ բով։
Մնաս բարով, ասաց իր ծեր, հին զինակցին,
Պատանու հետ դռնից յելան ու գնացին։

4

Մարդկային ձայները լռել են վաղուց,
Խավարի ովկիանն է ծածկել սար ու ձոր.
Սարերում շողում է բոցերի մի խուրձ,
Հովիվն է բորբոքել խարույկն արնածոր.
Ու մթնում վորպես մի հսկա քարաժայռ
Բարձրանում է բերդը ծանր ու զայրագին,
Իսկ բերդի վոտքի տակ մեղմ ու տխրաձայն,
Ղարսաչայն է լալիս ինչպես սգվոր կին։
Այդ ժամին ճրագի լույսի մշուշում,
Տնակում բոլշևիկ մի հին բանվորի
Բոցավառ մի սերունդ ուղին է նշում,
Վոր խիզախ գնդերը տանի գրոհի։
Թշնամին չի քնել, սարսափ կա սրտում,
Լրտեսներ են անվերջ խավարում վխտում,
Բայց նրանք՝ սրտերում արեվ ու գարուն,
Ընդվզման փրկարար սրերն են կռում։
Ահա տես, այն շողուն աչքերով աղջկան,
Այն խիզախ պատանուն, այն հսկա քաջին,
Այս խրճիթ-ամրոցում վախկոտներ չկան,
Բոլորն էլ կընթանան շարքերումն առաջին։
Ո՛, նայիր այդ խաժակ, գանգրահեր մարդուն
Խոսո՞ւմ է, թե՞ վառվում ինչպես մի քուրա,
Բոլորի աչքերը այնպես բոցկլտուն
Հառած են այդ ըմբոստ կորյունի վրա։

— Դժգոհ են բոլորը այս դաժան կարգերից,
Տղթան է հոշոտում բանվորի ձեռքն ու փոր,
Գյուղացին խեղդվում է սոսկալի կարիքից,
Բանակը դարձել է բռնկուն չոր վառոդ.
Բավական է մի կայծ, որ հրդեհ բռնկվի,
Ցերկիրը ընդվզման կրակով մրրկի:

Մեզ հետ են բոլորը— բանվորն ու գյուղացին,
Մեզ հետ է բանակը— հետևակն, այրուձին,
Մեզ հետ է անսահման յերկիրը ռուսական,
Աշխարհում տանջվողներ, խեղճեր ինչքան կան։

Գանդրահեր մարդու հրաշունչ ճառում
Կար հույզի հեղեղ, յերկաթեղեն կամք
Նա պատկերում էր ու բոցավառում
Գալիք օրերի շողշողուն մի կյանք:

Ցեվ ինձ թվում էր, որ այդ վայրկյանին,
Ցեթե ուզենար այդ ջահել տղան,
Իր մեջ ամբարված ուժովն ահագին
Դարավոր կաղնին կաներ տեղահան:
Նրա աչքերի հրին դիմանալ
Չեր կարող յերբեք վոչ մի չքնաղ կին,
Ցեվ ինքը մենակ, յեթե կամենար,
Կարող եր սանձել հողմը մոլեգին:

Ո՛, Ղուկասն եր դա, դերձակի վորդին,
Հատակից յելած, բարձրացած մի մարդ,
Հոտով մինչև կապված բուն ժողովրդին,
Կաղնու պես ամուր, վեհ ու խորարմատ:
Ժողովը լարված լսում եր նրան՝
Ապստամբության մրրկահավին.
Նրա աչքերը յերկու հուրհրան
Ու կենսաթրթիռ խարույկներ եյին,
Նրա ճակատը ճերմակ մարմարի



Մի հնաշխարհիկ, աքանչելի հերտ,
Են վո՞ր դիցուհու սիրտը չեր մաշի,
Ցերբ տեսներ քաջին այս հրաշակերտ.

Սեվ գանգուրները հով եյին անում
Թոհուն, խելացի այդ լայն ճակատին,
Չքնաղ գլուխը նման եր անհուն
Ցերկնքում կորած լեռան գագաթին...
Ղուկասն ավարտեց իր խոսքը բոցոտ,
Մարտերի ուղին ուրվագծեց ջինջ,
Մաղնիսացել եր այդ խրճիթը ցուրտ,
Լեզու յեր առել ամե՛ն, ամե՛ն ինչ...

5

Ժողովը ցրվեց: Գնացին նրանք
Դեպի ամրոցներ, դեպի զորանոց,
Դեպի զնդերն խառն ու բազմերանգ,
Ու բանվորական հյուղերն ալեկոծ:

6.

Գետի յեզերքով յերկու ստվեր
Դանդաղ քայլում են ու զրուցում.
Առած թուխչքի անտես թևեր՝
Դեպի գալիքն են արագ թռչում:

— Ղուկաս, յես այնպես վառ կարոտով
Ուզում եմ տեսնել մեծ Լենինին,
Ցեթե հաղթեցինք ու հողեթով
Արշալույս ծագեց մեր լեռներին,
Կերթամ տեսնելու մեծ Լենինին:

— Կհաղթենք, Սուրեն, մի կասկածիր,
Մեզ չի դիմանա յեվ վոչ մի ուժ,

Չե՞ վոր ռուսական յերկրում անծիր
Վաղուց ե ծագել հուր-արշալույս:
Լենինին տեսնե՞լ ես փափագում,
Հապա յես ինչքա՜ն եմ փափագել,
Քանի՜ գիշերներ՝ պառկած անքուն՝
Նրան եմ հոգումս միշտ վառ պահել;
Կհաղթենք, Սուրե՛ն, ու ցնծության
Որեր կբերենք ժողովրդին.
Կբանանք դռները դիտության,
Ազատ կշնչի հողի վորդին:

Մեր խենթ գետերի կատաղի ձին
Կդառնա, Սուրեն, հլու գրաստ,
Շողշողուն լամպերը լուսածին
Կնախշեն յերկիրն— սար, ձոր ու դաշտ.
Նայիր յերկնքին՝ ինչքա՜ն դյութիչ,
Ինչքան գեղեցիկ աչքեր ունի,
Մանկուց հմայել, գերել ե ինձ
Աստղատառ գիրքը մեծ անհունի:

Դաժան որերը կանցնեն, Սուրեն,
Կվերածնվի յերկիրը մեր,
Անթիվ շչակներ դիլ կսուլեն,
Կերգեն հասկերի ծփուն ծովեր:
Յեվ այն ժամանակ մենք մինչև լույս
Կկարդանք գիրքն այս հավերժական,
Բայց այժմ արի փոթորկահույզ
Գրոհենք դեպ այդ մեծ ապագան...

ՅԵՐԳ ՅԵՐԿՐՈՐԴ

Մայիսյան պայծառ լուսաբացին
Կարմիր դրոշները ծփացին:
Ժողովրդական գետը վարար
Յելավ ափերից ու հորձանքեց,



Խավարից հետո արևն անմար
Մեր լեռնաստանի սրտում ծաղկեց:

2

Գարաժը դարձել ե բոնկված
Ապստամբության հզոր շտաբ.
Զինավառ մարտիկ հրավառված
Մտնում են յելնում շտապ-շտապ:
Այնտեղ, ղեկի մոտ, հոգով անահ,
Կանգնել ե Ղուկասը ղեկավար,
Փայլում են վորպես կախարդիչ ջահ
Նրա աչքերի աստղերը վառ:
Գրում ե, խոսում, հրամայում,
Յեռանդից վառվում ինչպես խարույկ,
Բոլորի սրտերը հմայում,
Ծերուկին դարձնում ժիր ու առույգ:
Թշնամու սիրտը լցրած սարսափ՝
Գարնան գետի պես խնդուն ու հորդ,

Գալիս են շարքերը ապստամբ
Ավտոյով, հեծյալ ու հետիոտն:
Նայիր են բանվոր Մանուելին,
Ուստա Մելքոնին, Գաբրիելին,
Դարբին Իվանին, հյուսն Ահմադին,
Են հսկա հովիվ քուրդ Ասադին,
Ու են դրաշար Աչեղարդին.
Թշնամու հանդեպ ինչպես մի մարդ
Կանգնել, մղում են ճակատամարտ:

3

Ժողովուրդն ահեղ մի հարվածով
Տիրեց քաղաքին, բերդին մռայլ.
Ծփում ե անվերջ խինդի մի ծով,

Կյանքը գովում հազար քնար:
Քանդում են վորջերը խորախոր,
Ջարդում, խորտակում բանտ ու զնդան,
Հնչում յերգերը յե՛վ վառ, յե՛վ նոր,
Դղրդում հիմնը ազատության:
Ինչպես բաց անես դուռը բանտի,
Ազատ արձակես տանջվողներին,
Այնպես բացվեց դուռն ժողովրդի
Հազարամյա յերազներին:

4

Շշմած թշնամին սթափվեց հանկարծ,
Ցրիվ ուժերը հավաքեց բոլոր,
Յեվ սարսափահար, խոցված, մոլեգնած,
Վորպես ամպ պատեց արևի բոլոր:
Ու ինչպես սոված գայլերի վոհմակ
Հոգևոր հայրերն հավիտյան անհագ,
Խմբապես Մկոն, Հովսափ աղան,
Վաշխառու Հունոն, Աղաբեկ քյոխվան,
Հողատեր Խուդոն, խանութպան Ալին
Իրենց խաժամուժ խմբերը առան
Յեկան, թափվեցին ու կալ-մեջ արին
Ապստամբության խիզախ քաջերին,
Բայց սարսափեցին, կանգ առան լռին.
Այնտեղ շողում եր ինչպես վառվող սար
Հեղափոխության հուրը վոսկեվարդ,
Ու բոցավառվեց մի անհավասար,
Ահեղ, անխնա, դաժան գոտեմարտ:
Քաղաքում, սակայն, գիշեր ու ցերեկ
Թշնամին ազատ թափառում եր դեռ,
Առաջվա նման մնում անեղերք
Հողի, հանդերի, ծով հոտերի տեր:
Դեռ նրա վզին չեչտակի թափով
Ջեր իջել սուրը կայծակնաբերան,



Բայց մահվան գոտը հրե օղակով
Բոլոր կողմերից պատել եր նրան:
Ու նա վիրավոր արջի պես անզուսպ՝
Ապստամբության ամրոցն օղակեց,
Յեվ ժողովրդի խորքերն ալեծուփ
Յոթ ցնցոտապատ լրտես ուղարկեց...

5

Ցնծուն, ծիծաղուն քաղաքն անհամբեր
Սպասում եր իր խիզախ բարեկամ
Մուսայելյանին համբավաբեր,
Ջրահապատին հերոսական,
Բայց, ավա՜ղ, նրանք չեկան ու չեկան...

6

Թողեց քաղաքը զորքն ապստամբ,
Յելավ ամրացավ ժայռոտ բերդում.
Թնդանոթները վորպես սև ամպ
Վորոտում եյին ու վորոտում:
Ղուկասը ինչպես սեգ զորավար
Վարում եր կռիվը փոթորկուն,
Դիրքից դիրք սուրում ու մշտավառ
Քաջության կրակը բորբոքում:
Վոգեվորում եր, հուսավառում,
Մարտի խարույկը պահում անշեջ,
Ապստամբության նավն եր վարում
Ալեկոծ ծովում մութ ու անվերջ...
Մի խավար գիշեր հանկարծակի
Թշնամին հորդեց բերդի վրա,
Բայց դեմ առնելով համազարկի՝
Տեղում կանգ առավ ինչպես հիդրա:
Ու մարտը դարձավ օրհասական.
Կռվում եր մեկը քառասունի դեմ.

Նայիր լեռնցի այդ աղջկան—
Տասնհինգ գարուն չի տեսել դեռ,
Ու նայիր նրա կողքին չոքած
Երիտասարդին գեղադանդուր·
Սրտերում հրդեհ, աչքերում կայծ,
Կռվում են նրանք— յեղբայր ու քույր:
Բայց ահա փռնաց մի գնդացիր,
Սլացավ գնդակը վողբաձայն,
Ու ընկավ ջահելը նորածիլ
Վորպես փշրված չքնաղ արձան:
Ընկավ ու սաստիկ ճիչ արձակեց·
Արյուն եր հոսում նրա կրծքից·
Քույրը իր ձեռքի զենքը գցեց,
Եղբորը գրկեց ջերմ, կարեկից:
Աչքերն հառեցին մեկը մեկին,
Խամրում եր տղան ինչպես հրդեհ,
Նրա այտերին դեղնում եյին
Երկու դյութական կարմիր վարդեր:
Նայեց իր քրոջ յերկա՛ր, յերկա՛ր,
Քույրը լալիս եր սրտակտուր
Ու հանկարծ ասաց ձայնով անկար.—
— Սիրելի Զվարթ, քո ձեռքը տուր,
Մնաս բարով, մեռնում եմ յես,
Ե՛կ մի սրտանց համբուրեմ քեզ,
Իմ փոխարեն դու մայրիկին,
Բալիկներիս ու Զարիկին
Կհամբուրես ջերմ, սրտագին...
Եվ յեթե սրտանց սիրում ես ինձ,
Լսիր, կատարիր խոսքն իմ վերջին.
Գցած հրացանդ վերցրու նորից,
Խոցիր, հարվածիր ժանտ դահիճին:
Ասաց ու մարեց ինչպես մի ջահ
Հերոս մարտիկն այն ժրաջան:



8

Զվարթի կողքին յեռուն, յեռանդուն
Վառվում, կռվում եր Գաբրիել բիձան,
Գաբրիելի կողքին՝ առույգ, մշտարթուն
Խաչնարած Ասատը ահեղաձայն,
Ասատի կողքին՝ Սամսոնը դարբին,
Սամսոնի կողքին՝ Սերգոն նախրապան,
Սերգոյի կողքին՝ սեվաչ Սիրարփին,
Սիրարփու կողքին՝ մի հնոցապան,
Իսկ նրա կողքին՝ մի մեքենավար...
Այդպես անընդհատ իրարու կողքին՝
Հույսի կրակը միշտ պահելով վառ՝
Մարտնչում եյին տղամարդ ու կին:
Բոլորը հրկեզ, հորդահույզ հոգով
Մաքառում եյին, այրվում գոռ մարտում.
Մեկը մեռնում եր հաղթական յերգով,
Մեկը՝ սիրածի կարոտը սրտում...
Մեկը աղբերից, կրծքից, աջ թևից
Ծանր վիրավոր՝ մարտնչում եր դեռ,
Մեկը՝ վախեցող չարքերից, դևից,
Ղուկասի գնդում առյուծ եր դառել:
Ու կուրծքը տված թշնամու հրին՝
Բերդում կողպված, ծարավ, սովահար,
Ապստամբները մարտնչում եյին
Ե՛վ հոգեկորով, յե՛վ հերոսաբար:
Բայց այդ նույն ժամին դավադրությամբ
Ոձն եր գալարվում նրանց վոտքի տակ,
Վայրկյան առ վայրկյան վիշապի նման
Մթնում վոլորվում դառնում հազարտակ:
Բերդի հեռավոր մի խուլ անկյունում
Ֆելդֆեբելական կույտն եր հավաքվել
Մի լաբիրինթոս վոստայն եր հինում
Նրանց ավագը— անունը Սամվել:

Սամվե՞լ,— այդ մարդուն ո՞վ չէր ճանաչում.
Այդ նա յեր՝ ծեծով սպանեց Սեթին,
Այդ նա եր՝ ըլկում, մաշկում, չարչարում
Զարքաշ զինվորին ու ժողովրդին:
— Այսպես, ուրեմն, հարգո պարոններ,
Վճռված է հարցը, խոսողներ չկան.
Դուք՝ Մոսես, Մարտին, դուք պարաններ,
Հսկեք, վոր նրանք բերդից դուրս չգան:
Այսօր լուսաստղի դուրս գալուց առաջ
Մենք կշղթայենք բոլշևիկներին,
Յեվ արևը դեռ սարերում չառած՝
Նրանց կկախենք բերդի ժայռերից:
Թող աչքով տեսնի, ահից սարսափի
Ժողովուրդն ահեղ բիրտ ու ապստամբ.
Թե չէ՝ նա մեզ էլ մի օր կլափի
Իր ամենակուլ մեծ ագահությամբ:
Ցրվե՛ք, սպասեք ազդանշանին,—
Ասաց Սամվելը հրամայողաբար:
Ներսից մատնություն, դրսից թշնամին
Հրե անձրև եր մաղում անդադար:
Յեվ խոր գիշերին, յերբ վոսկին արդեն
Յեկել, հասել եր բերդի պարսպին,
Յերբ անհաց, անջուր, անգնդակ, անզեն,
Յերկրից կտրված ու աչքը ճամբին՝
Մաքառում եյին զորքերն ապստամբ,
Յերբ ներսում վոսկին թակարդ եր լարում
Վերից թափվում եր հուր-տեղատարափ,
Ու թնդանոթն եր վոռնում խավարում,
Ղուկասը մի բուռն կորյունների հետ
Վորպես փոթորկուն, խանդավառ տիտան,
Ճեղքեց թշնամու շարքերի շղթան,
Սուզվեց խավարում ու կորավ անհետ...



## ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

Լեռնային ճամբան նեղ, ոձագալար
Ձգվում է դեպի անորոշ հեռուն.
Ու մթնում տաղտուկ, մեղմ ու միալար,
Հուզված յերգում է վարարած առուն:
Քայլում են նրանք տառապած, հոգնած,
Բայց անընկճելի ու միշտ հուսավառ:
Մերթ հանդիպում են սարերի անանց,
Հեղեղի հորդուն, ժայռերի սուր-սայր,
Մերթ նրանց վատուժ վոտների տակից
Խախուտ, յերերուն քարերն են պոկվում
Ու անդունդների խորունկ հատակից
Փնչող հեղեղից հազիվ են փրկվում:
Մերթ մոլորվում են ու կորցնում ճամբան,
Լեռներից իջնում ձորը դժվարանց,
Բայց վոչ տանջանքը, վոչ մութը դաժան
Չեն ահաբեկում ու սաստում նրանց:
Քայլում են նրանք և ահա հասան
Ձորում ծվարած են Մազրա գյուղին.
Գյուղի տերտերը— նենգության հեսան—
Խմբով ձորն իջավ ու փակեց ուղին:
Յեվ խռովահույզ, հոսուն խավարում
Բերբոքվեց կռվի բոցը վարարուն...
—Նայեք ագռավին այդ կուկռան,
Բանդել է ուզում արծիվներին,
Սանձել է ուզում ազատության
Հպարտ, հաղթաքայլ նժույգներին,—
Ասաց Սուրենը ինքնամոռաց
Ու նրա գնդակը ահեղ սուրաց...
— Զարկեք, ընկերներ, ցած գցեցեք
Այդ գիշերային խրտվիլակին,
Արագ սլացեք, կամուրջն անցեք,
Խփեք թշնամու թեվ-թիկունքին,—

Ասաց Ղուկասը ու հողմաթափ
Խումբը գրոհով քշեց առաջ.
Ծլկվեց տերտերը թևաթափ
Ինչպես ջրահեղձ մի արարած,
Ինչպես ծեծկված, ջարդված դիակ
Ընկղմվեց մութի ծովումն անտակ:
Ղուկասի խումբը կամուրջն անցավ,
Բռնեց դժվարին մի ճանապարհ.
Վորպես վիթխարի, ցուրտ քարանձավ
Լո՛ւռ էր գիշերը, լո՛ւռ ու անբառ...

2

Թափառուն խումբը ամբողջ գիշեր
Քայլում էր դաժան ճանապարհով.
Մեկը պատմում էր դյութիչ հուշեր,
Մեկը տարվել էր իր խոհերով:
Մեկը վորպես մի մեծ նկարիչ
Ուրվագծում էր վառ ապագան,
Մեկը այնքա՛ն խոր, այնքա՛ն հուզիչ
Վերհիշում որերն արեվակամ:
Յեվ արշալույսը նոր էր բացվում,
Վոչխարը նոր էր սար բարձրանում,
Յերբ նրանք տանջված, մաշված, անքուն
Արգինա գյուղի ձորը մտան,
Ընտրեցին կանաչ գորգը ծաղկուն,
Նստեցին, վոր քիչ հանգստանան:
Կողքին ջրաղաց, դիմացը գետ,
Ձորը ծաղկալից, շուրջը լեռներ,
Բնության տված հրաշակերտ,
Անգին պարգեվը կարծես լիներ:
Ու ծարավ խումբը վայելում էր
Բնության գինու վճիտ թասից.
Մեկը նստել էր, մեկը թիկնել
Ու ամուր բռնել հրացանից,
Մեկը ննջում էր՝ յերկար պառկած՝
Մեկը սուլում, յերբ մեկ էլ հանկարծ...

3

Վեր թռավ տեղից Ղուկասը արթուն,
Կանչեց՝ ընկերնե՛ր, արագ դեպի զենք.
Խումբն ամբողջովին մի ակնթարթում
Պատրաստ կանգնել էր մարտունակ ու սեգ:
Տեսեք թշնամին մեզ հետապնդել
Յեկել, հասել է մինչեվ Արգինա.
Սա մահու–կյանքի մարտն է, ընկերներ,
Ուրիշ յելք չկա, կամ մենք յեվ կամ նա...
Ղուկասն իր խոսքը չեր ավարտել դեռ,
Յերբ աղմկալի ձայներ լսվեցին.
Յոթը բեռնատար սուրող ավտոներ
Հասան գետափին ու կից կանգնեցին:
Ցած թռան թափով, անհապաղ, արագ,
Վոտից մինչ գլուխ զինավառ մարդիկ,
Նրանց հետեվից ձայներով վայրագ
Գալիս էր, կարծես, արջի հարսանիք:
Յեկան, թափվեցին գյուղի բռունցքներ—
Արնախում մարդկանց մի պղտոր ամբոխ.
Կռիվն սկսվեց, շաչեցին զենքեր,
Թնդացին սար, ձոր, քար, քարափ ու հող:
Գոռում, գոչում էր Ավագն աժդահա,
Խմբին սպառնում կախաղան ու մահ:

Մուրադն էս կողմից, Զելիմն էն կողմից
Ձայնակցում էին մոլի Ավագին.
— Բնաջինջ անենք նրանց մեր հողից,
Ել չխնայենք վո՛չ մանուկ, վո՛չ կին...
Յեվ բորբոքվեց մի յեռուն գոտեմարտ

Արգինա գյուղի բուրալի ձորում
Քաջերի սրտում Մայիս կենսառատ,
Աչքերում գարնան կայծակն եր ցոլում:
Գնդակներն եյին անընդհատ սուրում
Ու թափվում ինչպես կապարե կարկուտ
Արշավում եյին Ավագը գլխում,
Ջելիմ խանն ահեղ, Մուրադ խանն անգութ:
Գնդակներն այնքան բուռն շառաչեցին,
Հրե կարկուտը այնքան հորդ տեղաց,
Վոր սար-ժայռերը հիմքից ցնցվեցին,
Ու գետի ջուրը փրփրաց, յեռաց:
Թշնամու շղթան դրոհեց առաջ
Փակվեց, նեղացավ ինչպես ոձի անցք,
Ղուկասը հանկարծ կուղեկուղ սուրաց
Վորպես հողմակոծ ովկիանի հորձանք,
Ու ձեռքի նռնակն ինչպես յերկնի շանթ
Նետեց թշնամու թանձր շարքերում.
Ընկավ Ավագը— այդ հայ խանը ժանտ,
Այդ անթագ շահը Հայաստան յերկրում:
Յեվ կրնկակոխ փախավ շարեշար
Ամբոխն ահաբեկ ու խուճապահար․․․
Բայց Ղուկասն հանկարծ թափով ցած փռվեց
Ինչպես շանթահար մի բազմաճյուղ ծառ,
Վիրավոր կրծքով մայր հողին փարվեց,
Կանաչում թաղեց աչքերը պայծառ:
Ընկերներն իրենց քաջ զորավարին
Գնդակների տակ առան ու թռան
Ու ջրաղացում հանդարտ վար դրին,
Վոր վոչ մի չար ձեռք չդիպչի նրան:
Թշնամին դարձավ անզուսպ, սանձարձակ
Ու առաջ սողաց նենգ ու մոլեգին,
Բայց վորպես անխախտ, ամուր ամբարտակ
Պարթևահասակ Բաղումովսկին,



Են ռուս զինվորը անբիծ ու վճիտ,
Տափաստանի պես վեհ ու լայնասիրտ,
Գաբրիելը արի, սեգ ու դյուցազուն,
Սուրենը խոհուն, մեղմ ու յերազուն,
Պղտոր հեղեղի առաջը առան,
Յեկողին զարկին, սիրտը խոցեցին,
Հերոսների պես կռվեցին, մեռան՝
Աչքերը հառած վառ ապագային:

4

Կամուրջը փակեց ու սպառնալից
Սողաց թշնամու ոձն արնածարավ,
Գալարուն շղթան բոլոր կողմերից,
Մահվան ողակի նման նեղացավ,
Խումբը դրոհեց, հասավ կամրջին:
Կամուրջի վրա դեմ-դեմի յեկան,
Սվին սվինի ու լանջը լանջին
Յերկու դարավոր, անհաշտ ախոյան:
Վառվեց մի անզուսպ սվինակռիվ.
Ցնցվում եր կամուրջն ահեղ բեռի տակ.
Շատերն ծվատված ու արնախեղդ
Գահավիժեցին, կորան ջրի տակ:
Քաջերն թշնամուն դեռ եյին մաղում.
Ջուրը կաս-կարմիր արյուն եր կտրել.
Նրանց հաղթություն, կյանք եյին մաղթում
Քրտնախառ մայրեր, ձոր, անտառ ու լեռ:
Յեվ ահա նրանք անկոտրում ու վեհ,
Վերջին դրոհով ճեղքեցին շղթան
Ու մարտնչումով արշավեցին վեր—
Դեպի փարոսը մեծ ազատության:

5

Թշնամին հորդեց ձորը ներխուժեց,
Կարեց, հոշոտեց ընկած քաջերին,
Թունոտ քրքիջով, փրփրած, հողմածեծ՝
Ճմլեց, տրորեց այդ կակաչներին:
Յեվ սուր ու թուրը ճոճելով ոդում՝
Հին Ջրաղացի դուռը ջարդեցին,
Աչքերով խոժոռ, ժանտ ու չարաթույն՝
Ղուկասի գլխի վերեվ կանգնեցին:
— Ղուկասը, հայե՛ր, հենց սա յե, վոր կա,
Լավ եմ ճանաչում այս արծվի ձագին,
Ուզում եր դառնալ հայ ազգին արքա,
Յերկիրը ծախեր ռուս-բոլշեվիկին.
Սուրբ Կարապետը, սուրբ խաչը վկա,
Յես պիտի հանեմ սրա սեվ հոգին.
Բայց նա արժան չե մարդկային մահվան,
Նա պետք ե մեռնի հերոս-քաջի պես.
Ա՛յ, այսպես, տեսնենք պիտի դիմանա՞,
Թե պիտի գոռա ինչպես մորթվող յեզ...
Ասաց յեվ ծայրը սուր-սայր սվինի
Դրեց Ղուկասի սքանչելի կրծքին
Յեվ դանդաղ, դանդաղ հաճույքով դժնի
Խոցում եր կուրծքը, նայում աչք-ունքին:
Արնաքամ Ղուկասն այրվում եր ցավից,
Բայց չեր հառաչում, ճչում, աղերսում.
Ջրաղացպանը լուռ, արտասվալից,
Սարսափից, վշտից դողում եր, մրսում...
Յերկու լայնալանջ ջահել դառնարած
Այդ տեսարանին եվ չդիմացան.
— Հերիք ե, հերիք, անխիղճ, անաստված,—
Գոռացին նրանք բամբ ու բարձրաձայն...
— Հերիք ե, հերիք, հոգի ունեցեք,—



Արձագանգեցին այս ու այն կողմից.
Ո՛, այդ մոլորված մարդիկն եյին հեգ,
Վոր բռնկվեցին զայրույթի կողմից:
Ինքնակալ խանը շփոթվեց մի պահ,
Կարծես թիկունքին իջավ ծանր բահ:
— Հերոսը դու յես, խմբապետ Մուրադ,
Սպանում ես դու վիրավոր մարդուն,
Ընկած քաջերին մաշկում ես, մորթում,
Տրորում ես դու դաշտ, արոտ ու արտ,
Չի կարող անել այդ ամեն մի մարդ,—
Հերոսը դու յես խմբապետ Մուրադ,
Քեզնից խնդություն չեմ խնդրում յերբեք,
Մահվան ժամին եվ բոլշեվիկ ենք մենք,
Ովկիանից եվ մեծ ու անսպառ ենք.
Յեվ մի որ կլինեն բանակները մեր,
Կբացվի յերկրիս արշալույսն անմեռ,
Յեվ այն ժամանակ, վա՛յ ձեզ, գազաննե՛ր...
Մուրադ խանն ահեղ փրփրաց, կատաղեց,
Սվինը խրեց Ղուկասի կրծքում,
Ամբողջ զորությամբ խառնեց, վոլորեց,
Դուրս թափեց պայծառ սիրտը մրրկուն:
Ջեվեց, ծվատեց ծաղկուն հերոսին
Վորպես անհագուրդ սոված շնագայլ,
Ու լուռ հեռացավ գոռոզությամբ սին,
Դահճի սառնությամբ ծանր ու դժնաքայլ...

6

Դադարեց վառվելուց խարույկը սրտի,
Ու հանգավ հերոսի հոգին անպարփակ,
Դալկացավ մարմարը ճերմակ ճակատի,
Փակվեցին աչքերը յե՛վ դյութիչ յե՛վ բարի...

## ՎԵՐՋԵՐԳ

Ընդվզման կրակը վառվեց մեր սրտում,
Փրփրաց, փոթորկեց ովկիանը ցասման,
Յեվ ինչպես վոր գարնան գետերն են հորդում՝
Վողողեց մեր հոգու դաշտերն անսահման:
Գյուղերում, հանքերում, գործարաններում
Մեծացավ ու կռվեց պայքարի վոգին,
Ու ըմբոստ գնդերը մեր խոր ձորերում
Դարավոր զայրույթով բարձրացան վոտքի:

Գրոհի գնացին հին աշխարհի դեմ,
Փշրեցին կարգերը բիրտ ու բռնակալ,
Ու մինչեվ այսոր եր գրոհում են դեռ
Մարտական շարքերը մեր հաստատաքայլ:
Նոր պայքար, նոր կռիվ հին թշնամու դեմ,
Մաքառում յերջանիկ գալիքի համար.
Ո՛, ել ո՞վ կարող ե մեր կերտածը քանդել,
Հանգցնել մեր վառած կրակները անմար:

Տե՛ս, ծանոթ խոր ձորից դուրս գալով հանկարծ՝
Թռչում ե գնացքը ցնծության ճիչով.
Ու վաղը Սեվանից մինչեվ Արագած
Կծփա լույսերի անսպառ մի ծով:
Ու վաղը ձորերում մեր անդնդախոր,
Լեռներում բարձրաբերձ, դաշտերում անափ
Չես գտնի վոչ մի տուն, մի գոմ, մի ախոռ,
Վորտեղ չշողշողա ելեկտրական լամպ:

Տե՛ս, անծիր, հրածին մեր հայրենիքում
Ի՛նչ հախուռն ե ցնծում մարդը հաղթական.
Յերկնքում ողաչու արծիվն ե յերգում
Մեր յերկրի յերջանիկ այսորն, ապագան:



Ու բազմազգ մի խիզախ, ազատ ժողովուրդ
Շրթունքին փառապանծ թռիչքների յերգ՝
Դաշտերում, ձորերում ու լեռներում լուրթ
Նոր բախտ ե դարբնում գիշեր ու ցերեկ:

Ու ահա լսում եմ յերգը մուրճերի,
Հղկում են վիթխարի գրանիտ քարեր;
Ի՛նչ անուշ ե հնչում կարկաչը ջրի,
Ի՛նչ ուրախ ե այս ռուս վարպետն ալեհեր:
Նա զվարթ հարթում ե քարերը վայրի,
Յեվ նրանց տալիս ե նոր տեսք ու նոր փայլ,
Վոր վաղը բարձրանա նրանց կատարին
Սիրելի Ղուկասը՝ վեհ ու հաղթաքայլ:

Ու ահա կանգնել ե կուռ պատվանդանին
Ղուկասի արձանը խրոխտ, տիրաբար,
Հասարակ, բայց կրակ մի դրոշակիր՝
Աչքերով վառվռուն ու արեվափայլ:
Ու նայիր ի՛նչ համառ, ի՛նչ հաստատակամ
Գրոհի յե գնում հերոսն անվեհեր.
Ո՛, այդպես վեհորեն, այդպես հաղթական
Լեռնային արծիվն ե ճախրում դեպի վեր:

Այդ բոցոտ, ռազմաշունչ սպարտակյանին,
Քսանմեկ տարեկան Ղուկասին պայծառ՝
Հաղթական յերկիրս ձեռքով մարդկային
Կերտել ե անխորտակ, խրոխտ մի արձան:
Իր թեվին հրացան, մարտական դիրքում,
Արեվոտ աչքերը գալիքին հառած՝
Յերջանիկ որորի կարոտը հոգում՝
Նա հաստատ հավատով նետվում ե առաջ...

## ԳՈՏԵՄԱՐՏ

Ձմռան մի խավար, ցուրտ գիշեր էր.
Ծփում էր մութի ովկիանն անհուն,
Աստղե հակինթներ ճակտին շարել՝
Պարզկա յերկինքն էր վերից նայում,
Ցերբ ուղեփակից լո՛ւռ դուրս յեկան
Իվանը, Կարոն ու Բուխուլան,
Մեկը սեւ, ինչպես Կաղբեկ հսկան,
Մեկը՝ Արագած, մյուսը՝ Մոնբլան։

Հեծած նժույգները հողմաթափ,
Լեռնային նեղլիկ կածաններով
Սահմանագծի յերկարությամբ
Ընթանում էյին լո՛ւռ, անխռով.
Ձնեիչ, խորամուխ շուրջը դիտում
Հայացքով պայծառ ու լուսաջինջ.
Հուրհրում էյին ու բոցկլտում
Նրանց աչքերը՝ լույսերի լիճ։

Կանգ առան։ Իվանը կապուտաչ՝
Սահմանանիշի կողքին նստեց,
Մարդակերպ մի ժայռ, վորպես ճանաչ,
Կարծես թե ժպտաց ու բարեվեց.
Բուխուլան հենվեց ժայռի մեջքին,
Կարոն թփի տակ հանդարտ պառկեց
Ու կարծես մեկը՝ կողպեք ձեռքին՝
Բնության բերանը պինդ փակեց։



Պապանձվեց նույնիսկ հովը թեթեվ,
Տիրեց լռությունը խլաձայն,
Ննջում էր մթնում սարը պարթեվ,
Վորպես վիթխարի քարե արձան։
Քնել էր կարծես ամեն մի բան,
Համրացել, լռել ջուր ու ցամաք,
Բայց վառվում էյին սահմանապահ
Աչքերը վորպես խարույկներ բարկ։

Ու նայում էյին նրանք հեռուն
Դիտում քարափներ, ձորեր, լեռներ,
Սահմանը այնպես էր յերեվում,
Վոր կարծես նրանց բռում լիներ.
Ուչքերը արած լարված աղեղ,
Մտքերը՝ նետեր, սուր, անվրեպ,
Հայրենի յերկրի մեծ, փառահեղ
Դարբասներն էյին պաշտպանում, յերբ...

Հանկարծ սահմանի մյուս կողմից
Ցերեվաց հեծյալ մարդկանց մի խումբ,
Աղմուկ լսվեց, բայց մեկը նորից
Գիշերվա բերնին դրեց մի խուփ,
Ու լռությունը դարձավ կապար,
Ցե՛վ հողեխառը, յե՛վ տանջալից,
Կարծես վառվում էր խավարն անրառ
Սրի, զենքերի շողուն փայլից։

Սպիտակ ձիերը մոլեգին
Վրնջում էյին ցուրտ խավարում,
Նրանց պայտերի դոփյունն ուժգին
Արձագանք տալիս սար ու ձորում.
Հանկարծ այդ անծիր, չարժուն մութում
Հնչեց խրխնջաց Կարոյի ձին,
Թշնամին լսեց ու չարաթույն
Աչքերը հառեց մեր սահմանին...

Աջից, առաջից հար-անդադար
Խումբը թափում էր հրե կարկուտ,
Կարծես վառվում էր մի խիտ անտառ,
Ծխում, ճարճատում մի վողջ կաղնուտ.
Ու արդեն քանդող, ոտար վոտքեր
Կոխոտում եյին մեր հողն ազատ,
Յերբ ինչպես հսկա, հսկա լեռներ,
Դեմ յելան յերեք յերիտասարդ:

Իվանն ու Կարոն միահամուռ
Կրակ բաց արին թշնամու դեմ,
Իսկ Ռուխուլային դեղադանդուր
Հրամայված էր սպասել դեռ.
Ռուխուլան դիրքում լարված նստել,
Վառվում էր ինչպես անշեջ քուրա,
Յերբ լսվեց մի ձայն՝ նռնակ նետել
Աջ կողմից յեկող խմբի վրա:

Հանկարծ խավարում մի բան ճայթեց,
Լսվեց ահավոր, հուժկու պայթյուն,
Կարծես ամբարտակն ուժգին քանդեց
Գարնան հեղեղի պետը հորդուն.
Վիրավորների աղմուկն ու ճիչ
Խորունկ թնդյունով խեղդվեցին,
Կարծես մրրիկը բլրի լանջից
Քշեց ու տարավ յե՛վ մարդ, յե՛վ ձին...

Թշնամու սրտում հալած արճիճ,
Հոգին՝ դավադիր մի մութ գիշեր,
Բոլորի աչքերը արնալից,
Հոնքերից կախված սև-սև իժեր...
Նրանք կրակով, աղաղակով
Մերթ վազում եյին, մերթ կանգ առնում



Ու մերթ յերեքի սուր գնդակով
Շանթահար յեղած հետ-հետ դառնում:

Հրե կարկուտը քանի գնաց
Դարձավ հորդառատ ու վարարուն,
Թնդյունից զարթնեց սարը քնած,
Վոռնացին գայլերը խավարում.
Աչքերը լեցուն վառ կրակով՝
Կարոն իր տեղից քիչ բարձրացավ,
Բայց հանկարծ ընկավ հառաչանքով,
Աչքերը խփեց ու քարացավ:

— Վազի՛ր՝ ոգնական ուժ բերելու,—
Գոռաց Իվանը Ռուխուլային,
Սուրաց Ռուխուլան քանց յեղջերու,
Քանց թեթև կաքավը լեռնային:
Միայն չսպանեն այդ քաջ տղին,—
Շշնջաց Իվանն ինքն իր մտքում,—
Յերգում, սուլում էր դժնի քամին
Ու ձյունի ովկիանն էր փոթորկում...

Իվանը կարծր, ժեռ քարերից
Շինեց ամրակուռ մի թաքստոց,
Նեղ անցքեր բացեց ամեն կողմից
Ու մեջը մտավ վորպես ամրոց:
Հրոսախմբին մոտ էր թողնում
Հարյուր քայլաչափ յեվ ավելի,
Լոկ այն ժամանակ էր դուրս թռչում
Նրա գնդակը սարսափելի:

Յերգում էր անքուն ձյունոտ քամին,
Մտնում ձոր, ծմակ, ծերպ, քարանձավ,
Թշնամու շղթան կախաղանի
Պարանի ողի պես նեղացավ.

Նրանցից յոթը օձագալար,
Կամաց դեպ Իվանը սողացին,
Իվանը նայում էր միալար,
Կարծես չէր տեսնում ֆշշող օձին:

Սանձած իր հույզերը բորբոքուն՝
Խաղաղ նայում էր Իվանն անահ,
Նայում էր, նայում, չէր կրակում.
Նրանք կարծեցին՝ մեռած է նա.
Բայց երբ յոթնյակին մնաց տաս քայլ,
Որ հասնի նրա դիրքի դուռն,
Իվանը կանգնեց անակնկալ
Ու նռնակ նետեց նրանց վրա:

Գոռում-գոչումով, գղրդյունով
Ժայռերն ու մարդիկ անդունդն ընկան.
Նռնակի պայթյունն անզուսպ թափով
Ցնցեց յե՛վ հեռուն, յե՛վ մոտական.
Ուղեփակի պետը հարեվան
Սահմանամասում շրջում էր լուռ
Լսեց թնդյունը, հողմի նման
Կտրեց ու անցավ ձոր ու բլուր:

Ռուխուլան թռչում էր ու թռչում,
Ճեղքելով ձյունի բուքն անլուին,
Յերբ Գայլի բերան կոչված կիրճում
Հանկարծ հանդիպեց ընկերներին.
— Օգնություն,— ասաց,— ու ամեն բան
Հասկացան նրանք այդ մի բառով.
Սլացան ինչպես խենթ ուրագան
Ռուխուլի յեկած ճանապարհով...

Իվանը մենակ յերկու ձիգ ժամ
Կռվում էր քառասուն թշնամու դեմ,
Ու յերբ օգնության հասան նրան,



Վերջին գնդակն էր նետում արդեն.
Թշնամու շարքում թողել էր նա
Յերեք վիրավոր, ինն սպանված,
Ու կանգնել դիրքում հպարտ, անահ,
Ինչպես դյուցազունը փառապանծ...
Բաջերն Իվանին ջերմ գրկեցին
Ու փաթաթվեցին յերկա՛ր, յերկա՛ր,
Ձորերը կարծես մեղմ յերգեցին,
Ու լեզու առան թուփ, սար ու քար.
Իսկ պետը նրա լայն ճակատին
Դրոշմեց համբույրն հերոսության,
Հազար ձայներով յերկինք-գետին
Միացան նրանց մեծ ցնծության:

1937 թ. հուլիս

## ՍԵՓՈ

(Պոեմ)

### 1

Ծովակ գյուղը ծվարել եր գեղեցկանիստ մի հովտում,
Ուր գարնան ափից յելած Մռնչան գետն եր հորդում.
Մարգագետինը յերփներանգ թեթեվ հովից յերերուն՝
Վորպես զուգված մի նորահարս նայում յերկնի հայելուն,
Ուր բազմացեղ թռչունների ճռվողյունից դյութական
Գերվում եյին անտառն, առուն, անխոս քարերը անգամ:

Զորն յեզերող լեռների մեջ նշմարվում եր մի բլուր,
Անտառապատ, աղբյուրաշատ, բայց ինքը միշտ համր ու լուռ.
Բլրի գլխին՝ Ռիզա-բեկի բերդն եր բազմել քառահարկ,
Բարձր գահից նայում եր ցած արնածարավ ու անհագ:
Իր վոտքի տակ հավետ թշշող Մռնչանը անխնդում,
Վոր կարծես թե խեղդվում եր խոր Վիշապակիրճ անդնդում:

Ռիզա բեկի հարստությունն անհուն եր ու անսպառ.
Նրան եյին դաշտերն անափ, արոտները վոսկեփայլ.
Յոթը հովիվ նրա հոտով ծածկում եյին ձոր ու սար.—
Այդ հնավանդ լեռնաշխարհում ո՞վ կար նրան հավասար.
Նրա դռնից դուրս եր գալիս բազմագլուխ մի նախիր,
Նա մի արքա, կրնկի տակ՝ գյուղերը հող ու մոխիր...

### 2

Ծովակն ուներ Սեփո անվամբ նորաբողբոջ մի հովիվ,
Ինքը դյութիչ ինչպես ծաղկով, աղբյուրներով լի հովիտ.



Հոնքերն մեկ-մեկ կիսալուսին, ճակատը ծով անսահման,
Աչքերն արեվ, շուրթերն հյութեղ, բեխերը սեվ ու կեռման.
Լայնաթիկունք ու լայնալանջ, բարձր, ինչպես հսկա սար,
Սիրում եր նա լեռներ, ձորեր, ջրերն անբիծ, ջինջ ու սառ:

Սեփոն ծփուն արոտներից ու սարերից իր սիրած
Միայն ձմռան եր ակամա վոչխարի հետ իջնում ցած:
Նրա հովիվ հայրը վաղո՜ւց, շատ վաղուց եր մահացել.
Գյուղում ուներ լոկ մի խրճիթ, մի մայր, մի տատ՝ կույր ու ծեր,
Բայց վողջ գյուղը՝ մանուկներից մինչեվ վերջին ծերունին՝
Անհունորեն սիրում եր միշտ իր վորբ հովիվ կորյունին:

Քանի՜ բերվոր չքնաղ կանայք ու աղջիկներ նորահաս
Փափագել են տիրել նրա սիրո սարին յերկնահաս,
Կյանքում գոնե գեթ մի անգամ նրա աչքերն համբուրել
Ու հոնքերի շվաքի տակ այրվող սրտերն օրորել,
Բայց ինչպես վոր ալիքները շոյում են ժայռն ու անցնում,
Նրանք գալիս գնում եյին, հովիվը միշտ նույնն եր, նույն:

Սակայն սերը բաց ե անում հազար փակով կողպած դուռ,
Նրա առաջ անզոր են բերդ, շղթա, զնդան, կայծակ-թուր.
Անցնում ե նա ամեն արգելք, խորտակում ե ամեն բան,
Սիրո սիրով կայսրուհու սիրտն ե մտնում մի չոբան,
Գեղեցկուհի աղքատ աղջկան սիրում ե մեծ զորավար,
Սերն կարող ե կապույտ յերկնից արև, աստղեր բերել վար:

Յեվ ահա մի արեվոտ որ զբոսանքի դուրս յեկած
Բեկի աղջիկը՝ Զարիֆան ու նաժիշտները հանկարծ
Սարահարթի արոտներում տեսան հովվին առնական,
Հիացմունքից նաժիշտների լեզուները կապ ընկան,
Յեվ հովիվն ու դուստրը բեկի աչքը աչքին հառեցին,
Հմայվեցին ու իրարու անխոս, բայց խոր սիրեցին:

Յեվ այդ որից, ինչպես շանթը հանկարծ խփում ե ծառին,
Ծառն այրվում ե ու անտառը բաժին անում բոցերին,
Այնպես հովվի թարթիչների նիզակները սրածայր՝

Զարիֆայի սիրտը մտան, սրտից հոգու խորքն անցան,
Ու նա դարձավ խռովահույզ, դյուրաբորբոք, մենասեր,
Ուզում եր միշտ առանձնանալ, շատ մտածել, քիչ խոսել:

Յեվ այդ որից հովվի սիրտը դարձավ մի ծով փոթորկուն.
Նրա շվու գայլայլիկը վողջ աշխարհն եր համակում.
Զով հովերը, առվակները, աղբյուրները սառնորակ
Չեյին մարում նրա սրտում վառվող սերը՝ բարկ-կրակ.
Սար ու ձորեր նրա համար դարձան մի բանտ ձանձրալի,
Գիշերները հոտը թողած՝ բերդի շուրջն եր ման գալի:

Բայց իր սրտում վոչ մի չոբան դեռ այդ բերդը չեր մտել.
Սիրով արբած հովիվ Սեվոն այդ բանը շատ լավ գիտեր
Ու նայում եր Զարիֆայի լուսամուտին կիսաբաց,
Դռնապահին, յերկաթեղեն դարբասներին պինդ կողպած,
Նորից սարերը բարձրանում, հոտը փռում կանաչում,
Շվին զլում ու շվու հետ ախո՛ւր, ախո՛ւր հառաչում:

3

Որեր անցան,— հովվի համար՝ ամեն մի որ մի ձիգ դար.
Նրա շվին լացացրեց յե՛վ ձոր, յե՛վ սար, յե՛վ անտառ,
Ու մի որ ել աղալարներ, բեկզադաներ հյուր յեկան,
Նշանեցին են նազանի, են հրեղեն աղջկան:
Որենք եր դա, բեկի դուստրը պետք ե սիրեր լոկ բեկին,
Բայց Զարիֆան դեմ ծառացավ այդ հինավուրց որենքին:

— Հայր,—ասաց նա,—վերեվն ալլա՛հ, ներքեվը դու, միայն դու,
Յես քո բալեն, քո գերին եմ, ո՛ւմ ուզում ես ինձի տուր,
Յերբեք, յերբեք մուր չեմ ցանի քո սրբազան նամուսին,
Յես նրա կինը կլինեմ, նա ինձ՝ տղար ամուսին,
Բայց սիրում եմ մի չոբանի, նա յե տերը իմ սրտի,
Նրանն եմ յես, ուզում ես տուր խանչալը առ, ինձ բդի...

Ասաց աղջիկն ու հեկեկուն, հուզված նստեց մոր կողքին.
Սեվ-սեվ ամպեր կուտակվեցին հոր աչքերի յերկնքին,
Նրա ճակատ կնճիռների լեռնաշղթան գալարվեց,



Նա վեր յելավ ու հոնքերի աղեղները խիստ լարեց,
Ձեռքը տարավ փղոսկրյա կոթ ունեցող դաշույնին,
Բայց այդ ձեռքից բռնեց իր տան խորհրդատու ծերունին:

— Ջահել ե նա,— ասաց ծերը,— ջահել ե ու բորբոքուն,
Ջահելն իր վառ յերազներում, ժայռից ել վարդ ե պոկում.
Այդ հասակում մարդու սիրտը քմահաճ ե ծովի պես.
Մեկ տեսնում ես՝ ալեկոծվեց, մեկ ել դարձավ մեղմ ու հեզ.
Կմեծանա, կյանք կտեսնի, կմոռանա ամեն ինչ.
Պղտոր գետը՝ լոկ ծովումն ե դառնում զուլալ, պարզ ու ջինջ:

— Իմ Զարիֆան կմեծանա, կմոռանա ամեն բան.
Նստիր, Ռիզա, չե՞ վոր դա յե յեղել նայեվ մեր ճամբան.
Յեվ աշխարհում քանի դեռ կան արեվ, աստղեր, ծնունդ, մահ,
Բեկի աղջիկը չոբանի կինը յերբեք չի դառնա,—
Ասաց մայրը ու համբուրեց աղջկա աչքերը վճիտ
Ու ցած ընկան վորպես հակինթ՝ արցունքների յերկու չիթ:

Ու ափերից պոռթկած-յելած փրփրացայտ գետի պես՝
Բեկը քիչ-քիչ հանդարտացավ, ասաց. «Աղջիկս, տարես,
Վոր բաց արիր քո հոր առաջ, ինչ կար սրտիդ մեջ թաքուն.
Մարգարիտը վոչինչ չարժե ովկիանոսի հատակում,
Բայց անգին ե, ամենագոր, յերբ հանում են լույս աշխարհ.
Այդպես ել քո սուրբ գաղտնիքը անգին քար ե ինձ համար:

Ահա նորից մոռացության ծովն եմ նետում յես նրան.
Համարենք թե վոչ յեղել ե, վոչ լսել ենք այդպես բան...
Յեվ նույն գիշեր նշանեցին Զարիֆային նազանի,
Տվին հարուստ, պատկառելի մի ալեզարդ իշխանի,
Յոթը գիշեր, յոթը ցերեկ հարսանիք եր մեղրածոր,
Դհոլ-զուռնի անուշ ձայնից դղրդում եր սար ու ձոր:

4

Արշալույսին՝ դառնարածներն ու մի ծերուկ նախրապան
Լուր բերին, թե բերդում տոն ե, հարս ե գնում Զարիֆան.
Սեվոն լսեց շանթող գույժը, զգաց խոցող մի կսկիծ,

Բոցավառվեց, կարծես գլխին կրակ թափվեց յերկնքից·
Թեյեվ վիշտը ահավոր եր, հասած վերքը՝ խոր ու մեծ,
Բայց նա զսպեց ցասման վագրը ու վիշտը դուրս չթափեց։

Յերկա՛ր, յերկա՛ր խոսում եյին, Զարիֆային գովերգում·
«Երնե՛կ նրան, ով ես դարդոտ, ես անցավոր աշխարհքում
Կտիրանա եդ աննման, շաղաղ-շարմաղ մարալին,
Ում շրթունքը գեթ մի անգամ կառնի նրա սեվ խալին»,
Ասին նրանք հազարերանգ ծաղիկներով լի ձորում·
Բաժանվեցին, բայց Սեվոյի սրտից արյուն եր ծորում։

Սեվոն յելավ, հոտը մեկից իրար գլխին ամբարեց,
Ների այծին կանչեց իր մոտ, գլուխը ջերմ համբուրեց,
Չտեսնված քնքշությամբ գգվեց, շոյեց շներին,
Մնաս բարով ասաց հպարտ, բարձրագագաթ սարերին,
Յեվ վոչխարի առաջն ընկած, ինչպես բանակ հորձանուտ՝
Բլրից իջավ, բռնեց բեկի յե՛վ արտ, յե՛վ դաշտ, յե՛վ կաղնուտ։

Ծովակ գյուղը անց եր կացրել հազարամյա մի փակ կյանք,
Բայց իր օրում դեռ չեր տեսել մի բան այդպես արտակարգ·
Մեկը-մեկին վորպես նորույթ հոտի գալն եր հաղորդում·
Բերնե բերան մեծանալով լուրը անցավ տնից-տուն·
Գեղջուկները դուրս թափվեցին, տանիքներին շարվեցին·
«Վատ նշան ե»— ծերերն ասին,— գլուխները շարժեցին։

Բեկը շքեղ շքախմբով դուրս եր յեկել պատշգամբ,
Դիտում եր իր դաշտերն անհուն ու լեռները հոյակապ·
Մեկ ել հանկարծ նրա ճակտին սեվ-սեվ ամպեր գոյացան,
Կնճիռների անդունդները ե՛լ ավելի խորացան,
Յեվ նա գոռաց. «Այդ ո՞ւմ հոտն ե, որ ցերեկով ինչպես ձյուն
Ծածկել կանաչ իմ դաշտերը, այդպես անհոգ արածում։

Ո՞վ ե հանդուգն այն հովիվը, վոր հողիս վոտք ե դրել,
Նրա ցեղը պետք ե ձիու վոտքերի տակ տրորել·
Զալի՛լ, ասա, ո՞ւմ հոտն ե դա, իմ թշնամու Զալ բեկի՞,
Թե՞ արնախում խան Ծալըղն ե քանդում ամբարն իմ բերքի·



Ուղարկեցեք խոլամներիս և շուտ, շտապ լուր բերեք»·
Զալիլն ասաց. «Ով ել լինի, պետք ե պատժել, հզոր բեկ»։

5

Խոնարհ, անձայն ձիերն հեծան յերկու խոլամ հաղթիրան
Ու հողմի պես՝ զառիվայրով դեպի դաշտերը թռան·
Հասան, տեսան՝ գետի ափին նստել ե մի ածղահակ,
Ձեռքին՝ կաղնե կորագլուխ հսկայական մի մահակ,
Ասին՝ բարեվ, չոբան Սեվո, եդ քեզ ի՞նչ ե պատահել,
Գժվե՞լ ես դու, թե՞ սիրուց ե աշխարհն աչքիդ խավարել։

Ինչպե՞ս ես դու համարձակվել մտնել արտերը բեկի,
Կատաղել ե Ռիզա բեկը, վեր կաց, փախիր, քեզ փրկիր,
Կերթանք կասենք, Ծովակ գյուղի հովիվն ընկել ե ժայռից,
Վոչխարն անտեր, անտիրական ցրվել իջել ե սարից·
Վե՛ր կաց, թե չե հիմա կգան ձիավորներ անհամար,
Դե՛հ, շուտ փախիր, ի՛նչ ես նստել եդպես հաստկող ու համառ։

Քմծիծաղով հանդարտ ու վեհ կանգնեց Սեվոն՝ Արարատ,
Ուսերից ցած լեռ ու բլուր, վոտքերի տակ դաշտ ու արտ,
Յեվ մի ձեռքով բռնեց ցուպը, մյուսով՝ կոթը դաշույնի·
— Վերադարձեք,— ասաց նրանց,— Սեվոն ձեզ հետ գործ չունի·
Դուք ել ինձ պես ռանչպար մարդիկ, մեր պապերը բարեկամ,
Մեր մեջ վրեժ, թշնամություն, վո՛չ յեղել ե, վո՛չ ել կա։

Ռիզա բեկն ե իմ թշնամին, թող ինքն անձամբ գա մեյդան,
Դե՛հ, գնացեք, հայտնեք նրան,— ասաց հովիվը տխտան·
Յեվ խոլամներն ահաբեկված հովվի դեմքից շանթայի,
Դաշտը թողին ու սրարշավ մտան գիրկը անտառի·
Յեկան, բեկին գլուխ տվին, քանց ասածու հողածին·
Ինչ տեսել ու լսել եյին հեվքոտ շնչով պատմեցին։

6

Զուռնան լռեց. հարսանիքի ցնծությունը պապանձվեց,
Տղամարդիկ դուրս թափվեցին, բերդը մեկից դատարկվեց,

Պարսպապատ բակը լցվեց հուզված ծովը մարդկային,
Հորձանք տալով սպասում էր Ռիզա բեկին– արքային։
Յեվ ահա նա. ձեռքի շարժում, բացվեց դուռը փառահեղ
Ու վոլորուն ճանապարհով առաջ հոսեց խուռն հեղեղ։

7

—.Չի ծնվել դեռ վոչ մի հովիվ,— ասաց բեկը չոբանին,—
Վոր ժառանգ Ռիզա բեկի հող ու ջրի սահմանին.
Բայց դու խլիթ ես յերեվի, դեհ, պատրաստվիր, ո՛վ խլիթ,
Խենթությունդ ծալիր մի կողմ, ցույց տուր հունարը բազկիդ։
— Ռիզա բեկն է իմ թշնամին,— ասել ես դու կատաղած.
Դեհ, յեկ մեյդան, մենակ կռվենք, ա՛յ անաղուն ջրաղաց։

— Մենակ քեզ հետ սուր–սրի տալ վայել չի մի չոբանի,
Դու խաս–ատլաս շորեր հագած, յես սարերի յաբանի.
Յես ի՛նչ խլիթ, դու ես խլիթ, վոր մի անզեն հովվի դեմ
Հանել ես մի ամբողջ բանակ. մարդիկդ հոտից շատ են.
Դեհ, պատրաստվեք բոլոր բեկերդ, բեկզադաներ աբրշում,
Ասաց Սեխոն ու յափունջու տակից քաշեց մի դաշույն։

Ինչպես նախիրն ընկած առյուծ մտավ բանակը բեկի,
Վոտքի տակին դաշտը տնքաց, սարսափ պատեց ամենքին.
Նրա վորոտ–մռնչոցից ժայռերն ուժգին ցնցվեցին,
Արագահոս գետակները իրենց ուղին փոխեցին.
Տրորում էր, ջարդում, փշրում, չէր խնայում վոչ վոքի.
Արար–աշխարհ, յերկինք–գետինք հավետ մթնել էր աչքին։

8

Միջօրեյի արեվն արդեն սկսում էր խիստ այրել,
Գյուղի բոլոր հոտաղները գետափին էյին հավաքվել.
Մեկը զոմեշ էր լվանում, մեկը՝ յեզներ հաստավիզ,
Մեկը սրինգ էր նվագում, հիշում յարին իր ազիզ.
Մյուսները վեգ էյին խաղում, յերբ լսվեց ճիչ դժվային.
— Հե՛յ, հե՛յ, հասեք, սպանեցին մեր Զորանենց Սեխոյին։



Ով ինչ ուներ, առավ, թռավ հրապարակը մարտի.
Մեկի ձեռքին լծից հանած յերկաթեղեն մի սամի,
Մեկինը սուր, լայնշեղբ դանակ, մեկին թելե պարսատիկ,
Բոլորն էլ խենթ, վրիժավառ, հուզված յե՛վ բորբ յե՛վ սաստիկ.
Հասնողն իրեն գցեց կռվի փոթորիկը արնաթույր
Ու բեկերին, աղաներին, մեծին, փոքրին՝ տուր, հա տուր։

Լուրը հասավ Ծովակ գյուղին, պոռթկած յեկավ գյուղն ամբողջ,
Ամենքի սիրտը վիրավոր, ամեն մեկը հուր ու բոց.
Կռվի հրդեհը բորբոքվեց, Սեխոյի սիրտը խնդաց,
Յոթնապատկվեց ուժը նրա, դարձավ մրրիկ սրընթաց,
Անցավ գլուխը փոթորկված կորիճների հողագործ
Յեվ մինչեվ վերջ վարեց կռիվն անխնա ու ալեկոծ։

9

Արեգակը մայրամուտի լուսամուտից էր նայում,
Կռվի դաշտում լռությունն էր միահեծան արքայում.
Կանաչ դաշտը կարմրել էր առատ թափված արյունից,
Կարծես կարմիր մի անձրեվ էր վար տեղացել անհունից.
Մի բանակը բերդն էր տանում Ռիզա բեկի արնոտ դին,
Մեկն իրենց գյուղ՝ հազար տեղից դաշունահար խլիթին։

Ծովակ գյուղում կար դարավոր մի վեհ կաղնի շուքավետ,
Բեկի բանակը սարն ի վեր բարձրանում էր դեպի բերդ,
Յերբ Սեխոյի ընկերները, վորոնց հետ յեվ խաղացել,
Յեվ տխրել էր, յեվ խնդացել, հասակ առել, բարձրացել,
Էն հոտաղները պարզասիրտ, հովիվները դըրացի՝
Այդ կաղնու տակ նրան հանդարտ թեվերից ցած դրեցին։

Աչքերն այրող մի կարոտով բացեց Սեխոն մահամերձ,
Այդ հայացքում ծովացել էր անհայտ մի վիշտ խոր ու մեծ.
Նայեց իր մոր, վերջալույսին, ընկերներին սրտակից,
Աղեկտուր թառանչ քաշեց հոգու պապակ անկունքից,
Ուզեց ասել մի ինչ վոր բան, բայց շուրթերը դավեցին,
Յեվ կոպերը, աչքի դռներն ընդմիշտ ամուր փակվեցին...

Թափորն ահեղ լռեց մի պահ, մարդիկ կարծես քարացան,
Հանկարծ հորդեց ակն արցունքի, լսվեց լացը բարձրաձայն.
Մորմոքացին հայ աղջիկներ, քրդուհիները սևվաչ,
Լաց ու արցունքն արհամարհող ջահելները լայնալանջ,
Հովվի շները դառնագին վոռնում էյին, հեկեկում,
Կանաչ կաղնին դեղին հագավ այդ սգավոր իրիկուն:

Մայրը շորերն էր պատռոտում, գլխի մազերը փետտում.
Մերթ ժպտում էր անմիտ ժպտով, մերթ մռայլվում, ամպոտում.
Մերթ մտածում էր գլխահակ, մերթ յերեսը չանգռում.
Մերթ գլխաշորը թափ տալով դնդնում էր ու պարում.
— Իմ Սեփոյի խարսանիքն ա, հե՞ր չեք խաղա, աղջիկներ,—
Ասում էր նա ու ծիծաղում սոսկալի ու սրտավեր...

10

Ծրխկոցով հետ-հետ գնաց, բացվեց դարբասը բերդի,
Հորդան հորդեց ու ներս տարավ մռայլ դիակն իր պետի.
Նորից փակվեց դուռը դաժան, տիրեց ծանր լռություն,
Լռության մեջ մի աղջիկ էր անդուսպ, անվերջ մղկտում,
Յերկու սև վիշտ էյին կրծում նրա սիրտը սիրայարկ,
Մեկը-մեկից մեծ ու անչափ, մեկը-մեկից վառ ու բարկ:
Մշուշն ինչպես մի լայնափեշ, համապարփակ վերարկու,
Պարուրել էր սարերը սեգ, լցվել ձորերն ահարկու
Յեվ խավարը, վորպես անափ, աներկրական ովկիանոս՝
Որորում էր քնած աշխարհն ալիքներով մեղմահոս,
Սակայն Ռիզա բեկի բերդը դեռ հուզված էր ու արթուն,
Յեվ բեկերի խորհուրդն ահեղ մի մեծ վոճիր էր նյութում...

11

Անցավ բեկը իր տոհմի հետ, անցան յե՛վ դահ, յե՛վ արքա,
Բայց հովիվը դարձավ դյութիչ հեքիաթների առարկա,
Ուխտատեղի դարձավ նրա գերեզմանը կաղնու տակ,
Սերունդները սերունդներին վորպես անգին մի կտակ
Թողին սիրո մի տխուր յերգ հովվի մասին ապստամբ,
Բանաստեղծն այդ յերգը թրծեց իր վառ հոգու ջերմությամբ:

1937 թիվ, դեկտեմբեր



## ՔՅՈՐՕՂԼԻ

(Հատվածներ)

1

Բերդաքաղաք Երզրումի կենտրոնում
Մի գեղեցիկ ապարանք էր բարձրանում.
Նա շինված էր վոսկեդեղին մարմարից,
Գիշեր-ցերեկ լուսավառ ու ցնծալից,
Ու ապրում էր այդ պալատում շողշողուն
Ալի փաշան— հզոր արքան իր հողում:

Ալի փաշան տեր էր մի վողջ աշխարհի.
Ուներ հոտեր փրփրաբուրդ վոչխարի,
Մարդեր, հողեր ովկիանի պես անսահման,
Այգեստաններ, չայիր-չիման, անդաստան,
Հարեմ, հարճեր, թիկնապահներ աներկյուղ
Յեվ հարկատու հազար ու մի շեն ու գյուղ:

Ուներ կանայք մագնիսական հայացքով,
Արեվը մոմ՝ նրանց դեմքի փայլի քով,
Ի՜նչ ծաղկոցներ, շատրվաններ, պարտեզներ,
Կանմահանար, ով այդ բոլորը տեսներ.
Սակայն Ալին հռչակված էր աշխարհում
Իր ձիերով հատընտիր ու վառվռուն:

Յեվ իր յերկրի վոր անկյունում լավ ձի կար,
Պետք էր նրա յերամակին «ընծա» գար.
Մինն բերում էր շաքար լեզվով շողոքորթ,
Մինը՝ թրով, թունավոր ու հաստակոթ,

Մինն՝ արեվխաչ ջրկապուհի խրճիթից,
Մինն՝ անվանի վաճառական «էդիթից»:

Ամին ուներ մի բազմափորձ ձիագետ,
Ընկերոջ պես մտերիմ էր ձիու հետ,
Մահվան ժամին հայրն է նրան կտակել,
Թե աշխարհում չկա ձիուց լավ ընկեր...
Նա, Հասանը, իմաստուն էր, ծանրախոհ,
Յե՛վ սիրում էր, և՛ ասում էր խիստ ու խոր:

Քառասուն տարի իր տիրոջը ծառայել,
Բայց յե՞րբ է նա փառքի, պատվի ծարավել.
Միշտ յեղել է հավատարիմ, անձնազոհ,
Չի աշխատել դժկամությամբ ու նազով,
Տվել է նա ջահելությունն իր գոհար
Փաշա-տիրոջ նժույգներին անհամար:

Նա իր յերկար ճանապարհին և՛ սիրել,
Յե՛վ սիրվել է աղջիկներից գեղանի,
Բայց յերբ արյունն սկսեց քիչ-քիչ սառել,
Ու տեսավ իր հետքից ժառանգ, ծիլ չունի,
Կյանքը կապեց մի սեվաչյա հայուհու—
Յեվ ունեցավ մի ժիր տղա, բոց ու հուր:

Ցնծաց Ամին. քսան տարով հետ գնաց,
Հասավ, խմեց ջահելության աղբյուրից,
Ջերմ համբուրեց նրան, վոր վոնց այգաբաց,
Ծագեց, ծաղկեց, իր հետ անշեջ հուր բերեց,
Հոր օջախում վառեց խինդի ատրուշան.
Նրա անունը դրեց Ռուսուշան:

2

Բայց աշխարհում ո՞վ է հաղթել դև—մահին,
Հավերժական այդ հրեշին սառնարյուն.



Ռուսուշանի մայրը մեռավ այն պահին,
Յերբ իր տղան մի մանուկ էր թրվում,
Իսկ Հասանի գլխին, սրտին՝ խաղաղ ծով,
Խոր ծերության ձյունն էր թափվում թախծով:

3

Ամառային մի հմայիչ, ուրախ օր
Ամին գնաց յերամակին տեսության,
Վոր փարատի իր վշտերը խորախոր,
Ընկեր դառնա ազատ, անվիշտ բնության.
Յեվ յերբ հասավ Ջուլալաջուր լճակին,
Մոտ վազեցին հոտաղները ցնծագին:

Նրանք Ամուն մտերմաբար խնդրեցին,
Վոր ձիերին ուշք դարձնի, պահպանի,
Մեկն ուզում էր հանդիպել իր սիրածին,
Վոր իր դիզված սիրո կարոտը առնի,
Մեկը տարով իր շապիկը չէր փոխել,
Տան փափագն էր նրանց ճամբան վողողել:

Ձիագետը ջահելներին չմերժեց.
Չե՞ վոր նա էլ նրանց պես էր մեծացել,
Ունեցել էր հույսեր, ցավեր ծանր ու մեծ,
Տառապանքի ճանապարհին ծերացել:
Յեվ գնացին հոտաղները դեպի տուն,
Մնաց Ամին ու մի խաղա՛ղ մենություն:

4

Ամին նստած կանաչավետ լճափին՝
Նավարկում էր հին հուշերի ովկիանում.
Ականջ դրած ալիքների ծփանքին՝
Ծխում և իր հուշերով էր հիանում,
Իսկ ձիերը փռված փարթամ արոտում՝
Փնչում եյին, արածելով խնդմնդում:

Եվ այդ ժամին լճից հանկարծ դուրս թռավ
Նրբասրունք, ազնվարյուն մի նժույգ.
Աչքերն արեվ, բաշը կայծակ, պոչը թավ,
Վորպես ջայլամ թեթեվաքայլ ու առույգ
Կանգնեց, նայեց նժույգների խնձույքին,
Սուրաց, հասավ են սեվաթույր դամբիկին,

Սիրահարի նման նրան պինդ փարվեց
Եվ նրա հետ ակնթարթում մերձեցավ.
Մինչև Ամին իր մտքերը հավաքեց,
Հրեղեն ձին յերամակից հեռացավ,
Արագ թափով թռավ հասավ լճակին,
Սուզվեց ջուրը, ձուլվեց ծիծղուն ծփանքին...

Այս անապատում, անկրկնելի տեսիլից
Խիստ զարմացավ մեր Հասանը փորձառու.
Այդպիսի մի խորհրդավոր, ահալից
Դիպվածի նա չեր հանդիպել իր որում,
Լոկ լսել եր իր տատիկից ալեզարդ
Հրեղենի մասին չքնաղ մի հեքյաթ:

Լսել եր, վոր Զուլալաջուր լճի մեջ
Կա հրեղեն, առյուծաբաշ մի նժույգ
Եվ պապից պապ պատմվում եր այդ անվերջ,
Հավերժական առասպելը անստույգ,
Նրա մասին սերունդներ են յերգել,
Բայց դեռ վոչ վոք հրեղեն ձի չեր տեսել...

Բարդու վրա նա յերկայրի դաշույնով
Փորագրեց տարեթիվն այդ տոնական,
Եվ վերևից տերևները շրշյունով
Վողջունեցին հրեղենի ապագան,
Իսկ Հասանը մտքով սրտին խոսք տվեց
Գաղտնի պահել այս հրաշքը վեհ ու մեծ:



5

Ժամանակը սուրաց, անհետ անց կացավ,
Եվ դամբիկը աշխարհ հանեց մի մտրուկ,
Բայց ի՞նչ մտրուկ— մի պատուհաս, մի սև ցավ,
Նիհար, փոքրիկ, փոչեխուռիվ մի միրուք,
Վոտքից գլուխ մի այլանդակ արարած,
Մի՞թե այդ եր հրեղենը, ո՛վ աստված:

Մեկն ասում եր՝ ջուրը գցեք, ազատվենք,
Մեկը՝ թե տանք գազաններին, շներին,
Մեկը՝ թե սա ձի չե, այլ մի չար անեծք,
Վա՛յ մեր գլխին, մեր արևին, մեր որին.
Ծաղրում եյին, թքում, մրում, քարկոծում
Եվ դամբիկի նախնիներին անիծում:

Պասլի համար կյանքը զոհող մի հոտաղ
Գոռգոռում եր խռովահույզ, չարալի,—
— Վա՛յ դու գայլին կեր դառնայիր, սեվ զորաղ,
Վոր այսպիսի նամարդություն չանեյիր,
Դու մեր անդին ջոկի պարծա՞նքը լինես,
Հանկարծ մի որ ծնես, արջի ձա՞գ բերես...

Իսկ Հասանը լո՛ւռ նայում եր ու ծխում
Եվ մերթ ընդ մերթ քթի տակին ծիծաղում:

Նա լսել եր ավանդապահ պապերից,
Վոր հրեղեն ձիու ձագը տեսք չունի,
Վոր նա կյանքի հրեշակերպ բաներից
Ել՝ ավելի այլանդակ ե, անճոռնի,
Բայց հողեղեն բարիքներից կենսավառ
Դառնում ե մի սքանչելի յերիվար:

Հավատում եր նախորդների պատմածին,
Փորձ չեր անում այս մասին դեթ կասկածել.

Ո՛, գիտության արեգակը հրածին
Դեռ այնքան խոր նրա հոգին չէր թրծել.
Յեվ հուսավառ ժպտում էր էն ծերունին,
Զմռան միջից՝ աչքը պայծառ գարունին:

6

Տարին յեկավ, ալիքի պես անց կացավ,
Բայց մարուկը չնրբացավ մի նշույլ.
Հաջորդ տարում մի քիչ աճեց, մեծացավ.
Սակայն նորից նույն խշուկն էր, ծանր ու ծույլ,
Քիթը տափակ, աչքերը փակ, վիզը կարճ,
Գլուխը մեծ, վոտքերը ծուռ ու սմքած:

Այդ որերում Ալի փաշին հյուր յեկան
Ստամբոլի մեծամեծներ անվանի,
Մեկը աշնան բարդու նման չոր, յերկար,
Մեկի վիզը բազմադարյան մի կաղնի,
Մեկը շլաչք, սապատավոր, ինչպես ուղտ,
Մեկը ջահել, մյուսը և՛ ծեր, և՛ խախուտ:

— Ալի,— ասին,— յերամակիդ լուրն առել,
Յեկել ենք վոր ձիեր տանենք մեզ վայել:

Ալին վստահ իր ձիերին հողմածին՝
Կանչել տվեց ձիապետին իմաստուն.
Միգոտ ճակտի խորշոմները բացվեցին,
Աչքերն դարձան մտերմական ու ժպտուն.
Յեվ կամակոր, անթաղակլի այդ արքան
Ծառայի հետ հաշվի նստեց այս անգամ:

—Լսիր,— ասաց,— Հասան ամի,
Թե ինչու յեմ քեզ հիշել,
Ինչպես գիտես, յես անվանի
Հյուրեր ունեմ այս գիշեր:



Հեռո՛ւ, հեռո՛ւ Ստամբոլից
Յեկել-յեկել են նրանք,
Վոր գլխեն իմ խնդումնալից
Նժույգները բազմերանգ:
Վաղը ճաշին հյուրերիս հետ
Յես պատշգամբ դուրս կգամ
Յեվ անհամբեր կսպասեմ քեզ,
Իմ տան ազնիվ բարեկամ:
Յերամակից դու կջոկես
Ամեն ցեղից մի ջեյրան,
Հրապարակ դուրս կբերես,
Թող տեսնեն ու հիանան:
Թե ձիերը համարեցին
Կատարյալ ու անպակաս,
Դու ամենից թանկագին ձին
Ինձնից նվեր կստանաս:

Ամու սիրտը լեղու առավ հրճվանքից,
Յեվ աչքերի խորույկները վառվեցին,
Յե՞րբ էր փաշան յեղել այդպես սրտակից,
Ովքե՞ր արդյոք նրան այդպես փոխեցին.
Յեվ Հասանը համբավաբեր մարդու պես՝
Ինչ ուներ իր հոգու խորքում դուրս թափեց:

— Փաշա,— ասաց,— ձիերիդ մեջ
Կա հրեղեն մի քուռակ,
Թեյեվ նա դեռ փոքր է ու խեղճ,
Կերպարանքը այլանդակ,
Բայց հասկացող, հմուտ մարդը
Տեսնելուն պես կիմանա,
Վոր եդ փոշոտ ադամանդը
Յերբեք եդպես չի մնա:
Փաշան ինձնից լավ կիմանա՝
Հորն է քաշում միշտ տղեն,
Ու նա մի որ պիտի դառնա

Սքանչելի հրեղեն...
Յեվ Հասանը Ալի փաշին պատմեց այն,
Ինչ տեսել էր Ջուլալաջուր լճի մոտ.
Ալին լսեց ուշքը լարած՝ լռելյայն
Յեվ հավատաց ձիապետին իր հմուտ.
Չէ՞ որ կես դար ժամանակ էր անցկացել,
Ամու խոսքին յերբեք նա չէր կասկածել:

Գովասանքի գանձարանից դուրս բերեց
Զմրուխտ խոսքեր, գովասանքներ հորդառատ,
Առատությամբ ձիապետին պարգևեց
Ու վեր կացավ ինքնակալն այդ ալեզարդ,
Մինչև դուռը ճամփա դրեց ծերուկին,
Ինքն շտապեց հյուրերի մոտ ընթրիքի:

7

Մի լայնարձակ, գեղածիծաղ դահլիճում
Նստած զորքին, թիկնած բարձին ծաղկազարդ,
Բազմել էին իշխանները հորանջուն՝
Ամեն մեկը իրա դիրքի համեմատ:
Խոսում էին առօրյայից, անցածից,
Յերբ ներս մտավ Ալի փաշան հարդալից:

Նա բոլորին միանգամից բարևեց
Յեվ ժպտադեմ գնաց բազմեց իր տեղում.
Դահլիճն հանկարծ աշխուժացավ, արևեց,
Կարծես մեկը վերից ծիծաղ էր տեղում.
Յեկան հերթով հարճ-աղջիկները նազան՝
Ներս բերելով կերակուրներ բազմազան:

Յեվ սկսվեց ընթրիքը մեծ, փառավոր,
Ժամերն թռան վայրկյանների թևերով...
Ալին որպես յեգիպտական փարավոն՝
Հպարտ իրա մրրկարաշ ձիերով՝
Այդ բազմապերճ խրախճանքի տաք պահին



Յելավ կանգնեց, այսպես դիմեց բոլորին.

— Ով փաշաներ, ամիրաներ,
Բեկզադաներ մեծատուն,
Խնդրում եմ ձեզ ականջ անել,
Նորություն եմ հաղորդում:
Ինչպես գիտեք, յերամակիս
Համբավն աշխարհն է առել,
Իմ ձիերն են ինչպես մայիս
Սար ու ձորերս զարդարել:
Յես յերջանիկ ու հպարտ եմ
Իմ ձիերով աննման,
Բայց ահա ձեզ պիտի հաղորդեմ
Մի անսովոր հրաշք բան:
Յես ունեմ մի հրեղեն ձի,
Հուրի-փերի արարած.
Լավ իմացեք, սա հեքյաթ չի,
Վոչ էլ սարքած սուտ առած:
Լայնատարած իմ մարգերում
Ապրում է նա լիասիրտ,
Շողշողում է յերամակում
Ինչպես թագի մարգարիտ:
Վաղն համեցեք, նրան տեսեք
Ձեր աչքերով սեփական,
Ստամբուլին նվեր տարեք,
Թող վայելի մեր արքան:
Յեվ այդ լուրից հյուրերը շատ զարմացան,
Մի ակնթարթ կարծես տեղում քարացան:
Լսել էին հեքյաթներից մանկական,
Վոր հրեղեն ձիեր էլ կան աշխարհում,
Բայց վո՛չ մի մարդ, վոչ աղքատը, վո՛չ արքան,
Դեռ չէր տեսել հրեղենին իր որում.
Ի՞նչ բախտավոր մարդ է յեղել այս Ալին,
Հրեղենով նա կտիրի աշխարհին:

Յեվ հյուրերի հոգիները մթնեցին,
Ատելության օձը փշշաց սրտներում.
Թեյեվ նրանք միաբերան գովեցին
Ծառաներին, ձիապանին ու Ալուն,
Բայց նախանձի դաշույնները թաքցրած՝
Մահիճ մտան լուսաբացից քիչ առաջ...

8

Արշալույսին Հասան Ամին վեր կացավ,
Լվաց, սանրեց հրեղենին դեռահաս,
Յերկար ջանաց: Յերբ ամեն ինչ վերջացավ,
Նայեց ձիուն և ի՜նչ տեսավ, նորահա՞րս,
Ո՛, վոչ, իզուր, ինչքան ճգնեց խեղճ Ամին,
Իր մտրուկը մնաց այդ նույն վայրենին:

Ամին թեև տեսավ, վոր իր անճոռնին
Հրեղենին վոչ մի բանով նման չի,
Յեվ յերբ փաշան նրան տեսնի այդ որին,
Հյուրերի մոտ պիտ կարմրի, ամաչի,
Բայց հույս ուներ, վոր յեկվորները գիտուն
Կճանաչեն հրեղենի վեհ վորդուն:

Ինչպես հմուտ պարտիզպանը ծաղկոցում
Չի շփոթվում չքնաղ վարդեր փնտրելիս,
Այնպես Ամին յերամակում իր ցնծուն
Ազնվազարմ յերիվարներ ընտրելիս՝
Զյերկմտեց, չշվարեց մի վայրկյան,—
Գիտեր նրանց թե՛ անցյալը, թե՛ ներկան:

Մեկը մյուսից հրաշագեղ ձիերից
Ընտրեց հազար յերիվարներ վրնջուն,
Նժույգների շքախմբին խնդալից
Արքա կարգեց իր մտրուկին դողդողջուն,
Վերջացրեց... Հանդիստ նստել է Ամին,
Սպասում է Ալի փաշի հրամանին:



9

Հյուրերն ահա կերած, խմած, արբեցած՝
Զարդարել են պատշգամբը վոխասուն
Ու բոլորը հրեղենով հմայված՝
Սրտատրոփ սպասում են, սպասում
Յեվ մերթ ընդ մերթ գերի դարձած նախանձին
Փսփսում են մեկը մյուսի ականջին:

— Տո՛, մի ասեք՝ թող շուտ բերեն
Հուր-հրեղեն այդ ձիուն,
Մի ամբողջ որ համբերել ենք,
Էլ ինչո՞ւ են մեզ տանջում:
Շտապում ենք հանուր գործին,
Բայց ուզում ենք իմանալ,
Թե ի՞նչ բան է հրեղեն ձին.
Ո՛, այսքան էլ դիմանա՞լ...

10

Սանթուրն անուշ ձայնակցում է չոնգուրին,
Դայլայլում է սիրո սոխակ քյամանչան,
Դափը վորպես թեթեվաբարո մի տիկին,
Ծիծաղում է, ծափ է տալիս բարձրաձայն,
Ու նրբիրան աղջիկները պարում են...
Մեկ էլ լսվեց, թե ձիերը բերում են:

Պատշգամբը հանկարծ լռեց, համրացավ
Յեվ կայծակի արագությամբ դատարկվեց,
Ապարանքում մարեց ամեն խոսք ու ձայն,
Շվայտ, զվարթ կեր ու խումը դադարեց.
Յեվ հյուրերը ամեն մեկը մի սուլթան,
Իջան դաշտը հրեղենի տեսության:

11

Ահա գալիս են շարքերով անընդհատ
Ձիե՜ր, ձիե՜ր սիգաճեմ ու սանձակոծ.
Վո՜րտեղից է այդպես հախուռն ու առատ
Ծայր առել այդ ցնծությունը արևոտ.
Գույների փայլ, աչքերի ցոլք, վեհ ու վառ,
Խրխինջ, գոփյուն, բաշե՜ր, բաշե՜ր հողմավար։

Թվում է, թե վողջ աշխարհը ծայրից ծայր
Դուրս է յեկել հրեղենին թամաշա.
Ահա, տեսեք, պարանոցը քառածալ,
Խամրած ու ծեր, տակառաձև մի փաշա
Ձեռքը դրած իր ցավագար աչքերին՝
Հարցնում է կողքին կանգնած բեկերին.

— Ասեք՝ վո՞րն է հրեղեն ձին,
Ի՞նչ գույն ունի, ի՞նչ հասակ...
— Մենք էլ, փաշա, շատ նայեցինք,
Բայց այդ փերուն չտեսանք։

Յեվ անցնում են յերիվարները խնդուն
Բարձր պահած գլուխները գեղանի՝
Վոտքերի տակ թե՛ գետինն է դղրդում,
Թե պալատը Երզրումի իշխանի,
Բայց հյուրերին չի գրավում վոչ մի բան,
Սպասում են հրեղենին արևփայլ։

Անցավ ահա վերջին զույգը փառահեղ,
Հրապարակը մի րոպե խաղաղվեց,
Յեվ հյուրերի ուշքը վորպես մի աղեղ
Ե՛լ ավելի թեվերն պարզեց ու լարվեց,
Յեվ այդ հեվքոտ, լարված, տարված վայրկյանին
Հրեղենին հանդեն բերեց մեր Ամին.

— Ահա ես էլ հրեղեն ձին,—
Ասաց Ամին մեր անահ,—
Ինչպես ծովը փոթորկածին
Հանկարծ սառի, համրանա,
Այնպես ահա այդ սև բոթից
Բազմությունը շփոթվեց,
Կարծես զրկվեց սրտից, ոգից
Յեվ ինչպես քար պապանձվեց։
Բայց վայրկյանը թռավ արագ,
Ինչպես դուժկան մի թռչուն
Յեվ հյուրերից մեկը վայրագ
Գոչեց ձայնով դողդոջուն.
— Ա՜յ ծերունի, խե՞նթ ես, ախպեր,
Թե՞ ծաղրել ես ուզում մեզ,
Հրեղենին շուտ արա, բե՛ր,
Իսկ այդ ջորին պահիր քեզ։
Հասանը թե՝ յերդվում եմ յես
Ռուռուշանիս արևով,
Յերբե՛ք, յերբեք չեմ խաբի ձեզ
Այս հասակումս ալևոր։
Դուք մի նայեք սրա այս մերկ
Գլխին, վզին անձոռնի,
Յեկող գարնան պիտի տեսնեք՝
Հրեղեն է, թե՞ ջորի։

...Յեվ վերևից քրքջոցը գայրագին
Շանթահարեց ձիագետի մեծ հոգին.

— Ա՞յդ էր, փաշա, հրեղեն ձիդ,
Վա՜յ ամաչկոտ այդ էշին.
Հեծիր, հեծիր գնա ջիրիդ
Հյուրերիդ հետ միասին։
— Հրեղենիս մոտիկ արեք,
Կյասես փրդոտ չուն լինի,

Ե՛յ, ծառաներ, յեկեք, թամբեք՝
Ալի փաշան թող հեծնի։
Մեկ սաստում են, մեկ ծիծաղում,
Քշքշում են, ծնկան տալիս,
Ալի փաշան ցավից դողում,
Գույն առնում է, գույն տալիս։
— Մեզ ինչի՞ տեղ դրիր, Ալի,
Վոր անխտիր ամենքին,
Սուր-բերիր այս ծաղրալի,
Այս խայտառակ հարսնիքին։
Ամոթ, ամոթ ձիապետիդ,
Յերամակիդ թանկագին,
Հազար ամոթ ձիապանիդ,
Քո նամուսին, օջախին,
Քո թեվավոր, անմահ, անգին,
Հուր հրեղեն քուռակին։

Յեվ հյուրերը վիրավորված, ալեկոծ,
Փախուստով ու կեղծ սուգով յեկան տուն։
Ալու սրտում բուն է դրել մի սև ոձ,
Դեմքից փախել ժպիտ, ծիծաղ, խնդություն.
Մռնչում է արնածարավ, կատաղած,
Թավ հոնքերից յերկու վիշապ կախ արած։

— Զար Հասանը դիտմամբ սարքեց
Այս թակարդը խորամանկ,
Վոր թանկագին հյուրերիս մեջ
Ինձ անի խաղք-խայտառակ։
Ո՞վ գիտե, թե վո՞ր թշնամու
Ձեռքից է նա կաշառվել,
Քեզ,— նամարդ շուն, քեզ, աննամուս,
Պետք է վողջ-վողջ խորովել։
Կուրացրեք այդ վհուկին,



Նա արեվին արժան չի,
Դեվերին է ծախել հոգին,
Այդ ճորտ, ստոր գյուղացին։
Ինձ փրկեցեք այդ անօրեն
Խարեբայից, սատանից,
«Հրեղենին» տվեք իրեն,
Դուրս քշեցեք իմ տանից։

Հրամանը մահից խիստ եր ու դաժան,
Յեվ վոչ մի մարդ չհանդգնեց քիչ մեղմել։
Ի՛նչ ես շշմել, չարաճճի Ռուսուշան,
Տե՛ս՝ ուզում են Ամուդ աչքերը հանել...
Յեկավ դահիճն արնակարմիր շորերով,
Ագռավաթեվ բեխի ծայրը շոյելով։

Թիկնապահներն ակնթարթում մոտեցան
Շշմած Ամու ձեռք ու վոտքը կապեցին.
Ծռված մեջքը ու մազերը ցիրուցան
Անգթորեն քարոտ գետնին զարկեցին,
Կրակ արին ու կրակում բոցավառ
Դրին յերկու յերկաթեղեն բարակ լար։
Գետնաթավալ, փոշեխառն ծերունին
Դիմեց փաշին աղաչանքով սրտակեղ.

— Ով Ալի փաշա, լսիր իմ ձայնին,
Վոտնակոխ արված՝ յես դիմում եմ քեզ։
Քեզ ծառայել եմ քառասուն տարի,
Յեվ ծերացել եմ քո շեն օջախում,
Յեղել եմ անբիծ ու հավատարիմ,
Ինչպես վայել է իսկական մարդուն։
Յես քո ձիերին սիրել եմ այնքան,
Ինչքան սիրում եմ իմ Ռուսուշանին,
Յեվ դու ես յեղել իմ տերն ու արքան,

Իմ բարեկամը և վոչ թշնամին:
Ու ահա այսօր քո դատաստանի
Առաջն եմ կանգնած, թագավոր արդար,
Աղաչում եմ քեզ, մորթիր, սպանիր,
Բայց ինձ մի զրկի արևից անմար:
Անարեվ, անլույս չեմ ուզում ապրել...
Կարծես յերկնքում բաղխվեցին ամպեր:
Վորոտաց Ալին ժանտ ու չանթալից
— Այդ շան աչքերը հանել բներից:

Ցեվ դահիճը լարը հանեց կրակից,
Խրեց Ամու աչքերի մեջ անվախթույր,
Ամին զգաց մահասարսուռ մի կսկիծ
Ու մռնչաց ինչպես մորթվող ահեղ ցուլ

Նաժիշտները սրտակտուր ողացին,
Հոտաղները, ծառաները լաց յեղան
Ռուսուշանը դառավ կորուկ մի կացին,
Դահճի վրա գրոհեց, բայց... դեմն առան:
Հասանն ինչպես վորդեկորույս մի հովազ
Ցեղավ տեղից, կանգնեց ահեղ ու դոռաց.

— Լսեք, մարդիկ, քույրեր, մայրեր,
Հասան Ամու անեծքին,
Իմ աչքերի լույսն է մարել,
Բայց չի մեռել իմ հոգին:
Անիծում եմ հոգուս խորքից
Ալի փաշին անարդար,
Նրա անից, հարկի տակից,
Ծուխ-մուխ չելնի հազար դար,
Նրա դաշտում կյանք չծաղկի,
Այգում չաճի վոչ մի ծառ,
Նրա սիրտը անվերջ ծակի
Վշտի սուրը սրածայր:



Լավ լսիր, թե, աղիզ Ռուշան,
Ինչ է ասում քո Ամին,
Այսուհետև Ալի փաշան
Մեր դուշմանն է, թշնամին:
Նամարդի հետ նամարդ յեղիր,
Զխնայես վոչ վոքի,
Թե չե մի որ բախտիս ուխտը
Քո դռանն էլ կշոքի:
Քասուն տարի ծառայեցի
Հավատարիմ, անարատ,
Բայց տես աչքերս հանեցին
Սա թող լինի քեզ խրատ:
Անեծք, անեծք մեր փաշային,
Փաշաներին մարդագել,
Անեծք նրանց հրեշային
Ճառանդներին մարդակեր...

12

Հրամանը անողոք էր ու անխախտ.
Հենց նույն գիշեր Ամուն տանից դուրս արին:
Ու դեմ առավ ճիպնետը տարաբախտ
Մենակության, աղքատության մեծ սարին,
Նրա հոգում ցասման դեռը հորդացավ
Ցեվ մորուկին, ողին առավ հեռացավ...

---

ԼԵՆԻՆ ՀՍԿԱՆ

(Փոխադրություն ժողովրդական պոեմ «Լենին փաշայի»)

1

*Են ո՞վ է, վոր ժողովրդին պահում է,*
*Են ո՞վ է, վոր ռանչպարներին ոգնում է,*
*Են ո՞վ է թեվ-թիկունք տալիս բանվորին,—*
*Նա մի հսկա յէ, անունը՝ Լենին:*

2

*Մի արդար օրենք կա, անունը՝ բոլշևիկ,*
*Են օրենքի ստեղծողն է Լենին հսկան:*
*Բոլշևիկը՝ հարուստներին մահ ու չարիք,*
*Ժողովրդին՝ թե՛ պահապան, թե՛ բարեկամ:*

3

*Աշխարհի գանձ-կարողությունն հարուստների մոտն եր բոլոր,*
*Կայք, ունեցվածք, անդ, անդաստան հարուստների մոտն եր*
*բոլոր,*
*Արծաթ, վոսկի, ջոհար, ալմաստ հարուստների մոտն եր բոլոր,*
*Աղքատն եր ու իրա յերկու դատարկ ձեռներ,*
*Հարուստներին՝ դարուն-ծաղիկ, աղքատներին՝ ձյուն ու ձմեռ:*
*Հարուստն ուտում յեղ ու մեղր, նստում ոսկե ինչպես փաշա,*
*Աղքատն չուներ մի ջուխտ տրեխ, չոր գարե հաց, թթու*
*չորթան:*



*Հարուստն զարկեր հողի գլխին, իր աշխատանքն անել տար,*
*Աղքատը խեղճ մաշվեր, տանջվեր, մինչև իրա հողին դուրս*
*գար:*
*Մեկ է խոսքը հարուստների, սուլթանների՝ արնախում սարդ,*
*Բայց արի տես, վոր նրանք քիչ, աղքատները շատ են ու շատ.*
*Քիչը շատին կողոպտում եր, ուտում նրա վաստակն արդար,*
*Ջե՞ վոր նրա ձեռքին եր դեռ ույժն ու զենքը, զորք, զորավար:*

4

*Դանակն արդեն կտրել, հասել եր վոսկորին...*
*Մի աղքատի տղա յեր նա հսկա Լենին.*
*Կալլի յելավ ցար-սուլթանի տերության դեմ,—*
*— Կռվով,— ասաց,— աղքատներին տի ազատեմ...*

5

*Տերությունը քաշեց, եկավ զորք-զորապետ.*
*Հարուստները դրին իրենց գանձն ու վոսկին.*
*Աղա բեկերն յելան, ինչպես մի պղտոր գետ,*
*Ու ոգնության յեկան են ցար-թագավորին.*
*Քանց մի վիշապ արշավեցին դեպի Լենին:*

6

*Լենին կանչեց իրա աղքատ Փաղիրներին,—*
*Կանչեց քյասիբ, բանվոր, չարքաշ ծառաներին,*
*Ինչքան կային՝ թափան Լենինին ոգնության,*
*Քամու նման սարից, ձորից սուր սլացան,*
*Քլունգ, մահակ, փայտ, չաք*) արած՝ թուր, հրացան:*

7

*Լենին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.*
*Ստալին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.*
*Կլիմ հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.*

*) Գղրարի գործիք

Սերգո հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կիրով հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կալինին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Շահումյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Միկոյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Ղուկաս հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Արշավեցին հսկաները կամքով համառ,
Նրանց հետքից սուրաց կարմիր զորքն անհամար:

8

Տէրութեյուններն ու հարուստներն իրենց զորքն առան եկան.
Ամեն կողմից ներս թափվեցին բանակները տերունական.
Ոզնականներն իրենց զորքն առան եկան.
Աղվես Ինգլիզն իրա զորքը առավ եկավ.
Ֆրանգստանն իրա զորքը առավ եկավ.
Կոլոտ–Ճապոնն իրա զորքը առավ եկավ.
Ամերիկան իրա զորքը առավ եկավ.
Չին–Մաչինը իրա զորքը առավ եկավ.
Ռոման–Տաճիկն իրա զորքը առավ եկավ.
Աջամ–Պարսիկն իրա զորքը առավ եկավ.
Մսրա Սուլթանն իրա զորքը առավ եկավ.
Նրանք բոլորն կռվի ելան Լենինի դեմ,
Վոր ազատված ժողովրդին հաղթեն, ջարդեն:

9

Հարուստների զորքի մի մասն՝ փողով, վարձկան,
Մի մասը նուրբ, փափուկ ապրած, նազուկ, անբան,
Հարուստների զորքի մի մասն՝ վախկոտ, ջանպահ,
Մի մասն՝ մարդիկ, անծանոթ ու օտարական:
Են, վոր փողով եր եկել, իրա գլուխն եր պահում,
Են, վոր փափուկ եր պահվել, իրա գլուխն եր ծածկում,
Են, վոր վախկոտ ջանպահ եր, վախենում եր ու ծլկում.



Փախչում եյին լեղաճաք զորքի շարքերը անծեր,
Միայն օտար ու անհոգ մարդիկն եյին մնացել:

10

Են, վոր Լենինի քաջի մարդիկն եյին, մեկ սիրտ եյին, մեկ հոգի,
Իրենց տիրած դիրքը յերբեք չեյին տալիս վոչ վոքի.
Բոլորն էլ զուրկ, դժբախտ, անտուն աղքատներ,
Բոլորն էլ զուրկ, անյեղ, անարատ ռանչպարներ,
Բոլորն էլ զուրկ, անգործ, աղքատ բանվորներ,
Աշխարհի խեղճ, սիրտը վառված մարդիկ եյին բոլորն էլ:

11

Զորքն ու ժողովուրդը զարկին, զարկվան իրար հետ,
Ծեծին, ծեծկվան իրար հետ,—
— Ե՜յ, վրեժի ժամն ե,— կանչեց Լենինը զորապետ.
Զարկեք, ձեր թշնամուն փուչ արեք,
Զարկեք, վոր միշտ ազատ շունչ առնեք:
— Ե՜յ,— ձայն տվեց ցար–սուլթանը իր զորքերին,—
Զարկեք եդ մերկ, չփլախ–չփլուխ նախիրներին,
Ով շատ ջարդի, նրան կտամ խաչ ու մեդալ,
Քաղցածների եդ խուժանը կուզի խլել
Թուրս ու թագս, տերութեյունս սուրբ ու արդար:
Զարկին, զարկվան առավոտից մինչ իրիկուն,
Զորքերի մեջ ինչքան կային ռանչպար մարդիկ,
Զորքերի մեջ ինչքան կային բանվոր մարդիկ,
Ասին՝ ինչո՞ւ զարկենք մենք մեր ֆաղիր յեղբայրներին,
Բոլորն փախան ու միացան մեծ Լենինին:

12

Զարկին, ծեծկվան առավոտից մինչ իրիկուն,
Փոշուց–ծխից մթնեց արևը յերկնքում:
Նրանք ունեն ռումբ, սուր ու թուր, թափ–թնդանոթ,
Սրանք՝ փշտով, զարաբինա, լոմ ու սողնակ,
Նրանք, ունեն մոսին, մարտին, գնդակ, վառոդ,

Սրանք՝ յեղան, բահ, անթարոց ու դաղանակ,
Նրանք ունեն տանկ, գնդացիր ու սավառնակ,
Սրանք՝ ճիպոտ, մուրճ, գերանդի, փոցխ ու դանակ...
— Ե՛յ,— ձայն տվեց Լենին հսկան, հեծավ իր ձին, սուրաց
առաջ...

Մինչ յե՞րբ,— ասաց,— մեր արյունը պիտի ծծեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— ես աշխարհը պիտի զավթեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— մեր իրավունքը տի խլեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— աշխարհը տի տիրապետեք...
Ասաց, քշեց առաջ՝ կարմիր դրոշը վեր բռնած,
Նրա հետքից բանվոր գնաց հազար-հազար,
Նրա հետքից մշակ գնաց հազար-հազար,
Նրա հետքից ռանչպար գնաց հազար-հազար,
Նրա հետքից անտուն, քաղցած հազար-հազար,
Նրա հետքից անգործ, գերի հազար-հազար,
Նրա հետքից անհող, անջուր հազար, հազար։
Բռնեցին վողջ աշխարհ, սար, ձոր, ամեն կողմից․
Բռնեցին կիրճ, քար ու կապան, ամեն կողմից․
Բռնեցին լիճ, չայիր-չիման, ամեն կողմից,
Բռնեցին արտ, արոտ, դաշտեր, ամեն կողմից․
Բռնեցին ծով, գետեր, աղբյուր, ամեն կողմից․
Բռնեցին ժայռ, անտառ, թփուտ, ամեն կողմից...
Զարկին, զարկվան, դուման ելավ աշխարհ բռնեց,
Զարկին, զարկվան լեշը շերտ-շերտ գետին փռվեց։
Ընկածների արյունն ելավ կապեց մի գետ,
Եվ արնագետն գլորում եր ժայռեր, քարեր,
Ամեն մի քար, ամեն մի ժայռ՝ մի հսկա լեռ։
Զարկին, զարկվան տերությունները մեկ կողմից,
Զարկին, զարկվան ժողովուրդները մյուս կողմից։
Նրանք ունեն ռումբ, թնդանոթ, վառոդ, գնդակ,
Սրանք՝ փշտով, փայտ, խաչերկաթ, զարաբինա,
Նրանք ունեն մոսին, մարտին, սվին, նիզակ,
Սրանք՝ չամփուր, մանգաղ, յեղան, գերանդի, բահ․
Նրանք ունեն տանկ, գնդացիր ու սավառնակ,



Սրանք՝ ճիպոտ, քար, հողակոշտ, կացին, ուրագ
Զարկին, զարկվան թողի ամպերը ահագին
Քանց Մասիս սար՝ ելան հասան արեգակին։
Ցար-սուլթանի զորքերի մեջ ինչքան կային,
Են, վոր փողով եր եկել, իրա գլուխն եր պահում,
Են, վոր փախուկ եր պահվել, իրա գլուխն եր ծածկում,—
Են, վոր վախկոտ ջանպահ եր, վախենում եր ու ծլկում—.
Փախչում եյին լեղաճաք զորքի շարքերը անծեր,
Միայն ոտար ու անհող մարդիկն եյին մնացել...

13

Կեսօրն թեքվեց, Լենին քաջի զորքը նեղվեց...
Ի՞նչ տի աներ մանգաղ, կացին, մոսինի դեմ...
Ի՞նչ տի աներ փայտ-քլունգը տանկերի դեմ...
Լենին հսկան լուր ուղարկեց ոգնող ուզեց․
Լենին հսկան հավար դցեց, ոգնող ուզեց․
Ոգնող-քյոմագն թափան, եկան չորս կողմերից․
Եկան, հասան սև բանվորներ հազար-հազար․
Նրանց հետքից հողագործներ հազար-հազար․
Նրանց հետքից նոքյար, հոտաղ հազար-հազար․
Նրանց հետքից մերկ-քաղցածներ հազար-հազար․
Նրանց հետքից անհող, անջուր հազար-հազար...
Ոգնությունը քամու նման եկավ, հասավ,
Լենին քաջի կողմը պնդվեց, հզորացավ,
Թագավորի կողմը հոգնեց ու թուլացավ։

14

Զարկին, զարկվան, դուման ելավ աշխարհ բռնեց․
Զարկին, զարկվան, լեշը շերտ-շերտ գետին փռվեց,
Ընկածների արյունն ելավ կապեց մի գետ,
Եվ արնագետ գլորում եր ժայռեր, քարեր—
Ամեն մի ժայռ, ամեն մի քար՝— մի հսկա լեռ։
Զարկին, զարկվան, Լենին քաջի զորքը զոռեց,

Զո՜ւ քաշեցին, առաջ թռան քաջերն առյուծ.
Ձնայեցին ել գնդացիր, տանկ, հրացան,
Կրծքով բացին իրանց ճամփան զորքի միջով.
Վոտքերի տակ լեշը շերտ–շերտ կոխին–անցան,
Յերկինք-գետինք փակեց, ծածկեց արյան մի ծով,
Յոթն ընկնում եր, մեկն անցնում եր, նետվում առաջ.
Լեշն թափվում եր, ինչպես աշնան խուփ տերև...
Ընկնում եյին, մեկն՝ անգլուխ, մեկն՝ անթեվ,
Ամեն կողմից՝ վիրավորի լաց ու հառաչ:
Լենին հսկան կերթա առաջ՝ բայրաղ բռնած.
— Հե՜յ-հե՜յ, տղերք, առաջ թռեք, որը մերն ե...
Առաջ անցավ քաղցածների բանակն ահեղ,
Տերունական զորքը խառնվեց, փախավ ցրիվ...
Լենին քաջի զորքը թափվեց ինչպես մորեխ,
Ինչպես յերկնից մեկեն իջած անթիվ արծիվ,
Ինչպես գարնան հեղեղալի գետերն անգութ,
Ինչպես ծովի փոթորիկը փրփրածին,
Ինչպես կայծակ, մայիս ամսի վարար կարկուտ,
Ինչպես սամում... Յերկինք-գետինք խառնվեցին:
Լենին հսկան գրոհ տվեց, բոլորն առավ,
Առավ նրանց թնդանոթներ-զենքեր բոլոր,
Առավ նրանց գնդացիրներ, տանկեր բոլոր,
Առավ նրանց սավառնակներ, ռումբեր բոլոր,
Բոլորն առավ, նրանց թողեց տկլոր ու մերկ,
Տվեց— ցրվեց, քանդեց, փռեց աշխարհով մեկ...

15

Թշնամու զորքն՝ վոր մեկն ընկավ, վոր մեկն փախավ,
Թողերն կտրավ, բաժին դարձավ չար սատանին:
Տերության պետ, են ռուսական մեծ սուլթանին,
Անտաշ, գմբո են բաց-բերան. լիրբ, անամոթ,
Են մարդ կախող, են սիրտ դաղող, անխիղճ ցարին,
Վողջ-վողջ բռնին, քաշ տվեցին Լենինի մոտ:



Լենինն ասաց,— եդ ի՞նչ արիր, կոնծող հիմար,
Քու ի՞նչ բանն ե կառավարել ժողովրդին,
Քու պապերի ու քու թափած արյան համար,
Պիտի սատկեք ամբողջ ցեղով, վորդոց-վորդի:
Են ցարն ասաց,— քու վոտքերին մեռնեմ, Լենին,
Մի սպանի, մատաղ եմ քեզ, խնայիր մեզ.
Մի կտոր հող տուր սեխ ցանեմ, դառնամ խոնարհ մի բոստանչի.
Քու շնորհքով բալեքիս հետ ապրեմ մինչի...
— Յես չեմ խաբվլի, վերջ տուր չողոմ եդ խոսքերին,
Ասաց Լենին, քաշեց սուրը. գլուխն զարկեց...
Գլուխն զարկեց, կեղտոտ լեշը գցեց քյուլխան,
Փողոցների շներն բոլոր թափան-եկան,
Քաշքշեցին, լեշը արին պատառ-պատառ:
Ցարի գլուխն զարկին յերկար ցցի ծերին,
Վեր պարզեցին, քանց արյունոտ, սպանված ցին,
Վողջ աշխարհը պտտցրին, մինչեվ նեխվեց,
Հետո բերին, աղբանոցում խոր թաղեցին...

16

Սատկեց գմբոն, վոր նստել եր յերկրի վզին:
Քանի՜-քանի՜ վոճիրներ եր են դայլն արել,
Քանի՜-քանի՜ մանուկներ եր խեղճ ու վորբ թողել.
Քանի՜-քանի՜ օջախներ եր են դեվն մարել,
Քանի՜-քանի՜ ջահել-ջիվան սաղ-սաղ թաղել.
Քանի՜-քանի՜ մայրեր, քույրեր սեվեր հագան,
Քանի՜ կյանքեր ճրագի պես փչեց հանգան.
Քանի՜ ջեյրան կանայք արեց վորբեվայրի.
Քանի՜ դաշտեր արեց խոպան, չոր ու վայրի.
Քանի՜ մարդիկ մղկտացին զնդաններում.
Քանի՜-քանի՜ յերկրի բերեց մահ ու արյուն,
Քանի՜-քանի՜ ըմբոստ-կտրիճ գլուխ զարկեց.
Քանի՜-քանի՜ պատերազմներ, կռիվ սարքեց.
Ուզում եր նա յերկինք-գետինք հրին հանձնի,
Աշխարհը դա իրա թրի տակով անցնի:

17

Լենին հսկան բոլշևիկի օրենք դրեց.
Երկրի կարգը գլուխն ի վեր նա շուռ տվեց.
Են առաջվա հարուստներին արեց կոտոր,
Խլեց ամեն ինչ նրանց ձեռքից, թողեց անտուն։
Են առաջվա աղքատներին արեց տանտեր.
Նրանց տվեց յեզ, կով, այծի, հող ու հանդեր.
Են բեկերին, աղաներին դարձրեց դերի,
Գործից գցեց, քշեց խորքերն եդ բոլորին,
Են առաջվա չոբաններին, նոքարներին
Ուսում տվեց, ղեկավարներ կարգեց յերկրին։
Վողջ յերկիրը գլուխ տվեց բանվորներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց ռանչպարներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց նոքյարներին։
Են, վոր խեղճ եր, անճար, քաղցած, տարավ առաջ,
Ով հարուստ եր, աղա ու բեկ, գլխին զարկեց,
Քշեց, գնաց մոր թևի տակ մտավ անդարձ,
Կամ թե քաղցած, ծարավ շրջեց, վերջը սատկեց։
Երկիր մաքրեց են իմաստուն Լենին հսկան.
Թողեց նրան, ով սիրում է սուրբ աշխատանք.
Ինչպես արև, ինչպես հզոր մի բարեկամ,
Ժողովրդին առավ իր լայն թևերի տակ...

———



## ԴԱՎԻԹՆ ՈՒ ՀԱՐԻՍԱՆ

1

Դավիթ հսկան մի բարդի ծառ դրած ուսին՝
Կեսօրվա մոտ, ամառային բարկ արևին,
Անծայր նախիրն առաջ արավ, քշեց, գնաց
Ծովասարի պաղ աղբյուրի ջրի վրա,—
Շոգից շոյվել, թխացել եր դեմքը նրա։

2

Ջրին նայող ժայռի շուքին անուշ քնած՝
Խռմփում եր նորափթիթ մի տավարած,
Դավթի քայլից հողը թնդաց, ժայռը ցնցվեց,
Տավարածը քնած տեղից յելավ նստեց։

— Բարի որ քեզ, ա՛յ նախրապան,—
Ասաց Դավիթը սրտատաք,—
Արի յես դու ախպեր դառնանք,
Ախպորից լավ կա՞ ուրիշ բան։

Ասաց, բարդին դրեց մի կողմ, նստեց անձայն,
Եվ յերկու սիրտ՝ հար-հավիտյան յեղբայրացան։

3

Սա գո՞րծ է, թե՞ կրակ ու բոց,—
Ասաց Դավիթն իր ընկերոջ,—
Շատ քաղցած եմ, ի՞նչ տի ուտենք,
Այծ էլ չկա, թե խորովենք։

— Մեր գյուղումը ցաման ժամ է, Դավիթ ախպեր,
Վողջ աշխարհը մեր ժամումն է յեկել— Թափվել
Դու կաց էստեղ, Նախրին նայիր, իսկ յես յերթամ
Համ հաց բերեմ, համ հարիսա, համ թթու թան։

— Ախպեր,— ասաց,— եղքան յերկար վո՞նց համբերեմ,
Դու տեղդ կաց, յես տի յերթամ առնեմ բերեմ։
Ցեվ իր բարդին առավ Դավիթը Նախրապան՝
Քառսուն գյադնոց քայլով բռնեց գյուղի ճամբան։

4

Ժամի բակում, պարզ յերկնքի աստղերից շատ,
Հավաքվել են ծեր, պատանի, յերիտասարդ,
Քլթլթում են կաթսաները՝ լի հարիսա․
— Բախտս բանեց, ժամանակին յեկա հասա,—
Ասաց Դավիթն ու մոտեցավ մեծ կաթսային,
Ձեռքը դրեց ճաշը խառնող կնկա ուսին․
— Տատիկ,— ասաց,— մի քասա ճաշ չե՞ս տա Դավթին,
Տատն ուղղվեց, նայեց՝ ասես Արարատին․
— Քեզ վոր չտամ, էլ ո՞ւմ տի տամ, կտրիճ Դավիթ
Սուսան տատը մատաղ լինի քո աչքերիդ։
Բայց են կողմից հասավ ժամհարը հաստաքիթ,

Բարեվ տվեց, ասաց չողոմ․
— Կաց, այ վորդի, վռազ չե՞ս խոմ,
Թող պատարագն էլնի, այնժամ,
Վկա լինի աստվածն արդար,
Ինչքան կուզես՝ լցնեմ ու տամ,
Թե՛ դու կուշտ կեր, թե՛ առ ու տար։

— Պատարագին վո՞նց սպասենք, քեռի ժամկոչ,
Նախրորդ մարդ ենք, ունենք հազար կարիք ու գործ․

Ջե՛, վռազ եմ, տավարս անտեր
Թողել եմ յես սար ու հանդեր,
Կերթան՝ կընկնեն հասած արտեր․



Ասաց և իր կեռագլուխ մահակ—բարդին
Մոտեցրեց մեծ կաթսայի յերկու կանթին,
Դրեց թեվին, ձեռքը բռնեց մի կարաս յուղ,
Մարդկանց ծովը ճեղքեց անցավ վեհ, անյերկյուղ․
— Բարով մնաք, ուխտավորներ, ժամ, պատարագ,—
Ասաց մտքումն և արշավեց հողմից արագ։

5

Հասավ, տեսավ ընկերն աղի լաց է լինում․
— Ինչո՞ւ,— ասաց,— լաց ես լինում, Սանասար ջան․
Նախրապանը պատասխանեց վողորմաձայն․
— Դավի՛թ, դու դեռ Սեվ ձորից դուրս չեյիր յեկել,
Ցերբ յոթը դեվ, ինչպես յոթը գազազած գել,
Ա՛յ, տեսնո՞ւմ ես, են ամպամած սարից իջան
Ցեվ մեր նախրից յոթն ընտիր յեզ առան տարան,
Ի՞նչ պատասխան տամ տերերին, այ Դավիթ ջան։
— Հե՞ր ես լալիս հոնգուր—հոնգուր հանց յերեխա,
Վոր եղպես ես, դու տուն գնա ու ճան խաղա,
Թեթեվ քամուց մի՛ թեքվիր դու ինչպես նոր տունկ,
Հաստատ կաց միշտ ինչպես սարը մեր Մարաթուք։
Են դևերն ո՞ւր գնացին, ճամբան ցույց տուր․
— Սարը յելան,— ասաց ընկերն աղեկտուր։
— Թող հարիսան մնա էստեղ, մինչեվ յերթամ
Քո թալանված յեզներն առնեմ բերեմ քեզ տամ
Նոր գանք, նստենք, անուշ անենք մեր հարիսան,
Վտանգի դեմ յեղիր տոկուն ու անսասան։

6

Դավթի ձայնի արձագանքը լսվում է դեռ,
Ցերբ նա հասավ սարի գլխին մի կանաչ տեղ,
Ցեվ ի՛նչ տեսնի․․․ Ավազակները փառահեղ
Գլխատել են տարած յեզներն անսովոր,
Կտրատել են, լցրել կաթսան յոթ կանթավոր,
Կրակ վառել կաթսան դրել են կրակին․

Ծալապատիկ կրակի շուրջը բոլորել,
Թավ բեխերը ականջի շուրջը վոլորել,
Զրուցում են և սպասում են անհամբեր,—
Միսը փրփրում, յեռում ե, բայց դեռ չի յեփել։
Սպասում են... Մեկ էլ հանկարծ ինչպես վորոտ,
Լսվեց Դավթի մռնչյունը մեծադղորդ.
— Ավազակնե՛ր, ո՞ւմ նախրից եք յեզ գողանում,
Դուք չե՞ք լսել են Ջոջանց տան Դավթի անուն,
Դե՛հ, պատրաստվեք, զենքերդ առեք իջեք մեյդան,
Յես եմ վոր կա են ծուռ Դավիթը Ջոջանց տան։
Դևերն յելան գուրզերն առան, զենք կապեցին,
Ամեն կողմից Սասմա ծուռին ողակեցին.
Իրար դիպան ահեղ ամպերը շանթածին...
Յոթը անգամ յելավ իջավ Դավթի բարդին,
Յեվ յոթը դեվ շառաչյունով փռվեց գետին։

7

Յեկավ կանգնեց գյուղամիջում Դավիթը քաջ
Յեվ սարերը շարժող ձայնով կանչեց հանկարծ.
— Սասունցիներ, ուխտավորներ, լսեք ինձի,
Յես փոխարեն ձեր են անկանթ, հին պղնձի
Հազար վիթնոց մի պղինձ եմ բերել ընձա,
Ով տխրել ե, թող ծափ զարկի ու կուշտ ցնծա.
Փոխարեն ձեր հարիսայի բերել եմ յես՝
Մորթված, յեփված յոթը պարարտ անարատ յեզ.
Կին, տղամարդ, հավաքվեցեք յեկեք տարեք,
Գիշեր-ցերեկ կերեք, խմեք ու քեֆ արեք։
Կաշիներն էլ խեղճ աղքատները թող հագնեն,
Թող Սասունում ուրախանան սրտերն ամեն,
Յերկար արեվ ցանկան Ջոջանց առյուծ Դավթին,
Վոր միշտ պաշտպան կանգնի իրենց արդար դատին։



# ԽԱՆԴՈՒԹ ԽԱԹՈՒՆ

(Պոեմ)

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Յեկեք խոսքով հայրենական
Հիշենք կանաչ կորիճ Դավթին,
Անմահ մընա Դավիթ հսկան,
Են Ջոջանց տան առյուծ վորդին։

Հիշենք Դավթի հոգու հատոր՝
Խանդութ Խաթուն անգին վարդին,
Հիշենք Սասնա են քրտնաթոր,
Ստեղծարար ժողովրդին։

Հիշենք Սասնա բարձրիկ սարեր,
Դավթի անցած քարն ու կածան,
Հիշենք Սասնա պաղ աղբյուրներ,
Յեվ Ոհանին վորոտաձայն։

Հիշենք Աստղիկ փահլեվանին,
Են անմուրազ Մհեր ծաղկին,
Հիշենք Սասնա նռան գինին,
Բոցաբերան Թուր-Կայծակին։

Ես վեհ ժամին չմոռանանք,
Սիրով հիշենք Թորոս քեռուն,
Դե՛, լսեցե՛ք, հիմի դառնանք՝
Հազար տարով գնանք հեռուն։

## ԱՌԱՋԻՆ ՅԵՐԳ

1

Յելավ, իջավ Սասնա Դավթի Թուր-Կայծակին, բազուկը կուռ,
Կխվեց Մսրա Մելիքը ժանտ, ինչպես վիշապն ամենակուլ,
Ձենը ընկավ արար-աշխարհ, թե Սասունցի մի քաջ-կտրիճ
Զրկեց Մսրա թագավորին իր արևից ու իր գահից,
Թե են հսկան ապավինած իր հաղթ բազկին, կայծակ սրին՝
Աշխարհն առավ իր ոտքի տակ, գընաց տիրեց հարուստ Մսրին։
Լուրն այդ անցավ բերնե բերան, հանց ձնադունդ սարից իջնող՝
Փոփոխվելով, մեծանալով հասավ յերկիրը Կապուտկող.
Հաղթող Դավթի համբավն առավ վարդերի վարդը աշխարհի,
Անառիկ բերդ, փըրփըրուն գետ Խանդութ Խաթունը քաջարի.
Առավ— յեվ ի՜նչ... սրտում վառվեց Դավթի սիրո կրակն անմար,
Աչքից փախավ քունը խաղաղ, մոռացավ թե՛ տուն, թե՛ հայր, թե՛ մայր։
Մի իրիկուն հորից թագուն մարդ ուղարկեց գյուղ ու վոստան,
Կանչել տվեց իր հայրենի հռչակավոր յերեք գուսան.
— Դե՛, գնացեք,— ասաց նրանց,— տեսեք Սասնա առյուծ Դավթին,
Յեվ նրա մոտ՝ սազի լեզվով՝ գովերգեցեք ձեր Խանդութին,
Թե ձեր յերգը սերըս գցեց են հսկայի զուլալ սրտում՝
Յես ձեզ կտամ առատությամբ թե՛ վոսկեղեն, թե՛ հող, թե՛ տուն։

2

Հեծած նժույգը հրեղեն, բարակավոտն իր Ջալալին,
Վորսասարից տուն եր դառնում են Սասնա տերն ու սիրելին.
Մեկ ել հանկարծ տեսավ յերեք փոշեթաթավ ոտար ճամբորդ՝
Հոգնած, մաշված կանգ են առել Սասնա բերդի դռների մոտ.
Մոտեցավ նա, սանձը քաշեց, ձին ծառացավ պարսպի տակ.



Դարձավ ասաց,— «Ոտար մարդիկ, ո՞ւրկից բարով և ո՞ւր կերթաք»։
— Կապուտկողցի յենք,— ասացին,— և գնում ենք Սասնա քաղաք,
Գուսաններ ենք, դամբուրից զատ չունենք վո՛չ տուն, վո՛չ հող, վո՛չ կայք.
Մենք քաջ Դավթի մոտ ենք գնում, Խանդութ Խաթունն ե ուղարկել,
Մեր Խանդութը զարկըվել ե Դավթի սիրուց՝ հիվանդ պառկել,
Թե մի չեն տան ճըրագ ես դու, լույս տուր՝ գնանք Դավթին տեսնենք.
Սարը սարին չի պատահի, բայց մենք մի որ կըպատահենք։
Խանդութ Խաթո՜ւն, ո՞վ չեր լսել այդ անունը կախարդական,
Ջիու վրա հիա՜ցք կտրեց մեր Սասունցի ջահել հսկան,
Դարձավ ասաց.— Դավթի հյուրը վողջ Սասունի հյուրն ե անգին,
Դուք այս գիշեր իմ հյուրերն եք, տեղ ունեք իմ գլխին, աչքին.
Յեվ իրիկվա մեղմիկ քամուց յերգում եյին արտերն հասուն,
Յերբ Դավիթը իր թանկագին հյուրերի հետ մտավ Սասուն։

3

Անո՜ւշ գիշեր, ամենուրեք հոգին շոյող խաղաղություն.
Յեվ գուսաններն ահա նստած՝ Սասնա Դավթի սիրտն են դյութում։
Առաջին հեղ են գուսանը՝ ճերմակ մորուք ու փառապանծ,
Իր տավիղը առավ, լարեց և Խանդութին գովեց, ասաց.
«Յերգենք Խանդութ Խաթուն կույսին՝ Սասնա կտրիճ Դավթի համար։

Նրա բերան անուշահամ մեղրով բացած,
Ատամները մարգարիտներ՝ մեջը շարած,
Հոնքերը հանց ծիածանի աղեղ-կամար։

Յերգենք Խանդութ Խաթուն կույսին՝ Սասնա կտրիճ Դավթի համար։

Նրա այտերն ալ են՝ ինչպես աղբրանց արուն,
Նա վարդի պես հոտ է տալիս ձմեռ, գարուն,
Նրա հոտով լեփ-լեցուն է ամբողջ աշխարհ:
Յերգենք Խանդութ Խաթուն կույսին՝ Սասնա կորիճ Դավթի
համար:

Ճերմակ է նա ինչպես յեկած մի որվա ձյուն,
Անարատ է, ինչպես մանուկն օրորոցում,
Խանդութի շողքն է յերկնքի արևն անմար:
Յերգենք Խանդութ Խաթուն կույսին՝ Սասնա կորիճ Դավթի
համար»:

Նրա հետքից են գուսանը՝ թխամորուք ու սրտաբաց,
Իր դամբուրան առավ, լարեց և Խանդութին գովեց, ասաց.
«Նրա են սև թարթիչները կռունկի թև,
Լգո՛, մի չափ ավելի:
Բոյը բարձըր, լեզուն քաղցըր, հոգին արև,
Լգո՛, մի չափ ավելի.
Նրա սիրտը հանց Ջալալու հրապարակ,
Լգո՛, մի չափ ավելի.
Նրա աչքերն՝ անուշահամ գինու բաժակ,
Լգո՛, անչափ գովելի.
Նրա ձեռքը ամեն ցավի դեղ ու դարման,
Լգո՛, դեղ ու դարման,
Ես աշխարհում ուրիշ ո՞վ կա Նրա նման,
Լգո՛, Նրա նման:
Վոչ մի ծաղիկ դեռ չի տեսել եդպես թիթեռ,
Լգո՛, եդպես թիթեռ,
Երնեկ նրան, ով կդառնա Խանդութին տեր,
Լգո՛, Խանդութին տեր»:
Վերջին անգամ են գուսանը՝ քսան տարին նոր բոլորած,
Իր քյամանին առավ, լարեց և Խանդութին գովեց, ասաց.
«Քայլում է նա հանց չորորան սինամա հավք,
Ա՛խ, հալա տղո, սինամա հավք:
Փափուկ է նա հանց մի քուլա անբիծ բամբակ,



Ա՛խ, հալա տղո, անբիծ բամբակ:
Են անուշիկ շրթունքները քաղցր շաքար,
Ա՛խ, հալա տղո, քաղցր շաքար:
Նրա համար ա՛խ է քաշում աշխարհն արար,
Ա՛խ, հալա տղո, աշխարհն արար:
Քառասուն ճյուղ ծամ նրա գլխից կիջնեն գետին,
Ա՛խ, հալա տղո, կիջնեն գետին,
Սասնա Դավիթն է տիրացել նրա սրտին,
Ա՛խ, հալա տղո, նրա սրտին»:
Յեվ Դավիթն արձագանգեց ալեկոծված, հուզեխռով.
— Գուսաննե՛ր, դուք բարով յեկաք, հազար բարով,
Անարատ եր սիրտս ինչպես կաթն անապակ,
Խանդութի սեր մերան գցիք, մակարդեցիք.
Ամուր եր սիրտս ինչպես Սասնա բերդն անխորտակ,
Քլունգն առաք, ապառաժ հիմքը քանդեցիք,
Պարզ եր սիրտս ինչպես աշնան զուլալ գետակ,
Գարնան ահեղ հեղեղի պես պղտորեցիք,
Գուսաննե՛ր, դուք ինձ մաշեցիք, կրակեցիք,
Խելքս տարավ ձեր են Խանդութը գեղեցիկ:
Հետո դարձավ եսպես ասավ համբավաբեր գուսաններին.
— Ինձնից տարեք ձեր Խանդութին անկեղծ բարև, հարգանք
խորին,
Ասեք նրան՝ յոթ որ անցած, ութերորդը դեռ չմըթնած՝
Հյուր կլինի Դավիթը քեզ՝ քո տիրակալ սիրով տարված:

4.

Յոթ որ անցավ յեվ Դավիթը իրա խոսքին հավատարիմ՝
Առավոտ չուտ իր ձին հեծավ, ընկեր դարձավ ճանապարհին:

5.

Սարից մարմանդ իջնում եյին իրիկնային անուշ հովեր,
Յերբ վոր հեռվից Դավթին հասավ մրմնջացող մի հորովել.

«Քաշի՛ր, Խումար ջան, քաշի՛ր Մարալ ջան,
Մեր ռեսի արտն անվերջ է, անծեր,

Ա՛խ անգութ աշխարհ, ես կյանքը դաժան,
Ես օրենքը չար, ո՞վ է ստեղծել։

Մենք դառը դատենք, նստենք անոթի,
Մեր վաստակն արդար՝ ուրի՞շը ուտի։

Քաշի՛ր, Խումար ջան, քաշի՛ր, Մարալ ջան,
Ձեր հոգուն մեռնեմ, ախպեր գոմեշներ,
Դե՛, քիչ էլ, քիչ էլ, ուժ տվեք լծան,
Ա՛խ յես էլ ձեզ պես մաշվել եմ, հոգնել։

Քաշե՛ք, գոմեշներ, վարեք, գոմեշներ,
Ձարքաշ ռանչպարի օրը սև էլներ։

Էլ ինչե՛ր տեսել մեր գլխով չանցան,
Անցան, գնացին հանց յերամ անծեր։
Ամեն օրվա պես ես սև օրից էլ
Շատն անցել է, քիչը մնացել։

Ցերեկը լռեց ու տասներկու գութանները լուռ կանգնեցին,
Գութնավորներն մեկ-մեկ յեկան դաշտի չուրջը բոլորեցին,
Դավիթն արագ Բանդիմահու կամուրջն անցավ, ճամբեն թեքեց,
Արտի միջով յեկավ ուղիղ մաճկալների գլխին կանգնեց։

— Բարի օր ձեզ, գութնավորներ։
— Հազար բարի, ղարիբ ախպեր,
Գալըդ մեր լույս աչքի վրա,
Համեցի՛ր, հաց անուշ արա,—
Ասին նրանք սիրանվեր։

— Չէ՛,— ասաց նա,— յես կգնամ,
Ձեզ թող մնա ձեր ջուրն ու հաց,
Ցես վոր ուտեմ բան չի մնա,
Դուք կմնաք ծարավ-քաղցած։
Մի ծերունի մաճկալ ասաց.
— Աշխարհ գութնով կլիանա,
Դու կեր, մենք թող մնանք քաղցած,
Հյուրը մեզնից քաղցա՞ծ գնա։
Դավիթն ուրախ՝ ձիուց իջավ, սանձը ձիու բերնից հանեց,
Քշեց արտ, յեկավ նստեց, մեջքը սայլի ակին հենեց,
Մի վիթխարի աման փլավ ու նոր թխած յերկու տաշտ հաց
Առին, բերին ու հարգանքով դրին իրենց հյուրի առաջ։
Ցեվ Դավիթը յոթը լավաշ կաներ մի մեծ, հսկա պատառ,
Այդ պատառով փլավն անուշ կգդալեր ու կուլ կուտար.
Հինգ պատառ, վոր ղարկեց, պրծավ, պղնձի տակը յերեվաց,
Սայլի չուքին, ծաղկի տակին մի մեծ բղուղ թան կար դրած,
Մաճկալն ասաց.— Ջահել ախպեր, հեռու մեկնող ճամբորդ մարդ ես,
Առ ես խմիր, սիրտդ հովցուր, ես շոգ օրին կը ծարավես։
Դավիթն ինչքան հաց կար-չկար, ժողվեց, արագ մեն մի բերան,
Բղուղ թանն էլ վերցրեց, մեկից մի կում արաց, խմեց վրան,
Ցեվ յերբ յելավ, վոր տի գնար, մաճկալները դարձան, ասին.
— Տե՛ս, անվար է սարից մինչ սար փռված արտը, ով հողածին,
Բայց դու մենակ նստեցիր ու վա՛յ տվիր մեր ամբողջ հացին,
Նաքան գութնի յոթն օրվա հաց մի մարդ մեկից ինչպե՞ս կուտի.
Նապխի բան ո՞վ կսպասեր, աստված քո տունը չքանդի։
Դավիթն ասաց. «Գութան քաշողը հաց կուտի, բա ի՞նչ կանի,
Բայց յես ձեր մեծ բարության դեմ, յերախտամոռ, կույր չեմ լինի,
Դուք քիչ նստեք, հանգստացեք, յես վեր կելնեմ և մի ժամում,
Կտեսնեք, վոր մի թիզ անվար հող չի մնա ձեր ես հանդում։

Իրիկվա կողմ գուլթանն առեք, գնացեք ձեր հացին հասեք,
Վոր անոթի չմնաք դուք և իմ հետքից վատ խոսք չասեք:
Ցելավ, յեկավ են տասներկու գուլթանները կապեց իրար,
Ցեվ ձին լծեց, թռավ մեջքին, դաշտում կանգնեց ինչպես մի սար,

Դարձավ ասաց մաճկալներին. «Ցեկեք, մաճերը բռնեցեք,
Ախպոր նման հանդիպեցինք, ախպոր նման էլ բաժանվենք:
Մաճկալները մեկ-մեկ յեկան, բոլոր մաճերը բռնեցին,
Բայց մի անհայտ, անօրինակ զարմանք պատեց փոքրին, մեծին:
Բռնեց Դավիթը բնատից ու ձին թեթև ասպանդակեց
Ցեվ տասներկու գուլթանները իր յետևից թափով քաշեց:
Քաշում եր նա գուլթանները, հանում արտի վերին գլուխ,
Վերին գլխից՝ ներքին գլուխ... յերկինք պատեց մուժ—մառախուղ:

Ցոթն անգամ գնաց յեկավ ու սևացավ դաշտն ահագին,
Մի պահ կանգնեց, մոտիկ ավեց ովկիանի պես փռված հերկին:

— Մշակները նրան ասին,— «Ո՛վ անծանոթ, մի հոխորտա,
Եդ քո ձեռքի շնորհքը չէ, քո քաջ ձիու շնորհքն է դա,
Իջիր ձիու վրայից դու, քաշիր, տեսնենք մենք մեր աչքով,
Քո՞ շնորքն է, թե քո ձիո՞ւ, չես խաբի մեզ մութ հնարքով»:
Դավիթը լուռ իջավ ձիուց, նայեց, տեսավ, վոր Ջալալին
Քրտնքի մեջ լող է տալի՛ս, հեվքը հասնում է արևին:
Ձիու քրտինքը լավ սրբեց, տարավ թողեց մի կանաչ տեղ,
Ուր դաշտն ամբողջ նախշել եյին ծաղիկները գալարաղեղ,
Հետո յեկավ գուլթանների ծանր շղթան առավ իր ձեռք,
Ինքը մենակ խորունկ վարեց, վերջացրեց դաշտն անեզերք:
Հողից հանեց գուլթանները և ժպտալով դարձավ, ասաց.
— Ո՛վ մշակներ, Սասնա Դավթին անուշ լինի՞ ձեր ջուրն ու հա՞ց.

Անուշ լինի Սասնա Դավթին մեր ջուրն ու հաց,
Վորտեղ գնա, նրա վոտքին քար չդիպչի,
Նրա առաջ ամեն մի դուռ միշտ լինի բաց,
Նրա շնչից անպտուղ ծառն էլ կանաչի:



— Շնորհակալ եմ, ո՛վ հողագործ, հալալ մարդիկ,
Դարդն ու ցավը ձեր օջախից հեռու լինի,
Ձեր սեղանին դիզված լինի ամեն բարիք,
Խմածներդ լինի նռան կարմիր գինի:

Հետո իր ձին առավ տարավ զուլալ ջրում մի լավ լվաց,
Մեջքին դրեց նախշուն թամքը և բերանը՝ վոսկեղեն սանձ,
Թեթև թռավ ձիու մեջքին, հավասարվեց դեմի սարին,
Ցեկավ մաճկալ մշակներին սիրով ասաց՝ Մնա՛ք բարով,
Ձին խթանեց ու սլացավ Կապուտկողի ճանապարհով:

6.

Խլաթի տերն ուներ, չուներ, աշխարհում մի աղջիկ ուներ,
Մարդ իր որում չուտեր խմեր, նրա դեմքին մոտիկ աներ:
Նրան բոլորը Չմշկիկ Սուլթան եյին կանչում յերկրում,
Շատերին եր խելքից հանել, բայց վոչ մեկին դեռ չեր սիրում:
Դավիթն յեկավ, վոր տի նրա պատուհանի տակից անցներ,
Տեսավ Սուլթանը Սասունցուն, եղպես մարդ դեռ չեր տեսել,
Անկնթարթում նրա սրտում բռնկվեց մի խելագար սեր,
Իջավ ներքև, ասաց. «Դավի՛թ, արի գնանք եսոր ինձ հյուր:
— Չե,— Չմշկիկ, ինձ իմ ճամբից յետ մի գցիր, յես ո՞ւր, դու ո՞ւր:
Սուլթանը, թե՝ գիտեմ, գիտեմ դու Խանդութի համար կերթաս,
Բա՛յց նա ճկույթըս էլ չարժի, Դավի՛թ, հետո գլխիդ կտաս,
Ասաց, Դավթին խաբեց տարավ և նրա հետ կերավ, խմեց,
Գիշերն մետաքս մահիճ գցեց, յելավ Դավթի կողքին քնեց...
Զղջաց Դավիթն առավոտյան. «Ես ի՞նչ բան եր յես բռնեցի,
Պիտի մեր աղը չխաբվեր, կնիկ մի վո՞նց խաբեց ինձի»:
Ասաց, յելավ հեծավ իր ձին ու զայրույթով քշեց առաջ.
Չմշկիկը նրա հետքից մատ թափ տվեց, կանչեց, գոռաց.
— Դու կաց, յեկար ինձ խաբեցիր, թողիր անմարդ ու գնացիր,
Թող յես Սուլթանը չլինեմ, թե Խանդութին վայելեցիր:

7.

Պատուհանի առաջ նստած, դեմքին ծիծաղ, սրտում գարուն,
Խանդութ Խաթունը խանդավառ սպասում է Դավթի գալուն:
Հանկարծ հեռվում յերևում է մի ձիավոր սպառազեն,
Վոր գալիս է ինչպես վորսի հետքից ընկած սրաչք բազեն,
Ձիու վոտքից բարձրանում են փոշու ամպերը ահագին,
Նրա Թրի կայծակնափայլ շողքը խփել է յերկնքին:

Ժամանակը դանդաղընթաց գետի պես է կարծես հոսում,
Բնությունը հազար ձայնով Խանդութին սեր է փսփսում,
— Առյուծազարմ Դավիթն է դա, խոսիր, խնդա, Խանդութ Խաթուն,—
Խոսում է նա իր սրտի հետ, աչքերի հուրը բոցկլտում:

Յեվ յելնում է հոր քարակոփ բերդի բարձր աշտարակին՝
Աչքերում խինդ, շրթին ժպիտ, սիրո խնձորը իր ձեռքին:

8.

Ջախվայրից ձորն իջնելով, կտրելով մի սրընթաց գետ,
Ինչպես ընկեր մտերմաբար խոսելով իր նժույգի հետ,
Յեկավ Դավիթը քրտնաթոր, կանգնեց բերդի դարպասի դեմ,
Թախով ուզեց բակը մտնել, բայց դարպասը փակ եր արդեն.
Յերեք անգամ դուռը բախեց, անպատասխան մնաց սակայն,
Ճակտին ամպեր դիզվան իրար, գայրույթ կտրեց Սասնա հսկան:

Իր չորս կողմը դիտեց մի պահ, դարձավ նայեց գլխի վերև,
Տեսավ չքեղ պատուհանում լույս է տալիս մի կին— արև,
Գուսանների գովածից ել հազար անգամ չքնաղ եր նա,
Հոնք աղեղի դիպուկ նետին վոչ մի կտրիճ չեր դիմանա,
Ճակատը մի լիալուսին, այտերը նման կարմիր նռան,
Նայեց Դավթին, անուշ ժպտաց և խնձորը նետեց նրան:
Մինչև Դավիթն շտապ-շտապ բռնեց սիրո խնձորն անգին,
Նայեց, տեսավ պատուհանում վոչ արև կա, վոչ շողք, վոչ կին:



Խիստ գայրույթով նորից թակեց փակ դարպասը յերկաթապատ,
Հանկարծ դուռը յերգով բացվեց, դեմը կանգնեց մի հսկա մարդ.

Դավիթն իրեն վայել ձևով բարև տվեց անծանոթին.
Հսկան նրա բարեն առավ և սիրաբար հարցրեց Դավթին.
— Անունդ ի՞նչ է, ո՛վ անծանոթ, ի՞նչն է բերել քեզ մեր աշխարհ.

— Իմ անունն է Սասնա Դավիթ, պապիս անունը՝ Սանասար:
Կապուտկողի Թագավորի դստեր համար եմ յես յեկել,
Նրա մասին մեր Սասունում լսել եմ յես քաղցր յերգեր:
— Իսկ քո անունն ի՞նչ է, ծերուկ, այս պալատում ի՞նչ ես անում,

— Քառսուն տարվա դռնապան եմ, չե՞ս ճանաչում Համդոլ ամուն,
Համդոլ ամուն, Սասնա՛ Դավիթ, ճանաչում է աշխարհս ամեն.
— Հիմա, ասա՛, Համդո՛լ ամի, յես Խանդութին ինչպե՞ս տեսնեմ:

— Ամեն ուրբաթ առավոտյան իր Խաս Բաղչեն կիջնի Խանդութ,
Ենտեղ պիտի տեսնես նրան, ուրիշ տեղից չկա ոգուտ:
Վոր Խանդութին առնես, Դավիթ, ինձ տի անե՞ս քեզի քավոր:
— Կանեմ, Համդոլ և կդառնանք Դավիթ՝ սանհեր, Համդոլ՝ քավոր..

9.

Ո՜, Խաս Բաղչեն, ո՞վ ստեղծեց եդեմի մի հրաշալիք,
Գիշեր-ցերեկ խնկարկում են հազար տեսակ անմար ծաղիկ,
Ջրուցում են յերկինք հասնող շատրվաններն արծաթաձայն,
Զուլալ ջրերն ինչպես գոտի՝ կապում են միշտ վառ ծիածան,
Սիրահարված սոխակները՝ գլուխ դրած բացված վարդին՝
Համերգով են դիմավորում լուսապայծառ առավոտին.
Դավիթն եսոր եդ անթառամ ծաղիկների բույրով արբել՝
Սպասում է իր սիրուհուն և՛ տենչավառ, և՛ անհամբեր:
Ահա բացվեց դուռը բաղչի ու ներս մտավ մի հրեղեն,
Ծաղիկները ծիծաղեցին ու ծափ տվին ամեն կողմեն,

Սոխակները, վորպես լույսից տարված-դյութված թիթեռնիկներ,
Վարդի թփերը լքեցին, յեկան, ընկան նրա վոտներ:

Քնքուշ նազով, չորորալով, հազի չորերն անարատ ձյուն՝
Մոտեցավ նա չատրվանի յեզրին նստած մեր Սասունցուն.
— Բարե՛վ, ասաց,— Սասնա՛ Դավիթ, հազար բարով ես յեկել դուն,
Բայց ինչո՞ւ յես նստել եղպես մենակ ինչպես ճամբորդն անտուն:
Խանդութն ասաց, սիրով ժպտաց ու կից նստեց Դավթի կողքին.
Դավթի կողքն ենպես տաքցավ, կարծես դիպավ թեժ կրակին,
Եվ մոլորվեց, խոսք չգտավ, վոր պատասխան տար Խանդութին,
Բռնեց սեղմեց իր լայն կրծքին, համբույր տվեց նրա ճակտին,
Չը հովացավ սիրտը պապակ;
Գրկեց գլուխը գեղեցիկ, համբույր տվեց յերկու այտին,
Չը հովացավ սիրտը փափագ,
Ու ձեռք գցեց վոր համբույր տար իր Խանդութի անբիծ սրտին,
Բայց իր բերնին իջավ ապտակ:
Յեվ արյունը Դավթի բերնից ցայտեց ինչպես աղբյուրն առատ,
Վողողելով չատրվանի ջրերը ջինջ ու անարատ:
— Խանդո՛ւթ,— ասաց Դավիթը խիստ,— ասա՛, ինչո՞ւ ինձ զարկեցիր,
Թե դու ինձի չեյիր սիրում, ինչո՞ւ Սասուն մարդ ճամբեցիր:
— Դավի՛թ,— ասաց Խանդութն անուշ,— դու յես սրտիս սիրածն անգին,
Քեզանից զատ յես սեր չունեմ, հայտնի յե դա վողջ աշխարհքին,
Քառսուն ջահել-ջիվան իշխան ես յոթ տարի ձեռքս են խնդրում,
Յես աշխարհի ջահելներից միայն, միայն քեզ եմ ընտրում,
Բայց ամեն բան իր ժամանակն, իր տեղն ունի, կորիճ Դավիթ,



Ով խախտի այս կանոնը հին, կարյունոտի բերան ու քիթ:
Են մեկ անգամ, վոր դու տաք-տաք իմ ճակատը համբուրեցիր.
Են քո յեկած ճանապարհի սիրո համար,
Են մեկ անգամ, վոր հանց կրակ դու իմ այտերը համբուրեցիր,
Են քո անփորձ ջահելության սիրո համար,
Դրանից դեն համբուրելու եվ հրաման չկա յերբեք,
Են ժամանակ, յերբ յոթն որ հարսնիք կանենք, կպսակվենք,
Դու հավիտյան իմս կլինես, իսկ յես՝ Սասնա քաջ կորիճին,
Են ժամանակ, ի՛մ արեգակ, տեր կլինես ամեն ինչին:

Դավիթն եստեղ խիստ նեղացավ, յեկավ իր ձին թամբեց, հեծավ,
Թռչեց բերդի դռնից յելավ՝ հոգում մրմուռ ու սրտում ցավ.
Խանդութն ընկավ նրա հետքից, շատ աղաչեց, կանչեց, լացեց.
Բայց Դավիթը յետ չը դարձավ. «Դավիթն ուտի կնկանից ծե՞ծ,
Խանդութ Դավթին խայտառակի՞, դրա՞ համար կանչեց ինձի»,—
Զրուցում եր իր սրտի հետ ու խթանում մտերիմ ձին:

Խանդութ հանեց չմուշկները, ուղեց դուլպանց հասնի Դավթին,
Դուլպաները կտրտվեցին, քնքուշ վոտներն ընկան գետին.
Մերկ ու բոբիկ վազ տվեց նա, պատռվեցին վոտներն սիպտակ,
Կարմիր արյուն ու արնաջուր լցվեց նրա վոտների տակ.
Դավիթն արագ քշում եր ձին, ուշքը լարած ականջ անում,
Մեկ ել լսեց, վոր մի գոռոց սարեր, քարեր ե տատանում.
— Դավի՛թ, Դավի՛թ, կանգնի՛ր, անխիղճ, կանգնի՛ր մինչև գամ քեզ հասնեմ,
Մեկ ինձ նայիր, վիճակս տես, հետո գնա եդ քո ճամբեն:
Դավիթն արագ շրջվեց, նայեց, տեսավ՝ Խանդութը հուրհրան՝
Իր հետևից վազ ե տալիս՝ հյուսքը տված քամու բերան:
— Ե՛,— ասաց մեր Դավիթն անբիծ,— ի՛նչ տխուր ե աշխարհի բան,
Իրարու պես հարթ, անդարդ չե ամեն մեկի կյանքի ճամբան.
Մինչև եսոր Խանդութ յե՞րբ եր բոբիկ վոտը դրել գետին,
Հիմի բոբիկ՝ քարոտ դաշտում վազ ե տալիս, կանչում Դավթին.

Յեվ ուր վոտը դնում է նա, էնտեղ դառնում է արյան լիճ,
Դավթի սրտում վոտքի յելավ ամեն հանցանք ներող մի խիղճ,
Կանգնեց հանկարծ իր Ջալալու սեգ դուխը դիրկն առած՝
Խանդութ Խաթունը հեվալով նրա հետքից հասավ, ասաց.
— Իմ սիրտը մի փշրի հանց դավ, դարձիր, յերթանք, արև պայծառ,
Յես քեզ եղպես չգիտեյի, տնավե՜ր, ինչ շուտ նեղացար:
— Ե՛յ աննման Խանդութ Խաթուն, ինչ ասեմ յես քեզ պես կնկան,
Յես քեզ համար մեր Սասունից մինչև էստեղ զարկի, յեկա,
Մի համբույրի համար ինձի անարգեցիր քո Խաս Բաղչում,
Դե՛, յես ինչպես չը բարկանամ, իր սիրածին ո՞վ չի պաչում:
— Կարիճ Դավիթ, ուխտ եմ անում, քանի հոգի, շունչ կա իմ մեջ,
Էսպես բոլիկ քո յետևից պիտի շրջեմ աշխարհն անվերջ:
Խղճաց Դավիթը մեծասիրտ, առավ իր գիրկը Խանդութին.
— Նայի՛ր,— ասաց,— Խանդո՛ւթ խաթուն, արտում յերգող են արտուտին,
Երնեկ նրան, վոր մեզ նման վոչ քէն ունի և վոչ կռիվ,
Ասաց, ձեռքով սանրեց նրա սև մազերը ցաք ու ցրիվ,
Ձիու գլուխը շուռ տվեց և յերկուսով նորից ինդուն՝
Զրուցելով, կատակելով, համբուրվելով յետ դարձան տուն:



## ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳ

### 1.

Պարսկաստանի Տապուհ արքան մի թուղթ գրեց Նեռ–Փալադին,
Թե յեկել է Սասուն յերկրից Դավիթ անվամբ մի պատանի
Յեվ ուզում է Կապուտկողի Խանդութ խաթուն արեգակին
Սրով, զոռով, առնի տանի:
Փալադ արքան առավ կարդաց Տահն Տահի նամակը մեծ,
Կարծես աչքերն աղով լցրին և ամեն բան դեմը մթնեց.
Նշան տվեց, վեզիրը յեկավ, կանգնեց՝ ձեռքը դրած սրտին՝
Ասաց,— Վեզիր, այսպես գրիր այդ նորելուկ Սասնա Դավթին.
«Սասնա Դավիթ, մենք լսել ենք, վոր դու մի շատ զորեղ մարդ ես,
Գալիս ես, յեկ, մեզ հետ կռիվ, դո՞ւցե մեզ էլ հաղթես, ջարդես,
Յեթե չգաս, զորք կը քաշենք, Կապուտկողը կանենք ավեր,
Կառնենք, տանենք ինչ կա չկա, ձեզ չենք թողնի մի չոփ ավել»:
Մայրամուտն եր տարված դիտում Խանդութ Խաթուն գեղեցկուհին,
Յերբ չինական մի զույգ ջահել՝ Փալադի թուղթն առին, բերին,
Խանդութն առավ թուղթը կարդաց, խորհրդավոր խորհեց մի քիչ
Յեվ Փալադի պատասխանը՝ Դավթից ծածուկ գրեց մեկից.
«Փալադ արքա, մենք մեր որում վոչ մի վնաս չենք տվել քեզ,
Մենք քո անուն չենք էլ լսել, անծանոթ ենք մենք՝ քեզ, դու՝ մեզ,
Վոր գալիս ես, մենակ մի գա, դու չես կարող Դավթին հաղթել,

Դավթին հաղթողը, ով Ցալադ, այս աշխարհում չի ծնվել դեռ,
Վոր գալիս ես, քեզ հետ ուրիշ թագավոր ել վեր առ ու բեր,
Թող նա ել գա, վոր քեզ ոգնի, մեջքդ ես առել շատ ծանր բեռ»:

Թուղթը ծալեց, ձեռքով արագ, մոտեցավ իր ծերուկ ծառան.
— Տար, ասաց նա,— ով Ցալադից թուղթ եր բերել, հանձնիր նրան.

Հետո դարձավ այսպես ասաց. «Գիշերը լավ պատվիր նրանց,
Ծովից առատ բեր ու թափիր նռան գինին ու խորոված,
Առավոտյան հագցրու նրանց շորեր շքեղ ու թանկագին,
Կանանց համար զարդեր ել տուր և յոթ վոսկի ամեն մեկին.
Յերկու ձի ել տուր թող հեծնեն, Կապուտակողից ձիով գնան»:

Ծառան արաց այնպես, ինչպես պատվիրեց իր տերն աննման:
Լուսաբացին են Ցալադի թղթաբերները միասին՝
Խանդութի մոտ յեկան, խոնարհ գլուխ տալով, այսպես ասին.
— Հազար անգամ շնորհակալ ենք, ով մարգարիտ ամենաթանգ,
Աղքատ յեկանք, հարուստ կերթանք, վոտով յեկանք, ձիով կերթանք:

Ասին նրանք, յոթն անգամ գլուխ տվին բարերարին,
Ձիերն հեծան, վոտքը դրին վերադարձի ճանապարհին:

2.

Գիշերը յեկավ, անցավ գնաց, լուսաբացին յելան, տեսան,
Խանդութի հոր քաղաքի շուրջն աստղերի չափ վրաններ կան,
Բոլորն ել սև, բոլորն ել դեվ, մութ ու չարկամ:

3.

Ցալադ արքան առել ե իր զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում ե վողջ Կապուտակողը քար-քանդ անի,
Վոր Խանդութին առնի, տանի:



Սև թագավորն առել ե իր զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում ե վողջ Կապուտակողը քար-քանդ անի,
Վոր Խանդութին առնի, տանի:

Ձինի արքան առել ե իր զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում ե վողջ Կապուտակողը քար-քանդ անի,
Վոր Խանդութին առնի, տանի:

Հալաբի տերն առել ե իր զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում ե վողջ Կապուտակողը քար-քանդ անի,
Վոր Խանդութին առնի, տանի:

Լանբանդ արքան առել ե իր զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում ե վողջ Կապուտակողը քար-քանդ անի,
Վոր Խանդութին առնի, տանի:

Ողան-Տողան առել իրենց զորքը, յեկել,
Խանդութի հոր հող ու հանդում բանակ զարկել,
Ուզում են վողջ Կապուտակողը քար-քանդ անեն,
Վոր Խանդութին առնեն, տանեն:

Խանդութն ասաց. «Փահլեվաններ, ձեզնից ո՞վ որ գնա կռիվ,
Կռվի դաշտում կերևա, թե ո՞վ ե բազե, ո՞վ ե կիվլիվ:
Յելան քառասուն փահլևաններն ինչպես մի մարդ դարձան ասին.
— Խանդո՛ւթ խաթուն, նեղն ես ընկել, մե՞զ ես դիմում դարդիդ մասին,
Ասիր՝ ո՞վ որ գնա կռիվ, չե՞ս իմանում ով որ գնա,
Ում տվել ես ալ խնձորը, նա ել պիտի կռիվ գնա,
Թե ուզում ես, յեկ, մեզ խոսք տուր, կռիվ գնանք մենք հենց հիմա:

Դավիթը եդ խոսքը լսեց, տեղում կայծակ կտրեց մեկից.
— Խանդութ խաթուն, եդ կռիվը յես եմ խնդրել լույս յերկնքից,

Լույս յերկինքը ձայնը լսեց, ուղարկեց եդ կռիվն, վոր կա,
Յես էլ պիտի գնամ կռիվ, ինչ գալու յե, թող հիմա գա,
Դավիթն ասաց, հետո գնաց, վոր ախոռից ձին դուրս քաշի,
Խանդութն արագ հետքից վազեց՝ քամուն տալով բարակ փոշի,
Բարձր կանչեց. «Դավի՛թ, Դավի՛թ, կանգնիր յես գամ, ձիդ
դուրս քաշեմ,
Յեվ պապերի ավանդ թողած մի իմաստուն խոսք քեզ ասեմ»։
Կանգնեց Դավիթը զարմացած, նա մոտեցավ, եսպես ասաց.
«Մեր պապերը ավանդել են, թե ամեն մի կռվից առաջ,
Կինը պիտի ձին դուրս քաշի, թամբի, սանձի՝ վոդի առած՝
Վոր կռվի դաշտ գնացողը հետ գա՝ գլխին պսակ դրած»։

Ասաց-չասաց, մտավ ախոռ, չուրջը նայեց և ի՛նչ տեսնի.
Մի անկյունում քառասուն ձիեր, իր են քառասուն փահլեվանի,
Իրար գլխին կուտակվել են և կծկվել սարսափահար,
Իսկ Դավթի ձին ախոռի մեջ կանգնել ե հանց Մարութա սար։
Խանդութն ուզեց ձիու վիզը բռնի, վոր դուրս տանի նրան,
Ձին Խանդութին նայեց, նայեց, բայց չհիշեց մի ծանոթ բան,
Վիզ չտվեց, գլուխն այնպես ուժգնությամբ թափահարեց,
Վոր Խանդութը թպրտալով փռվեց գետին, ճչաց, կանչեց.
— Հեյ վա՛խ, Դավի՛թ, հասի՛ր, քու ձին ինձ ըսպանեց։
Դավիթը ներս մտավ թափով և Խանդութին գրկեց, ասաց.
— Ե՛յ, անխելք ձի, ես քու չնորհքը կորչի,
Ինչո՞ւ, մարդ էլ կին-արմատի հետ կըկռվի՞,
Կինարմատին մարդ կզարկի՞, մարդ ձեռք կտա՞,
Աչք չունեյի՞ր, չտեսա՞ր, վոր կնիկ եր դա։
Խանդութ խաթուն, մոտ յեկ, ձեռք տուր, ձին դուրս հանի։
— Դավիթ, ինչո՞ւ, կուզես վոր ձիդ ինձ սպանի՞։
— Չե՛, մի՛ քաշվիր, ձիս էլ իսկի քեզ ձեռք չի տա,
Սխալվեց, քեզ ոտարի տեղ դրեց մի պահ,
Ասաց ու մի կախարդական ձևով ժպտաց։
Խանդութը յեկավ, ձին դուրս քաշեց արագընթաց,
Վստահ սանձեց, մեջքին դրեց վոսկեղեն թամբ,
Կանչեց. «Դավի՛թ, արի հեծիր քո թառլան ձին,
Թշնամու դեմ գնա ինչպես կարկուտի ամպ,



Խղճա գայլին, խղճա վագրին, խղճա օձին,
Բայց վոխերիմ վոսոխներին մի՛ խղճա դու,
Նրանց գլխին թող քո գուրզը լինի հատու։
Գնաս բարով, հետ գաս բարով, ով քաջածին,
Յես կսպասեմ քո փառավոր վերադարձին»։
Դավիթն յելավ, հեծավ իր ձին և Խանդութին դարձավ ասաց.
— Յես գնացի կռիվ, Խանդութ, յերեք որից յեկա՝ յեկա՛,
Յեթե չեկա, իմացիր, վոր Սասնա Դավիթը է՛լ չկա,
Յե՛կ ման արի, ընկածների դիերի մեջ գտիր իմ դին,
Բեր, Խաս Բաղչի ծաղիկների շվաքի տակ Թաղիր Դավթին.
Մնաս բարով, նշանը Խաչ պատերազմին իմ աջ թևին,—
Ասաց, թռավ, պարիսպն անցավ, աչքը թարթեց, հասավ կռվին։

## 4.

Յելավ կանգնեց մի աժդահա ժայռի գլխին ու նայեց վար,
Դեմը բացվեց վրանների, զենքի, զորքի մի մեծ անտառ։
— Յես տի սրանց զարթեցնեմ հետո կռվեմ,— Դավիթն ասաց,
Կռվի չեփորը հնչեցուց ու վողջ աշխարհը դղրդաց։
Փչեց Թուռլիկ Ջալալին իր, մտավ ծփուն բանակի մեջ,
Ինչպես անտառն ընկած փիղը, դեմ ընկածին ջարդեց, ճզմեց,
Արյունն յելավ դարձավ հեղեղ, վրանները սրբեց, տարավ,
Դաշտը դարձավ մի կարմիր ծով՝ վրան հազար լողացող նավ։
Շապուհ արքան Դավթին տեսավ, կատաղեց ու վռնաց հանց
դայլ.
— Յելի՛ր, ի՛մ զորք, կանգնի՛ր ամուր,— գոռաց, մեջը ինչքան
ուժ կար։
Թափվեց յեկավ զորքն ահագին, բայց Դավիթը զորքը ճեղքեց,
Գնաց, հասավ են Շապուհին, թրով նրա գլխին զարկեց,
Յերկու կտոր արավ նրան, մեկն ընկավ դես, մեկն ընկավ դեն,
Յեվ իրարու կոխկրտելով՝ փախավ նրա բանակն անտեր։
Ողան-Տողան թագավորներ հասան, վրա տվին Դավթին,
Բայց Դավիթը թրով զարկեց, գետին փռեց նրանց չոր դին։

Յերեկոյան Դավիթն ուրախ վերադարձավ Խանդութի մոտ,
Վոր հանց կրակ վառ ու արագ կռիվ գնա մյուս առավոտ։

## 5.

Ժողովվեցին, խորհուրդ արին թագավորները թուլամորթ,
Սև թագավորն ուղարկեցին Սասնա քաղաք, Ոհանի մոտ.
— Ջենով Ոհան,—ասին նրանք,— իմացել ենք, որ ձեր հողում,
Շատ քաջ կտրիճ փահլևաններ պարապ–սարապ ճամ են խաղում:
Մեկ փահլևան ճամբի թող գա, եստեղ կա մի չատ կտրիճ մարդ,
Որ մեր զորքի առաջն առել, կանգնել է հանց յերկաթե պատ:
Դա, սպանի եղ. հրեշին, սպանի ու վերադառնա,
Նվեր կտանք յոթ մեծ քաղաք և նրա սիրտն ինչ կամենա.
Ցռան Վերգոն ուներ մի մանչ՝ Պարոն Աստղիկ քաջ, զովելին,
Պարոն Աստղիկն հեծավ իր ձին, թռավ գնաց հասավ կռվին:
Դավթի աչքը դիպավ նրան և նորեկին ճանաչեց նա,
Մթան յեկավ, ասաց. «Խանդութ, վաղը կռիվ յես չեմ գնա»:
Ճեվ սրտնեղած Խանդութն ասաց. «Դավիթ, որ դու չես ամաչի,
Ինքս կռիվ կերթամ մենակ, բայց ի՞նչ կասեն քեզ պես քաջին».
Դավիթը թե՝ «Դե՛, յերդում կեր, որ յերբ լինեմ կռվի դաշտում.
Դուռն ու յերդիկը պինդ փակես, հանց քառասնքվոր մանես քո տուն»:
— Թող քո կամքը լինի, Դավի՛թ, ամուր փակեմ դուռ պատուհան,
Նստեմ եստեղ, քարդյահ քաշեմ, մինչև հետ գաս, կյանքիս վահան:

## 6.

Առավոտյան կռիվ գնաց Սասնա Դավիթն ամենազոր,
Պարոն Աստղիկ կտրիճի հետ կռիվ արեց մինչև կեսօր.
Զարկին, զարկվան, իրար խփող յերկու սարեր եյին կարծես,
Դավթի թրի փայլակն ընկավ Խանդութի տան յերդիկից ներս,
Ցեվ Խանդութը մեկ էլ տեսավ լույս է ընկել իր սենյակում.
— Եհե՛յ, յես դեռ եսպիսի բան չեյի տեսել ես աշխարքում,
Ամպ չի գոռում, անձրև չը կա, չըլսեցի կայծակի ձայն,



Հապա ես լույսն ուրկի՞ց յեկավ... ինչե՛ր ասես մտքով չանցան:
Զհամբերեց, պատուհանը բաց արեց ու նայեց հեռուն.
Տեսավ՝ հեծած հրեղեն ձին անծանոթ մարդ մի վառվռուն՝
Պտտվում է Դավթի չուրջը հանց սատանի սատիկ քամին,
Հավլունի թուրն ահեղաբար փռացնում է Դավթի գլխին,
Ցերկնի ամպերն քշում հեռու, կրակ թափում Դավթի վրա,
Բայց Դավիթը գուրզ չի զարկում, ախտսում է ձեռ տալ նրան:
Ցերկա՛ր նայեց Խանդութ չվար ու նրա սիրտը սարսռաց,
Պատից կախված տավիղն առավ, ձայնակցելով՝ յերգեց, ասաց:
— Անծանոթ, դու ես չար ժամին ուրկի՞ց յեկար,
Ա՛խ, ուրկից յեկար,
Վողջ աշխարքում մեր քաջ Դավթի թայը չկար,
Ա՛խ, թայը չկար:

Դու մահարեր կրակ լցրիր Դավթի գլխին,
Ա՛խ, Դավթի գլխին,
Ինձ հավասար արիր ես չոր գետնի հողին,
Ա՛խ, գետնի հողին:
Սևեր հագան իմ Խաս բաղչի ծաղիկ ու ծիլ,
Ա՛խ, ծաղիկ ու ծիլ,
Անծանոթ, դու Խանդութի տունն ավիրեցիր,
Ա՛խ, ավիրեցիր:
Դավիթն առավ յերգի ձայնը, ասաց. «Հեյվա՛խ, Խանդութ խաթուն,
Վա՛յ, կնկա բախտը կտրվի, գիտեյի՝ դու չես մնա տուն,
Բայց ո՞վ կարող է իմանալ ամեն որվա չարն ու բարին.
Ցասում կտրեց, նշան բռնեց ախոյանի ձիու փորին,
Նետն արձակեց, ձիու փորը ծակեց ինչպես կայծակի զարկ.
Ցեվ Աստղիկի գլխի ծայրից դուրս տվեց հանց արնոտ նիզակ,
Պարոն Աստղիկն ընկավ գետին, ձայն տվեց ու այսպես ասաց.
— Հեյվա՛խ, ես մեր ազգականի զարկն եր յեկավ ինձի հասավ:
Դավիթն ասաց. «Ես ի՞նչ արի, յես իմ աչքերը կուրցուցի,

Իմ հորեղբոր մենամարտին օտար հողում սպանեցի»։
Սասունն ունի պապենական մի անմոռաց սովորություն,
Ով մեռնում է, ամենամոտ ազգականին կանչում է տուն,
Գլուխ դնում նրա ծնկան ու իր հոգին լո՛ւռ ավանդում։
Յեվ Դավիթը հազար տեղից թրահարված մարդու նման,
Նստեց գետին ու Աստղիկի գլուխն առավ, դրեց ծնկան,
Լացեց, Դավթի արցունքներն են էս աշխարհի ծովերն վոր կան։
Պարոն Աստղիկն աղեկտուր վերջին անգամ Դավթին նայեց,
Թարթիչներով Դավթի հսկա սիրտը քաշեց, տեղից հանեց,
Նայեց, վառվեց, վառվեց նայեց, հանգավ ինչպես խարույկը մեծ։

7

Վշտից Դավթի ուշքը գնաց, հավաքվեցին զորքերն ամեն,
Դրոհ տվին հանց փոթորիկ, վոր ուշաթափ Դավթին բռնեն,
Բայց Ջալալին ցասումնալի չրջում էր իր տիրոջ բոլոր,
Սմբակներով կոխոտում էր, հեռու քշում զորքը բոլոր
Ու չթողեց Դավթին մոտ գա չարագուշակ վոչ մի վոսոխ,
Մինչև արևը մայր մտավ, Դավթի ուշքը յեկավ գլուխ։
Դավիթն յելավ, իր ձին հեծավ, ընկավ անչափ բանակի մեջ,
Զորքը փախավ, հորձանք տվեց, ինչպես մի ծով՝ մեծ ու անվերջ.
— Դուք մի՛ փախեք,— նրանց հետքից կանչեց Դավիթը բարձրասեզ.
Վո՞րտեղ է ձեր թագավորը, նրա տեղը դուք ինձ ասեք։
Դավթի ձայնից ծովը կանգնեց, փախչողները էլ՛ չփախան,
Էդ զորքի մեջ կար մի ղարրին, էնպես տվեց նա պատասխան.
— Դավի՛թ, մենք ինչ ունենք-չունենք՝ մեր են անկուշտ Ֆալազին է,
Հզոր է նա, անմահ է նա, մահը վոր կա, էս զորքին է,
Մի պատառ հաց ենք վաստակում՝ կեսը տանում է մեր արքան,
Սրով, թրով քո դեմ բերեց էս զորքերի ծովերն, վոր կան,
Հիմա մեր էդ թագավորը մեզ գցել է սրի բերան,



Ինքը թողուն քաղաք փախել, քա՞ջ ես, գնա գտիր նրան։
Դավիթն արագ ձիու գլուխը շուռ տվեց դեպի քաղաք,
Սապանդակեց, նայեց տեսավ ձին կանգնել է պարսպի տակ.
Կանչեց. «Ո՞ւր է թագավորը, ասեք, թող գա, տեսնեմ նրան,
Թագավորը նայեց տեսավ մի բուրգ՝ կանգնած իր տան դռան,
Շատ վախեցավ, ուզեց փախչել, բայց Դավթի մեծ գուրզը սուրաց
Յեվ Ֆալազը հանց ջաղացքար պատուհանից շառաչեց ցած։
Ինչքան հարուստ ու մեծ մարդ կար՝ կայծակ թրի բաժին արաց.
Նրանց տեղը փոքր ու աղքատ մարդկանց դրեց, դարձավ ասաց.

— Դուք քանի վոր կենդանի յեք, կռիվ չերթաք,
Յերբ նեղ կընկնեք, կամ կգա մի ահեղ փորձանք,
Ինձ թուղթ ճամբեք.
Վորտեղ լինեմ, յես կհասնեմ ձեզ ոգնության,
Սրանից դեն ունեք հող, ջուր, յեզ ու գութան,
Ուրախ ապրեք։

Քաղաքն ամեն դարձավ ասաց. «Ով քա՛ջ Դավիթ,
Մատաղ լինենք սև աչքերիդ ու արևիդ,
Մեզ փրկեցիր վիշապներից մեր են տանջող,
Մինչև մեռնենք խոսքդ կանենք ականջի օղ։

Ժողովրդին մնաս բարով ասաց Դավիթն ազատարար,
Ձին չափ գցեց, սար, ձոր կտրեց, յեկավ հասավ զորքին վարար,
Ասաց. «Դարձեք ձեր տները, վայելեք ձեր վաստակն արդար,
Յես ձեր էն նեռ թագավորին ուղարկեցի մեկել աշխարհ»։
Կռվի դաշտում ամենուրեք տիրեց յերգ, պար ու ցնծություն,
Հանկարծ զորքը մեկից ձայնեց. «Հետ դառնանք տո՛ւն, հետ դառնանք տո՛ւն»։

8.

Դավիթն էլ որ յերեկոյան պատերազմից հետ չը դարձավ,
Խանդութն ընկավ մտքերի մեջ, սրտում ծնվեց կասկած ու ցավ,
Կարծեց Դավթին սպանել են, ամբողջ գիշեր նստեց տրտում.
Յեվ կսկծից սիրտը վառվեց, հանց հրդեհված մի շքեղ տուն:
Առավոտյան կանուխ յելավ, տղամարդու շորեր հագավ,
Իր ձին հեծավ, նիզակն առավ և սրարշավ ճամփա ընկավ:

Հասավ դաշտը պատերազմի, գնաց ընկավ դիերի մեջ,
Աստղերին թիվ ու համար կար, բայց դիերի թիվն էր անվերջ,
Վորոնում էր մեռած Դավթին, յերբ տեսնում էր մի մեծ դիակ,
Իր նիզակով հանում էր վեր, բռնում լուսեղ արևի տակ,
Սրտատրոփ, ալեկոծված նայում էր թե խաչ կա՞ թևին,
Մեկ էլ թվաց, վոր շատ հեռվից մարդիկ իրեն խուլ ձայն տվին.
Նայեց, տեսավ պոկոտելով կաղնու ծառերը խորարմատ՝
Անտառապատ բարձր սարից իջնում է մի վիթխարի մարդ:
Յեկավ, տեսավ Խանդութն ընկել վորոնում է ինչ վոր մեկին.
Կանչեց. «Մեռած ես աշխարքում ի՞նչ ես փնտռում, նազան տիկի՞ն,
Քո փնտրածին յերեք օր է, վոր կես արավ Թուրս պողպատ,
Ափսոս ես դու, քեզ մի տանջի, մա՞րդ ես ուզում, յես քեզի մարդ»:
Խանդութն խոժոռ վոտից գլուխ մի լավ չափեց անծանոթին,
Խորհեց. Էս ձին Դավթի ձին է, բայց սա նման չէ մեր Դավթին,
Յեվ բարկացած դարձավ ասաց. «Այ մարդ, բերանդ շատ մի ցրվի,
Քո գլխից վեր, չեղած բան է էդ մարդու դեմ դուրս գալ կռվի,
Նա մի մարդ է յերկրի վրա, հանց արեգակը՝ յերկնքին,
Հազար քեզ պես մատաղ կանեմ նրա միայն մի յեղնգին:
Նրա դիակն էլ տեսնեմ յես, նա ինձ համար լավ է քեզնից,
Ասա, տեսնեմ միտքդ ի՞նչ է, վախկոտ կնկա՞ տեղ դրիր ինձ:



— Կտրիճ կնիկ, վոր էդպես է մենք տի կռվենք, դե՛, պատրաստվի՛ր:
— Կռվե՞նք, շատ լավ, կռվի համար պատրաստ եմ յես, դու քեզ նայի՛ր:
Իրար դիպան հանց յերկու ամպ, որը գիշեր կորեց հանկարծ,
Թոզ ու դումանն աշխարք բռնեց, մեկից թափեց կրակ ու կայծ:
Նժույգների վոտների տակ հողը ճեղքվեց հանց գութնավար,
Շատ կռվեցին, բայց վոչ մեկը հաղթված չընկավ իր ձիուց վար:
Սրտանց վոչ մի զարկ չէր տալիս Սասնա Դավիթը Խանդութին,
Խանդութ սրտանց ուզում էր, վոր ջնջի հանդուգն անծանոթին:
Մեկ էլ տեսար տարավ բերեց, գուրզը նետեց Դավթի վրա,
Բայց Դավիթն իր վահանով հեռու քշեց գուրզը նրա:
Խանդութն արագ ձիու գլուխը շուռ տվեց, վոր փախչի հետ,
Բայց Դավիթը դեմը կտրեց, ճակտին ուղղեց սասունցու նետ:
Խանդութ խաթունն իր ծամերը արձակ թողեց մինչև գոտին,
Ու նիզակը նետեց հեռու, թռավ ձիուց, իջավ գետին,
Նրա հետքից իր նժույգից թռավ Դավիթը զայրագին,
Վերցրեց նրան խփեց գետին, հանց յերկրագունդ չոքեց կրծքին:
— Ամա՛ն, ամա՛ն, կանաչ-կտրիճ, մի սպանի, յես կնիկ եմ:
— Յես գիտեմ, վոր դու կնիկ ես, ինչպե՞ս ես, վոր վիզըդ զարկեմ,
Մի՞տդ է, ինչ մի բռունցք զարկիր և իմ բերնից հանց մի աղբյուր
Քո Խաս Բաղչի ծաղկանոցում հոսեց արյուն ու արնաջուր:
— Ա՛խ, էդ դո՞ւ յես, կտրիճ Դավիթ, Խանդութն ասաց կարոտագին:
— Խանդութ խաթուն, յես եմ, վոր կամ. էսոր քեզ լավ ճանաչեցի,
Երնեկ նրան, ով վոր քեզ հետ դնի գլուխը մի բարձի:
Էս աշխարքում դու յես էն մարդն, ում յերանի կտաս, Դավիթ,

Յես նշանը քեզ եմ տվել, չկա քեզնից ուրիշ լղիթ»:
— Խանդութ խաթուն, արևի տակ չկա քեզ պես կնիկարմատ:
— Սասնա Դավիթ, եսօրվանից յես՝ քեզ կնիկ, դու՝ ինձի մարդ:
Յելան ուրախ ձիերն հեծան, մեկը մեկի սիրով ծաղկուն,
Քաղցր-քաղցր զրուցելով, պալատ հասան ուշ իրիկուն:
Խանդութ խաթունը նշանով կանչեց բոլոր ծառաներին,
Նրանք ինչքան անուշահամ խորտիկներ կար, առին բերին,
Դավիթն ու իր Խանդութն անցին սեղանի չուրջը նստեցին,
Անուշ արին սերն ու գինին, մահիճ մտան ու քնեցին...

9.

Տարաթն անցավ ինչպես վայրկյան և գեղեցիկ մի առավոտ,
Յերբ Խաս Բաղչում ննջում եր դեռ հազարաթերթ վարդը չաղոտ,
Սասնա ճրագ Դավիթն ու իր Խանդութ խաթունը սիրասուն
Յելան իրենց ձիերն հեծան, ճամբա ընկան դեպի Սասուն:

10.

Յերբ վոր յեկան հասան Խլաթ ու ծիծաղով արծաթաձայն,
Են Զմշկիկ Սուլթանի տան պատուհանի տակից անցան,
Զմշկիկը նրանց տեսավ, իր նորածին աղջկան առած՝
Վազեց Դավթի դեմը կտրեց, խանդից վառված՝ կանչեց, ասաց.
— Թըլո՛ր Դավիթ, դու ուխտ արիր, վոր ինձ տանես քեզի կնիկ,
Մենք իրար հետ մեր վոսկեղեն մատանիները փոխեցինք,
Բայց ինձ թողիր, գնացիր ու առիր բերիր ես Խանդութին,
Յես գեղեցիկ չե՞յի, յարաբ, վոր դուր չեկա քո ծուռ սրտին,
Ինչո՞ւ, ի՞նչս եր պակաս, Թլոր, ինչի՞ս, ա՛յ ծուռ, անուն դրիր,
Վոր Սասունը թողիր անտեր ու գնացիր սրան բերիր:
Գրկանոցիս մեղքը վզիդ, սրա հայրը դու յես, Թլոր,
Ո՞ւմ ես թողնում քո ձագուկին, ամոթ, ամոթ. քեզ նման հոր:



Տի զաս յես դու կռիվ անենք, կամ յես քեզի տի սպանեմ,
Իմ ես անմեղ, անուշ աղջկա անհերության վրեժն առնեմ,
Ինձ էլ, քո խաս Խանդութին էլ վորբևայրի, անտեր թողնեմ,
Կամ դու ինձի տի սպանես յեվ քո ձեռքով աչքերս փակես,
Նոր յերթաս քո Խանդութ խաթուն սիրականիդ ծոցը պառկես.
Դավիթն ասաց. «Ով Զմշկիկ, կնիկարմատ կա ինձի հետ,
Թույլ տուր տանեմ տուն հասցնեմ, յոթ որ չանցած նորից դամ հետ,
Կռիվ կուզես, կռիվ անենք, կռվից Դավիթը վախենա՞,
Յերդվում եմ Խաչ-Պատերազմով, տըված խոսքս չեմ մոռանա:
— Թլոր Դավիթ, վոր եդպես ե, բարի ճամբա, դե՛, գնացեք,
Բայց տես, Դավիթ, քեզ կսպասեմ յոթը գիշեր, յոթը ցերեկ:
Յերբ հեռացան, Դավիթն ասաց. «Խանդութ, տեսա՞ր անզգամին:
— Տեսա, Դավիթ, ինչո՞ւ յես դու ականջ դնում ամեն բանին,
Նրան աշխարքն ե ճանաչում,— ասաց Խանդութը սիրաբար,—
Նորից ընկան հեռու տանող յերանելի մի ճանապարհ:

11.

Յերբ Դավիթն ու Խանդութն անցին՝ հայրենի տունը հետ դարձան,
Թնդաց Սասունը ծայրից ծայր, կապեց զարնան վառ ծիածան:
— Յեկավ Սասնա հույս ապավեն, մեր Ձոջանց տան ճրագն անմար,
Բարով յեկավ մեր Դավիթը,— խնդում եյին մանուկ ու մայր,
Խնդում եյին հարսն ու աղջիկ, խնդում եյին ծեր, պատանի,
Յերբ խնդում ե ժողովուրդը, այդ խնդությունը վերջ չունի:
Մեծ խնդությունն առաջն եր դեռ: Տի պսակվեր Դավիթը քաջ,
Յեվ այդ գիշեր Ձոջանց տանը հարսանիքի թասը գնդաց.
Քառասուն գիշեր, քառասուն ցերեկ հարսանիք եր վողջ Սասունում,
Յեվ բոլորի սրտում, հոգում, շրթունքներին կար մի անուն...
Վողջ Սասունում չկար մեկը, վոր Դավթի մեծ հարսանիքին
Չուրախանար, ծափ չզարկեր ու չպարեր՝ թասը ձեռքին:

Ծերուկ Սեթոն, պառավ Սաթոն ունեյին մի ջահել տղա,
Կռիվ գնաց եդ ջահելը, գնաց կռիվ՝ եվ չդարձավ.
Վշտից Սեթոն մեջքը ծռեց, ձեռքն անվերջ կդողդողար,
Սաթոն այնքան լացեց, լացեց, արցունք թափեց, վոր կուրացավ,
Յեվ յերկուսով ուխտ արեցին, աղվոր մնալ ամբողջ կյանքում,
Մինչև մի որ մահը կգար, կառներ նրանց հոգին անքուն:
Բայց նրանք ել ցնծությունից իրենց ուխտը չըպահեցին,
Ազիզ Դավթի հարսանիքին կերան, խմին ու պարեցին:
Ջահելները շուրջպար բռնած՝ յերգում էյին ու ասում.

— Այգ բարեվ, այգ բարեվ,
Այգ–արեվին տանք բարեվ,
Վոսկի ցորնով թող լցվեն
Սասնա անհուն ամբարներ:

— Այգ բարեվ, այգ բարեվ,
Այգ–արեվին տանք բարեվ,
Նռան գինով թող լցվեն
Սասնա անծայր մառաններ:

— Այգ բարեվ, այգ բարեվ,
Այգ–արեվին տանք բարեվ,
Սասնա գլխին վառ մնա
Մեր Դավիթը հանց արեվ:

Աղջիկները շուրջպար բռնած՝ յերգում եյին ու ասում.

— Թագվո՛ր, ո՞վ կա քեզ պես կորիճ,
Դու կհաղթես քաջ առյուծին,
Դու կհաղթես վիշապ–ոձին,
Թագվոր, չկա քեզ պես կորիճ:

Թագվոր, ո՞վ կա քեզ պես բարի:
Մեզ Մելիքից ազատեցիր,
Սասուն դրախտ մի դարձուցիր,
Թագվոր, չկա քեզ պես բարի:



Թագվոր, ո՞վ կա քեզ պես սիրուն,
Դու անտառի կանաչ կաղնի,
Քո ճյուղերը մեզ հով անի,
Թագվոր, չկա քեզ պես սիրուն:

Թագվոր, կուռըդ դալար լինի,
Սերդ հանց ծով վարար լինի,
Արեվ–լույսդ միշտ վառ լինի,
Քո չեն ոջախն անմար լինի:

Ծեր ու պառավ շուրջպար բռնած՝ յերգում եյին ու ասում.

— Քեզ սիրում ե վողջ Սասունը,
Դու յես մեր տան վոսկի սյունը,
Ինչքան ապրես, դու լավ ապրես,
Քեզ միշտ տեսնենք ուրախերես:

Երնեկ Մհեր կենդանանար,
Գար, քեզ տեսներ ջահելանար,
Հալալ լինի քեզ պես վորդուն,
Շեն մնա մեր Ազանց մեծ տուն:

Դավիթ, դու հանց մայր արեգակ,
Մեզի տվիր կյանք ու կրակ,
Կատարվի քո ամեն փափագ,
Դու՝ մեր պարծանք, դու՝ Սասնա փառք:

Գուսանները յերգում եյին Դավթի կյանքի, փառքի մասին,
Հարսն ու փեսի կենացն եյին խմում բոլորը միասին:

— Խմենք կենացը մեր Դավթի, Խանդութ հարսին հազար բարեվ,
Սասնա գլխից արեվից եվ վառ մնա մեր Դավթի արեվ:

— Խմենք կենացը Խանդութի, ցանկանք Դավթին յերջանկություն,
Խանդութի պես հարս ունենա Սասնա քաղքի ամեն մի տուն:

Այսպես անվերջ գնում էին բաժակները՝ գինով լեցուն,
Կույրի աչքերը բացվեցին ու ճլլաց համրի լեզուն:

Հազար ծերուկ, հազար պառավ ցնծությունից ջահելացան,
Հարսանիքի քառսուն օրերն հանց ակնթարթ յեկան անցան:

Խաղաղություն տիրեց մեկից վողջ Սասունին ու Ջոջանց տան,
Հարսն ու փեսան իրար գրկած՝ մտան դրախտն ամուսնության:
Յեվ յերբ Դավիթն ու Խանդութը գլուխը մի բարձի դրին
Ու նայեցին մեկը մեկի սիրով վառվող սև աչքերին,

Չըմշկիկին տված խոսքը մոռցավ Դավիթը քաջարի.
Ու յերդումի յոթը որը գնաց, դարձավ յոթը տարի:



## ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

### 1.

Մի որ Դավիթն ասաց. «Խանդութ, յես Գյուրջստան պիտի յերթամ,
Մեղքի տակ է ընկել հոգիս, պիտի յերթամ իմ պարտքը տամ.
Են, վոր քառսուն փահլեվանից քեզ խլեցի, առի բերի,
Են որվանից մինչև ես որ խիղճս ինձի կուտի, կայրի:
Լսել եմ, վոր Գյուրջստանում շատ արմաղան աղջիկներ կան,
Պիտի յերթամ, ընկնեմ աշխարհ, գտնեմ յես են քառսուն հոկան—
Ճանեմ յերկիրը Գյուրջիստան, գտնեմ քառսուն ընտիր աղջիկ,
Ամեն մեկը մի հրեղեն, ամեն մեկը ծաղկի փնջիկ:
Յեվ պսակեմ են անմուրազ փահլեվանները քաջազուն,
Են ժամանակ նոր պարզ սրտով, վերադառնամ, գամ մեր Սասուն»:

Խանդութն ասաց. «Անհոգ Դավիթ, դու իմ մեղքի տակը մտար,
Հորից, մորից ինձ զրկեցիր, բերիր, դրիր ես հողն ոտար,
Հիմի դու ինձ թողնե՞ս, յերթա՞ս, յերթաս շրջես աշխարհն ամեն,
Վոր մի տղա ունենաս դու, յես մենակիկ ինչպե՞ս անեմ»:

Դավիթն ասաց. «Խանդութ խաթուն, Սառան՝ քեզ մեր, Ոհան՝ քեզ հեր,
Թե ինձի մի տղա յեղավ՝ նրա անուն դնես Մհեր,
Վոր իմ առյուծ հոր անունը վորդոց վորդի մնա անմեռ»:
Հանեց նա մի վոսկի բազբանդ, մեջն անգին քարեր լցրած՝

Նայեց նրան, անուշ ժպտաց ու Խանդութին տվեց, ասաց.
«Թե վոր տղա ունենա յես, սա կըկապես նրա թեվին,
Թե մի աղջիկ բերիր, Խանդո՛ւթ, բաժին կտաս եդ արևին,
Նրա թոռան թոռն էլ ուտի ես գանձեղեն չի վերջանա,
Գառսուն դեվից եմ խլել յես ու պահել եմ մինչև հիմա:
Խանդութ, յես վոր շատ ուշացա, իմ Մհերին ճամբիր թող գա
Բաղդանդը տեսնեմ, կճանաչեմ, ես բաղդանդից ուրիշ չկա»:
Իր ձին հեծավ, ընկավ ճամբա հանց սիրահար մի տարադիր,
Հարցընելով, վորոնելով՝ մեկ-մեկ շրջեց քառսուն յերկիր,
Յերկար ճամբին հյուր յեղավ նա թե՛ աղքատին, թե՛ մեծատան,
Գտավ քառսուն փահլեվանին ու գնացին դեպ Գյուրջստան:
Շատ գնացին, մի անծանոթ ճամբաբաժան հասան նրանք,
Էնտեղ նստել եր մի ծերուկ, պատկառելի, հանց ալարանք:
Բարեվ տվին, քառսունի յել բարեվն առավ, դարձավ, ասաց.
— Կանաչ-կարմիր փահլեվաններ, ո՞ւր եք գնում՝ ձիերն հեծած:
— Գյուրջստան ենք գնում, պապի, վո՞րն է ճամբան եդ աշխարհի.
— Ինչի՞ համար եք գնում դուք, տերն ուզածներդ կատարի:
— Աղջկա համար, բարի ծերուկ, քառսուն հարս ենք ուզում տանել:
— Գյուրջու ճամբան սա յե, քաջեր, ա՛յ, տեսնո՞ւմ եք էն անտառներ,
Գյուրջստանը էն է, վոր կա, բարով հասնեք ձեր ուզածին,
— Շնորհակալ ենք,— ասին նրանք,— ընկան ճամբա ու գնացին:

Շատ գնացին, առավոտյան հասան Գյուրջու մի մեծ քաղաք,
Տեսան քառսուն կաքավ աղջիկ դեպի այգին կիջնեն արագ.
Նրանց մեջ կար մի ջահել կին՝ հագին ատլաս ու խաս բեհեզ,
Ճամբորդները աղջիկներին բարեվեցին խոնարհ ու հեզ,
Ջահել կինը մոտեցավ ու քնքուշ նազով դիմեց Դավթին.
— Ով փահլեվան, ես մարդիկ քեզ ի՞նչ են գալիս.



— Էն քառսունն էլ յեղբայրներս, անուշ ազիզ:
— Էս աղջիկներն ի՞նչ են գալիս, ով մարդարիտ:
— Էս քառասունն էլ իմ քույրերն են, ճամբորդ իգիթ:
— Բերե՞ս քո եդ քույրերդ տաս յեղբայրներիս:
— Աչքիս վրա, ձեզանից լավ ո՞վ կա ուրիշ:
Ասաց և լուռ մոտեցավ նա, հարցմունք արավ աղջիկներին,
Նրանք բոլորն էլ միասին ժպտացին ու գլխով արին:
Իսկ Դավիթն եսպես ասաց սիրահարված յեղբայրներին.
— Առեք դուք էս յեղնիկներին ու հետ դարձեք,
Ճանապարհին ձեր սրտերի լեզուն բացեք,
Թող ամեն մարդ ընտրի սրտով սիրած աղջկան,
Ձեր հետեվից յես էլ կամաց, կամաց կըգամ:
Նրանք ձիու գավակն առան աղջիկներին, ճամբա ընկան:
Դավիթն իր ճամբան թեքեց, գնաց, հասավ Ադրբեջան,
Էդտեղ տեսավ մի հուր-աղջիկ, վոսկեձկութ ու վոսկեծամ,
Նստած՝ ծաղկած ծառի հովին, աչքը հառած ծփուն արտին՝
Յերգում եր նա, նրա յերգը յեկավ դիպավ Դավթի սրտին.
— Իմ Խանդութի համար յես տի ընկեր տանեմ էս յեղնիկին,—
Ասաց, ձիու գավակն առավ, թռավ հասավ քառսուն զույգին:
Ամեն մեկին մի-մի սիրած աղջիկ տվեց, ասաց կրկին.
— Փահլեվաններ, ամեն մի մարդ իր յերկիրը թող հետ դառնա,
Յես էլ կերթամ դեպի Սասուն, ինձ կանչում է հողը Սասնա.
— Շնորհակալ ենք, ազնիվ Դավիթ,— վոր մեր բախտին հասցուցիր մեզ,
Մնաս բարով, քաջ փահլեվան, չենք մոռանա քո սերը մեծ,—
Ասին նրանք, ամեն մեկն իր աշխարհի ճամբեն բռնեց,
Դավիթն էլ էն վոսկեծամին, հանց նոր վորսած սարի յեղնիկ,
Առավ, դրեց ձիու գավակ, ճամբա ընկավ դեպ հայրենիք:

2.

Յերբ Դավիթը ճամբա ընկավ դեպի հեռու ոտարություն,
Խանդութի հայրն մարդ ուղարկեց և Խանդութին բերեց իր տուն:
Ճամբին Խանդութը տրտում եր, յերեսով եր եդ ժամանակ,

Վոր հասավ իր հերանց-տունը, պառկեց, բերեց արու զավակ:
Վաչոն թռան առավ գիրկը և Խանդութին դարձավ, ասաց.
— Թե վոր ես տղան Դավթի տղան է,
Դավթից մի նշան, մի բան վրան է:
Քառասուն ծծմեր հավաքվեցին, փարթամ տղին բարուրեցին,
Բնդի տեղակ վրան յոթ տակ դուլթնի չղթա փաթաթեցին,
Տղան եր, ինչ օրորոցում բարձր լացեց ու ճմլկտաց,
Շղթան յեղավ կտոր-կտոր, Կապուտկողի բերդը տնքաց:
— Աղնանց-որդի յե,— ասացին,— բայց յերբ նրան լողացրին.
Տեսան մի ձեռքն ամուր խփված՝ ցասում պատած պստիկ ծոլին:
Խփված ձեռքը արած բռունցք՝ ինչպես գլուխն առյուծի,
Դեռ աշխարհը վոտք չեր դրել եղպես ահեղ մի սասունցի,
Ինչ ճար արին, չարին՝ նրա խփված ձեռքը չը բացեցին,
Քաղաք-քաղքով թափվեց յեկավ, տղան մնաց իր ասածին:
Խանդութի սիրտը մղկտաց, արցունք չողաց սև աչքերում,
Վաչոն յելավ իրա ահից նամակ գրեց Թորոս քեռուն.
«Թորոս, աչքըդ լուս, խնդա ու խաղա,
Խանդութը բերեց մի չարմաղ տղա,
Տղան իր հոր պես մեծ ու ահեղ է,
Բայց հազար ափսոս, մի ձեռքը խեղ է»:
Թորոսը, վոր թուղթը կարդաց, յելավ հեծավ Վեցոտ Լաշլին,
Սապանդակեց, ճամբան կտրեց, ինչպես Դավթի Թուր-Կայծակին,
Յեկավ, հասավ Կապույտ բերդը, Վաչոյի մոտ դնաց, ասաց.
— Խնամի, քո նամակն առա, յեկա՝ արծվից թևվեր առած՝
Քո աչքըդ լույս, աստվածը քեզ եղպես հազար տղա-թոռ տա,
Մի եդ տղի բարուրը ամ՞եք, տեսնեմ ինչպե՞ս տղա յե դա.
Առավ, տղի ձեռքը չփեց, խփված մատները բացվեցին,
Յեվ ի՜նչ սարսափ, քեռին տեսավ մի պուտ արյուն ձեռքի միջին.
Ասաց. «Հա՛յ, հա՛յ, թե քարն սրան տեղ տա, տեղ տա,
Հողը սրան չի դիմանա,
Տեսեք աշխարհն արել է նա մի պուտ արյուն,
Առել, բռնել ձեռքն իր հսկա,
Թե վոր մնաց, հասակ քաշեց ես աշխարքում,



Նրանից շատ զարմանալի բան դուրս կգա»:
Յոթ որ անցավ, ամեն կողմից հավաքվեցին բարեկամներ,
Խանդութ տղին կնքել տվեց և անունը դրեց Մհեր,
Խնդությունը լեզու առավ, սազ-նաղարան յեկան հանդես,
Քեֆը բացին քաջ տղաներն, աղջիկները սիրունատես:

3.

Ինչ ուրիշի տղաները տարով եյին հասակ առնում,
Մհերն որով եր մեծանում, հսկա դառնում,
Ինչ ուրիշի տղաները ամսով եյին հասակ առնում,
Մհերն որով եր մեծանում ու ամրանում...

4.

Որեր անցան, Թորոսն առավ Մհեր մանկան, Խանդութ հարսին,
Սասնա ճամբի թելը կծկեց, գարնան ծիծղուն արշալույսին:

5.

Յոթը տարի յեկավ անցավ, բայց Դավիթը հետ չը դարձավ,
Խանդութի աչքը ջուր կտրեց, կարոտն աճեց ու դարձավ ցավ.
Մի որ Մհերը տեսավ մայրը՝ տխուր նստած պատշգամբում՝
Հեռուն ձգվող վոլոր-մոլոր ճանապարհն եր աչքով չափում.
Վազեց ընկավ իր մոր գիրկը հանց նետահար կորյունն անբուն.
Ասաց.— «Մարե, հերս ո՞ւր է,
Ախ, առանց հեր շատ տխուր է,
Ինձ ասում են, են տղաներ՝
Դու հեր չունես, վորբ ես, Մհեր:
Ասա, մարե, յես հեր չո՞ւնեմ,
Թե վոր ունեմ, ո՞ւր է հապա,
Ուղարկիր ինձ, ման գամ գտնեմ,—
Յես հենց հիմա կընկնեմ ճամբա:

— Մատաղ լինի քեզ քո մերը,
Կորիճ Դավիթն է քո հերը,
Գյուրջստան է գնացել նա,

Մեռա՞վ, մնա՞ց, ո՞վ իմանա,
Յոթ տարի չե մի լուր չունենք,
Ա՛խ, մեկ հետ դա, կարոտն առնենք:
— Յես կը գնամ հորս հետևից,
Բայց նա ինչպե՞ս ճանաչի ինձ:
Մայրը բերեց վոսկի բազպանդն ամուր կապեց տղի թևին,
Մեկը մեկին պինդ գրկեցին, համբույր առան, համբույր տվին,
Յերբ իրարից բաժանվեցին, Խանդութն ասաց. «Իմ կտրուկ Թուր,
Յերբ քո հորը կհանդիպես, քո բազպանդը նրան ցույց տուր»:
Մհերն գնաց, մտավ ախոռ ու դուրս քաշեց մի սև նժույգ,
Ջենքերն առավ, իր ձին հեծավ, ճամբա ընկավ ինչպես մի բուք:

6.

Գնաց, գնաց, նայեց, տեսավ, գալիս է մի Թուլխմրուք մարդ՝
Թամբին դրած մի լույս աղջիկ, թաղին վայել մի աղամանդ,
Կանչեց. «Եյ, մարդ, դու Թուլխմրուս, տարիքով մարդ, քեզ վայել չի,
Վոր տանում ես եդ կույս աղջկան, եդ յեղնիկը տի տաս ինձի,
— Տղա, դու դեռ կաթնակեր ես, ի՞նձ վայել չի, քե՞զ է վայել,
— Նրա համար է ինձ վայել, վոր աղալ ենք յես էլ, նա յել:
Դավիթն արաց, պիտի անցներ, Մհերը ձեռք դցեց, ասաց.
— Ջեմ տա տանես, քեղնից պիտի խլեմ դրան, յես իմ ասված,
Եստեղ Դավթի սիրտը յելավ, չհամբերեց, դարձավ ասաց.
— Հա՛յ-հո՛յ, հա՛յ-հո՛յ, Նայեցեք,
Նայեցեք ու զարմացեք:
Շատ ծովեր եմ մտել յես,
Շատ դևեր եմ կոտրել յես,
Շատ հեղեղներ եմ անցել,
Ջիուս ճամն էլ չի թացվել:
Հիմի բարակ ես առուն,
Յեկել իմ դեմն է առնում,



Չի թողնում, վոր անցնեմ յես:
Հա՛յ-հո՛յ, հա՛յ-հո՛յ, նայեցեք,
Նայեցեք ու զարմացեք:
Եսպես մենակ, անընկեր,
Շատ աշխարհ եմ ման յեկել,
Իմ դեմ կանգնող չի յեղել:
Հիմի բարակ մի բատան,
Պինդ կտրել է իմ ճամբան,
Յես իմ գլխին ի՞նչ հող տամ:

Հա՛յ-հո՛յ, հա՛յ-հո՛յ, նայեցեք,
Նայեցեք ու զարմացեք:

— Ե՛յ, Թուլխմրուք, ե՛յ, անատամ,
Ի՞նձ ես ասում բարակ բատան,
Ի՞նձ ես ասում բարակ առու,
Ջիուց իջիր, տանք իրարու,
Տեսնենք ո՞վ է բարակ բատան,
Տեսնենք ո՞վ է բարակ առու:

Դավիթ ձիուց իջավ ասաց. «Կաց, ես աղջկան տանեմ հեռու,
Վոր ահ-վախից լաց չըլնի, յերբ զարկըվենք մենք իրարու,
Նոր գանք, կռվենք, հազար անգամ որհնած ըլնի կռիվն արդար.
— Լավ, կսպասեմ, վեր կաց ու տար:
Դավիթն առավ աղջկան տարավ, տարավ հանեց սարի կատար,
Դարձավ յեկավ, Թուրը քաշեց Մհերի հետ կռվան իրար.
Փոշին յելավ, հանց վարագույր ծածկեց դեմքը արեգակի,
Քրտինքն իջավ հողն արաց ցեխ, շողշողաց Թուրը կայծակի:
Յեվ դուրգերի կտրուկ թափից, բարձրացավ մի հուժկու քամի,
Քամին խփեց, տեղից հանեց մի վողջ անտառ կանաչ կաղնի,
Դավիթն ուներ մի թաշկինակ՝ իր նկարը վրան քաշած,
Քամին զարկեց տարավ դցեց Խանդութի տան դռան առաջ.
Խանդութը դուրս յելավ, նայեց փոշին բռնել եր վողջ աշխարհ,

Ու տեսավ իր վոտների տակ մի թաշկինակ՝ վրան նկար,
Առավ, նայեց ու ճանաչեց իր ձեռագործ նվերն անգին,
Վոր յոթ տարի առաջ տվեց իր սիրահար Սասնա ծաղկին:
— Հեյվա՛խ, ասաց,— Դավթի գլխին նորից յեկել է մեծ փորձանք,
Հեծավ իր ձին, քշեց գնաց, հանց ալեկոծ ծովի հորձանք:
Գնաց, հասավ մի արձակ դաշտ, տեսավ, յելնում է թոզ–դուման,
Դղրդում են յերկինք–գետինք, փրփրում են գետերն յելման,
Յեվ իր Մհերն ու Դավիթը վորպես յերկու վիթխարի սար,
Հեռանում են, գնում գալիս դղրդոցով խփվում իրար,
Կարմիր արյուն– արնաջուրը ժայռ–քարեր է տանում տանում
Յեվ վոչ մի շունչ, ադամորդի վախից նրանց չի մոտենում:

Խանդութն յելավ կանգնեց բարձր ժայռի գլխին, կանչեց, ասաց.

— Դավի՛թ, Դավի՛թ, դու մի զարկիր·
Մեր նորելուկ մեկտակ մանկան,
Դավի՛թ, Դավի՛թ, ինձ մի զրկիր
Կյանքից, լույսից արեգական:
Դավթի ականջը չը հասավ Խանդութի ձայնն աղիողորմ,
Գուրզն արձակեց, բայց Մհերը գուրզը բռնեց, նետեց մի կողմ.
Ու զայրացած դարձավ, ասաց.
— Մարե՛, մարե՛, հոգ մի անի,
Նրա զարկը կընմանի
Ծովասարի բարակ քամուն,
Մազերիս հետ խաղ է անում:
Եստեղ սրտնեղ Խանդութն ասաց.

— Մհեր, Մհեր, դու մի զարկիր
Մեր թուխմիրուք կորիճ Դավթին,
Մհեր, Մհեր, թուրըդ ցած դիր,



Դու մի զարկիր քո մոր սրտին:
Մհեր բնավ բան չլսեց,
Մայրը դարձավ յերգով լացեց.
Սարեր, ոգնող յեկեք,
Ձորեր, ոգնող յեկեք,
Կռվի կպած հայր, տղան
Մեկը մեկից բաժանեք:
Սարեր, ձորեր ոգնո՞ղ կըլան,
Սարեր, ձորեր ոգնող չեն գա:
Վա՛յ քեզ, վայ քեզ, Խանդութ խաթուն,
Քեզնից անբախտ, խեղճ մայր չկա:

Թռավ խփեց իր Մհերին հայր Դավիթը արնակալած՝
Թեվակալը ճիչով պատռեց, վոսկի բազբանդը յերեվաց.
Կարծես բիբերը պայթեցին, տեղում կանգնեց կայծակահար՝
Յեվ դեմ դիմաց արձանացան՝ մի կողմ վորդին, մի կողմը հայր,
Դավիթն ասաց. «Հերիք կռվենք, ով փահլեվան,
Կռվի կեսը թողնենք վաղվան:
Մհերն ասաց.— Կիսատ գործը քաջի գործ չի,
Կամ յես քեզի տի սպանեմ, կամ դու ինձի:
Դավիթն ասաց.— Տղա, վոր դու ինձ սպանես,
Իմ կորիճի ձեռքից ինչպե՞ս պիտի պրծնես.
— Քո կորիճը ո՞վ է, այ մարդ:
— Իմ կորիճն են է, տղա, ում թևին կա վոսկի բազբանդ.
Մհերն լացեց, հասավ Դավթի ձեռքն համբուրեց հանց յերեխա.
— Հայրս դու յես, յես քեզ մեղա:
Դավիթն եստեղ տղի գլխին չըլսված մի աննեծք տեղաց.
— Մհեր, վոր դու ինձ հետ կպար, կռիվ արիր,
Իմ պատիվը հանց ջրի կուժ գետնին տվիր,
Կանչել եմ յես Սասնա պաշտպան Մարութավանք,

Մահ չունենաս, լինես անտուն ու անժառանգ:
Մհերն ամպեց ու բարկացավ՝ հորը մենակ թողեց դաշտում,
Ճամբա ընկավ, յեկավ հասավ իր են Վաչո պապիկի տուն,
Առավ քառսուն ազապ աղջիկ, առավ քառսուն ազապ տղա,
Գետի ափին, ծաղկած այգում բացեց առատ, զվարթ սեղան,
Յոթը տարվա նռան գինին անուշ արին ու ցնծացին,
Նրանց բախտին մայիսական վառ վարդերը նախանձեցին,
Յեվ նախանձից դեռ չհասած՝ իրենց թերթերը բացեցին:
— Լցրեք, լցրեք բաժակները, լինենք գինով, լինենք խնդուն
Մենք բոլորս գնացող ենք, մարդը հյուր է, աշխարհը՝ տուն:
— Ջահելության կենաց խմենք, նրանից լավ վոչինչ չկա,
Վոսկեփետուր մի հավք է նա, վոր թռցրիր, էլ հետ չի գա:
— Խմենք պայծառ սիրո կենաց, սերն է սիրտը ջահելության,
Սիրո առաջ ծունկ է չոքում ամեն ջահել, ամեն իշխան:
— Խմենք կենացը քաջության, սերը սիրում է քաջության,
Լցրեք, լցրեք բաժակները, լինենք գինով, լինենք խնդուն:
Յեվ խմում եր մեր Մհերը առավոտից մինչ առավոտ՝
Անեծքի տակ մեջքը ծռած՝ չրթին ժպիտ, հոգին վշտոտ.

7.

Երբ տուն հասավ Դավիթն ասաց. «Խանդութ, ջուր բեր, յես լվացվեմ,
Տես, Մհերի թրի զարկից հանց զատկի ձու կարմրել եմ»:
Խանդութը ջուր բերեց լցրեց, Դավիթն հանվեց վոտից գլուխ,
Կինը նայեց Դավթի թևին սև եր խաչն ինչպես ածուխ:
Սիրտը լցվեց, լացեց թաքուն, բայց չզգացվեց Դավթի աչքից.
— Խանդութ խաթուն, ինչո՞ւ կուլաս, ո՞վ քեզ տվեց լաց ու կսկիծ:
— Անգին Դավիթ, ինչպես չլամ, չդարդոտվեմ, մեռնեմ հոգուդ,
Տե՛ս, թևիդ Խաչ Պատերազմին սևացել է, դարձել սև կուտ:

— Խանդութ խաթուն. նոր իմացա, շրջվել է չարխը բախտիս,
Են Մհերի կրակը չեր, վոր կթափվեր ՛ես թուխ գլխիս,
Են իմ թևին կապած խաչն եր բարկանալով ինձ կտրատում,
Յես յերդում եմ կերել, կնի՛կ, մոռացել եմ իմ սուրբ յերդում.
Խանդութ, յես տի յելնեմ յերթամ են Զմշկիկ Սուլթանի մոտ,
Հիմա կասի. «Են ո՞ւր փախավ Սասնա Դավիթն անամոթ»,
Յերդմնակոտոր եմ յեղել յես, ինչո՞ւ տղիս անիծեցի,
Խանդութ խաթուն, քանդվեց մեր տուն, ձիս դուրս քաշիր, յես գնացի»:
Ասաց, յելավ հեծավ իր ձին, Թուր Կայծակին կապեց, գնաց,
Գնաց կանգնեց Զմշկիկի պատուհանի դեմ ու դիմաց,
Զմշկիկը նրան տեսավ, վազեց, առաջն առավ. ասաց.

«Դավիթ, չե՞ս դու յերդում արել,
Ինչո՞ւ յերդումըդ կոտրեցիր,
Յոթը տարի յես մարդ չառի,
Նստած՝ ճամբիդ մոտիկ արի,
Ե՞ս է խոսքը ձեր քաջերի»:
Դավիթն ասաց. «Սուլթան խաթուն,
Օձի պես ես մարդու խայթում.
Դե, պատրաստվիր, զենքերդ առ,
Յելնենք մեյդան, զարկվենք իրար,
Թող մեզ դատի կռիվն արդար»:
— Մի ժամ ինձի ժամանակ տուր,
Շորերս հագնեմ, կապեմ իմ թուր,
Հետ գամ,— ասաց,— ու մտավ տուն:
Դավիթը ձին տարավ կապեց Զմշկիկի դռան, ասաց.
— Ձին թող մնա եստեղ, Սուլթան,
Մի թիզ թող կա դիպված վրաս,
Յես կերթամ դետը, լողանամ,
Մինչև շորերդ հագնես ու գաս:

8.

Դավիթը հասավ գետն ափը, մտավ ջուրը՝ լողանալու,
Նայեց դեմի կանաչ սարին, մտքով, հոգով գնաց հեռու.

Մինչև Սուլթանը հետ կգար, նրա աղջիկը դողեմանց,
Պատից կախված նետ աղեղը թունավորեց, առավ գնաց,
Գնաց դեպի յեղեգնուտում պահ մտավ հանց վորսորդն անդուլ.
Յեվ յերբ Դավիթը ջրի հետ խաղ եր անում անհոգ, անփույթ.
Նետն արձակեց Դավթի մեջքին, հե՜յ վա՜խ, ծակեց մեջքը պարթեվ,
Սրտիցը դուրս տվեց անցավ, Սասնա արծիվն ընկավ անթեվ:
Ընկավ ու իր ցավից գոռաց, նրա մոտից ինչպես ցասում,
Յոթն առյուծի ձայն դուրս յեկավ, գնաց հասավ մինչև Սասուն:
Քեռի Թորոսն ամենից շուտ առավ Դավթի ձայնն ահագին,
Հոգին յեռաց, կանչեց ասաց. «Տղերք, յելեք, Դավթին զարկին»:
Քեռի Թորոսն ու Ոհանը, Խոր Մանուկն ու Խոր Գուսանը
Ժողովեցին, յեկան մեկից: Ալեկոծվեց վողջ Սասունը:

Ձենով Ոհանն յելավ գոռաց.
Դավիթ, քաջ կաց, Դավիթ, պինդ կաց,
Սասուն յեկավ քեզ ոգնության:
Ասաց, կանչեց, ձիերն հեծան, կրակի պես զարկին, թռան,
Յեկան հասան են ջրի մոտ, Դավիթն ենտեղ, դեպի ափին,
Փռվել հանգչում եր մեղմաբար հանց մայր մտնող գարնան արևին:

Թորոսն ասաց.— Տղա. Դավիթ,
Եդ ո՞վ եղպես զարկեց սրտիդ:
— Ա՜խ, չգիտեմ, ով զարկեց ինձ,
Նետը յեկավ են շամբուտից:

Յեղեգնուտը մտան նրանք ու ման յեկան ծայրից մինչ ծայր,
Գտան աղջիկն աղեղնավոր, աչքերը սև, դեմքը պայծառ,
Հանց փոթորկի պոկած մի ճյուղ ընկել եր իր մեջքի վրա,—
Յեվ Դավիթը գոռացել եր, ահից, վախից մեռել եր նա:
Նրա աչքերն նման եյին Սասնա Դավթի մեծ աչքերին,
Չմշկիկի աղջիկն եր դա՝ հայրասպան նետը ձեռին:
Յերբ Դավիթն իմացավ, վոր Չմշկիկի աղջիկն եր դա,



Ինչպես խորունկ հոգոց քաշեց, վոր գետինը շարժվեց, թնդաց,
Սրտի ուժերը հավաքեց, թափ առավ ու նստեց, ասաց.

«Է՜յ, փուչ աշխարհ, նամարդ աշխարհ,
Գետնին զարկիր ինձ՝ նետահար,
Աշխարհ-արար յես ման յեկա,
Վերջը կնկա նետից ընկա:

Ա՜խ, իմ ցեղը իմ անձիցն եր,
Իմ յերգումն եր ինձ անիծել,
Քեռի, դարդս, ա՜խ, շատ է մեծ,
Իմ զավակն ինձ սպանեց»:

9.

Յերբ իր տիրոջ մահն իմացավ, խելագարվեց Դավթի հուր ձին,
Կապը կտրեց, մտավ քաղաք, ջարդեց ամեն պատահածին
Ու սլացավ հասավ Սասուն, գնաց կանգնեց Դավթի դռան,
Խանդութ խաթունը դուրս յելավ, ձին խրխնջաց, նայեց նրան:

— Ես ի՞նչ սև եր յեկավ գլխիս,
Ձին յեկել է, տերը չկա,
Ջալալի, ո՞ւր թողիր Դավթիս,
Ա՜խ, յես ես ի՞նչ որի ընկա:
Խանդութն ասաց, գլխին տվեց, բարձրացրեց լաց, աղաղակ,
Զարկին զանգերը տագնապի, վոտքի յելավ Սասուն քաղաք...

10.

Թորոսն ասաց. «Աչքը ճամբին,
Մեզ է նայում Խանդութ խաթուն,
Արեք Դավթին կապենք թամբին,
Ձիարշավով գնանք մեր տուն,
Գուցե Խանդութը չիմանա,
Վոր մեռել է տերը Սասնա:

11.

Խանդութը խեղճ կանգնած կտրին՝ աչքերն արած լարված աղեղ՝
Նայում էր թե, ինչպես կգա իր Դավիթն ամենագեղ.
Տեսավ ջրից խաղալով են սասունցիները հետ դառնում,
Բայց Դավիթը անշարժ նստել, վոչ տալիս է և վոչ առնում:
Խանդութն ամեն բան հասկացավ ու լաց յեղավ կուց կուց արուն.

— Ով արժեր, յեկավ,
Ով չարժեր, յեկավ,
Իմ կանաչ-կտրիճ
Դավիթը չեկավ:

Ցռան Վերգոն կտրին կանգնած՝ ուրախություն կար յերեսին,
Առաջ յեկավ չողոմելով, եսպես ասաց Խանդութ հարսին.

— Մեռավ Դավիթ, մի՛ սեվցուր սիրտ,
Վերգոն անուշ լինի քեզի,
Կպակասի կտրիճ Դավիթ,
Քեզ երիկ-մարդ չի պակասի:

— Դավթի նման մարդը մեռնի,
Խանդութը դա քեզի՞ առնի,
Հը՛յ, հո՛ւ, հը՛յ, հո՛ւ:
Գնաց, չեկավ իմ թուխ մորուս,
Գլխիս մթնեց արեվ ու լույս:
Հը՛յ, հո՛ւ, հը՛յ, հո՛ւ:
Դավթից հետո չեմ դիմանա
Ես աշխարհում ել չեմ մնա,
Հը՛յ, հո՛ւ, հը՛յ, հո՛ւ:

Ասաց, յելավ բերդի գլուխ ու ցած նետվեց, հազա՛ր ափսոս,
Գլուխն առավ բարձր քարին, ծակեց, բացեց մի խորունկ փոս...



Էն փոսի մեջ սանդի տեղակ կոտ կորեկ են լցնում ծեծում,
Ծծերի տեղ հիմի յել դեռ յերկու աղբյուր է դուրս գցում,
Յոթ ճյուղ ծամի տեղն ել հիմի յերևում է հանց յոթ սև սյուն.
Ու հիմի յել էն սանդը կա, տեղը գիտի ամբողջ Սասուն:

12.

Ձիավորներն յեկան տեսան, վոր Խանդութն ել է մահացել,
Մուժ է պատել Սասնա բերդին ու մեկ դարդը յերկու դարձել,
Լաց ու կոծով առին բերին, յերկուսին ել պատանեցին,
Էն ահավոր վշտի դիմաց քարացան ու պապանձվեցին,
Ձենով Ոհանն առավ նրանց դագաղները, կապեց իրար,
Յերկինքն ամպեց, անձրև թափեց, լաց էր լինում ամբողջ աշխարհ:

Սասնա քաղքում ով կար չկար, ծծկերից մինչ ծերն էն վերջին,
Էն որն յեկել հավաքվել էր աղնանց-որդոց տան առաջին.
Զանգերն զարկին, թափորն, ինչպես քայլող անտառ, շարժվեց առաջ,
Սարից իջնող հեղեղի պես մեկից պոռթկաց լաց ու հառաչ,
Մրմունջ-յերգով քայլում եյին քառասուն տերտեր ու վարդապետ,
Նրանց հետքից հորձանքում էր ժողովուրդը հանց դարնան գետ,
Հաղթ թեվերին բարձր բռնած սեվ էր հագած յերկու դագաղ՝
Գնում եյին Դավթի ջահել ընկերները՝ գլուխը կախ:
Տարան նրանց Դավթի սիրած Ծովասարի մեծ կատարին
Յերկուսին ել իրար կողքի հերանց հողի ծոցը դրին,
Ամեն մեկը յեկավ մի ափ հող շաղ տվեց նրանց վրա:
Սարից ուրիշ մի սար բուսնեց, էն սարը կա մինչև հիմա,
Մեկ-մեկ յեկան, ծնկի իջան, գերեզմանը համբուրեցին,
Ու տուն դարձան կսկծալով, տխուր, տրտում՝ ձեռքը ծոցին:

13.

Լալիս եյին աղբյուր, առու, ծառ ու ծաղկունք և սար ու քար,
Յեվ յոթը որ, յոթը գիշեր սեվ սուգ կապեց Սասնա աշխարհ:

## ՎԵՐՋԵՐԳ

Գնա՛ց Դավիթը դյուցազուն,
Անդարձ գնաց, ափսո՛ս հազար,
Բայց իր հետքից թողեց անուն՝
Անմահ, ինչպես վեհ Ծովասար:

Սերունդներին ավանդ թողեց
Հերոսության զարնե-սպառ,
Դարերի դեմ յելավ, կանգնեց՝
Փառապանծ ու կաղնեհաստ:

Մեր կյանքի մեծ ճանապարհին
Ինչե՛ր ասես, չտեսանք մենք,
Ցեկան, անցան չարն ու բարին,
Այնքա՛ն, այնքա՛ն մեկքներ նենգ...

Բայց Դավիթը կա՛ ու կապրի՛,
Անմահ է նա, հանց ժողովուրդ,
Նրան կերգի մեր աշխարհի
Ամեն յերգիչ, ամեն սերունդ:

Գնա՛ց Դավիթը դյուցազուն,
Անդարձ գնաց, ափսո՛ս հազար,
Բայց իր հետքից թողեց անուն՝
Անմահ, ինչպես վեհ Ծովասար:

1939 թ.

Ցերեվան-Ծաղկաձոր



## ՈՒՂԵՆԻՇ

Սարի կատարից պոկվեց մի սև ամպ ու ընկավ յերկնի
ովկիանոսը յուրթ,
Յեվ տես, ի՛նչ խաղաղ, անխույթ, ինքնագոհ լողում է վորպես
մի հսկա ընձուղտ,
Բայց ահա հանկարծ մրրիկ բարձրացավ, ծեծեց, մտրակեց այդ
ամպ-ընձուղտին,
Կիսեց, կտրտեց ու հողմահալած բյուր բեկորները չաղ տվեց
չորս դին...
Անցան վայրկյաններ. նայիր սկզահեմ այդ Թափառական
վիթխարի ամպին—
Կորավ, չքացավ, ձուլվեց կապույտին, հետք կամ հիշատակ
չթողեց ճամբին...

Ընկավ բոցաշունչ հերոսը մարտում, մարեցին նրա աչքերը
խարույկ.
Բյուր հոգիներում, ցնցված սրտերում վշտից քարացավ մի
ովկիան արցունք:
Բայց նրա վրա, վորպես պանծալի հաղթական կամար,
վորպես հուշարձան,
Կռվող գնդերի դրոշակների հոծ անտառները յելան բարձրացան,

Յեվ դու, ո՛վ պոետ, այդ խիզախի պես կռվիր, մաքառիր, յեղիր
անվեհեր,
Ձգնիր, տառապիր, խոցիր ու խոցվիր, բայց միշտ յերազիր
բարձունքները վեհ:
Գրոհող գնդի առաջից գնա, հետ չմնաս դու, ո՛վ դրոշակիր,
Թանդիր ու կերտիր, այդ կորիճի պես մարտնչիր անվերջ,
մարտումն էլ ընկիր:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Խառն յերգեր


Եջ

Նախերգանք . . . 7
Երգ . . . 8
Երգ ազատության մասին . . . 10
Սրբազան ժամ . . . 12
Ժառանգություն . . . 14
Մաքառում . . . 16
Բնություն . . . 17
Թույնի սրվակ . . . 18
II–ին . . . 19
Պապն ու թոռը . . . 20
Ողաչու . . . 21
Տքերթ . . . 22
Խարույկի վրա . . . 23
Մեր ժողովուրդը . . . 24
Վողջույն . . . 25
Լենին . . . 27
Հավերժական հուր . . . 30
Արևի մոտ . . . 31
Հերոսների ուղին . . . 33
Սիրում եմ քեզ . . . 35
Հայրենիք . . . 37
Արև . . . 38
Հարց . . . 39
Հուշ . . . 41
Խոհ . . . 42
Կյանքի սերը . . . 43
Մայր . . . 44
Հասկեր . . . 45
Սպասում . . . 46
Լսիր ինձ . . . 47
Խոհ . . . 48
Մահ . . . 49
Բնություն . . . 50
Սիրտս . . . 51
Բանաստեղծի սեր . . . 52
Լուսին . . . 53
Կին . . . 54
Գինի . . . 55
Ջահելություն . . . 56
Ցնծության յերգ . . . 57
Սիրտ . . . 58
Ծովի սերը . . . 60
Երգ ծովի մասին . . . 63
Զրույց . . . 65
Դեհ, գնաք բարով . . . 67
Կիպարիս . . . 68
Ալեկոծ ծով, այս վայրկյանին . . . 69
Կրակ . . . 70
Թևավորը . . . 71
Ընկուզենի . . . 72
Որոր . . . 73
Երգ մանուկների մասին . . . 74
Հրաչիկն ու Ելմիրան . . . 75
Ոձն ու ձուկը . . . 77
Այյուծն ու մուկը . . . 79


### Տրիոլետներ


Խնդասիրտ, պոետ տղա . . . 82
Իմ կյանքը գիշեր եր մութ . . . 82
Մահից դու, դո՛ւ վախեցիր . . . 83
Վառվում ե հուրն իմ հոգու . . . 83
Երգեցեք, գարնան ջրեր . . . 84
Գարուն, քեզ շատ եմ սիրում . . . 84
Դու խնդուն, խիզախ յեղիր . . . 85

## Սոնետներ


Գեղջկուհին ճամբին ցած ընկավ հանկարծ . . . . . 86
Ձյունի փաթիլներ, ձմռան թիթեռներ . . . . . . 87
Այս որն էլ անցավ և էլ յետ չի գա . . . . . . 88


## Գազելներ


Մանկություն իմ քնքշագին, յես քեզ ինչպե՞ս մոռանամ . 89
Գարնան գալուստն ավետաբեր ծիծեռնակին հազար վողջույն 90
Վառ ամառ է, վառ ամառ, չառրվան իմ, չառրվան . . 91


## Տերցիններ


Այս գունագեղ վերջալույսին . . . . . . . . 92
Դու մի բլբուլ քաղցրաձայն . . . . . . . . 93
Խաղաղ ծովի ափին նստած . . . . . . . . 94


## Փոքրիկ յերգեր


Ջահել կրծքիս տակ կա վճիտ գետակ . . . . . 97
Յես դառնացել, շատ եմ լացել կյանքի բովում . . . 97
Անցյալում յես շատ եմ տառապել, թախծել . . . . 98
Իմ հայրենի սրնգահար դառնարածներ . . . . . 98
Դառնակսկիծ սև կարիքից ծնված հույզեր հոգետանջ . . 99
Կարող ես կատաղի վագրերը բանտարկել . . . . 99
Համայնական հասուն արտեր, դուք յերգեցեք . . . 100
Ասի՝ այդ ո՞ւր ես այդպես շտապում, լեռնային գետակ . 100
Մանկությունըս՝ ամպերից . . . . . . . 101
Արծիվ, ո՛, արծիվ, ինչո՞ւ յես այդպես չվարել . . 101
Հայրենասեր հոգուս հույզեր, իմ արծիվներ անկաշկանդ . 102
Ով ալեկոծ ովկիանոսի լեռնակուտակ կոհակներ . . . 102
Ինչքան տանջանք, ծանր խոնջանք տարել եմ յես . . 103
Ով իմ հույզեր ալեկոծ . . . . . . . . 103
Սիրելի մուսա, ինչո՞ւ յես կանգնել ու խոր մտորում . . 104
Իմ տառապալի, անշող անցյալի գիշերում մայլ . . 104
Ինչքան ցավեր կրեմ յես անձնական ցավից . . . . 105
Սիրում եմ քեզ, խարտյաշ կայծակ . . . . . 105
Սիրում եմ քեզ, ծովի հորձանք . . . . . . 106
Նշենիներ, մասրենիներ, դուք լոկ գարնանն եք ծաղկում . 106
Ալեկոծ ծով, մի՛ տրտնջա, հանդարտացիր . . . . 106


## Սիրելիներ


Ծքանչան . . . . . . . . . . 109
Պոետ . . . . . . . . . . 110
Դսեղցին . . . . . . . . . . 112
Նկարիչ . . . . . . . . . . 114
Քյամանչա . . . . . . . . . 117
Սրնգահար . . . . . . . . . 118
Սիրելի վարպետին . . . . . . . . 120
Տրտունջ . . . . . . . . . . 121
Ծաղկեփունջ . . . . . . . . . 122


## Դիմավորում


Այս որերի աչքերի մեջ արտացոլվող ապագա . . . 125
Լուսին, յես դեռ նայում եմ քեզ յերկրագնդից . . . 125
Վորմնադիր մարդ, այդպես զվարթ ի՞նչ ես կերտում այդ մարմարից . . . . . . . . . 126
Ցերե՛կ ամա յեր այստեղ, այսոր շենք է բազմահարկ . . 126
Հայրենիք իմ հոյակապ, հայրենիք իմ հաղթական . . 127
Վոսկի . . . . . . . . . . . 128
Հողու մոլախոտեր . . . . . . . . . 129
Կեղծիք . . . . . . . . . . 130
Ճեպընթացը . . . . . . . . . 131
Սևան . . . . . . . . . . 132
Ջիրուխլույի ապագան . . . . . . . . 134
Դու գալիս ես . . . . . . . . . 148


## Պոեմներ


Հերոսական մահ . . . . . . . . . 151
Գոտեմարտ . . . . . . . . . . 176
Սեփո . . . . . . . . . . 182
Քյոռօղլի . . . . . . . . . . 191
Լենին հսկան . . . . . . . . . 208
Խանդութ Խաթուն . . . . . . . . 221
Ուղենիշ . . . . . . . . . . 269

Պատ.-խմբագիր՝
Ա. Օ. Ղազարյան
Տեխ-խմբագիր՝
Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝
Ա. Արզաքանյան
Կոնտրոլ սրբագրիչ՝
Շ. Գարագաշ

Գլավլիտի լիազոր՝ Բ—1112 Հրատ. 4935.
Պատվեր 504. Տիրաժ 3000.
Հանձնված է արտադրության 14/I 1940 թ.
Ստորագրված է տպագրութ. 20/III 1910 թ.

Հայպետհրատի տպարան. Երևան, Լենինի 65

307

ՀՀ Ազգային գրադարան
NL0363131

53691